4



ԹԵՎԱՆ ԴԱՎԹՅԱՆ

# ՍՈՎՈՐԵՆՔ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

## ՄԻՋՆԱԽԱՂ

Երևան, 1995
«ՇԱՂԻԿ»

«Սովորենք շախմատ խաղալ» ձեռնարկի նախորդ (երրորդ) գիրքը նվիրված էր *վերջնախաղին*: Մենք սովորեցինք խաղարկել պարզագույն զինվորային, նավակային, թագուհիներով, թեթև ֆիգուրներով վերջնախաղեր ... ծանոթացանք տարբեր ֆիգուրների մենամարտերին ... փորձեցինք դասակարգել որոշ վերջնախաղեր և որոշակի եզրակացությունների հանգեցինք: Սովորեցինք լուծել խնդիրներ ու էտյուդներ, տեղեկություններ ստացանք դրանց ներկայացվող պահանջների մասին...

Այժմ, մեր ուսումնասիրություններն ամբողջականացնելու նպատակով, *սկզբնախաղին* դառնանք: Գրքում օգտագործված են մինչև 1992 թվականի օգոստոսը հրապարակված նյութեր: Սկզբնախաղերը լուսաբանվում են բովանդակալից պարտիաներով, որոնցում գրոհի և պաշտպանության ռազմավարական մտահղացումները համապատասխանում են հետազոտվող համակարգին, ընդ որում այդ պարտիաները չեն կրկնում տեսական վերլուծությունները, այլ լրացնում են դրանք: Այդ պարտիաները հնարավորություն են ընձեռում դատելու սկզբնախաղերի նախնական մեկնությունների մասին և պատկերացում կազմելու ոչ միայն ժամանակակից անվանի, այդ թվում և՝ հայ գրոսմայստերների ու վարպետների մասին, այլև՝ ծանոթանալու անցյալի այնպիսի հանճարեղ շախմատիստների ստեղծագործություններին, ինչպիսիք են՝ Ա.Անդերսենը, Փ.Մորֆին, Էմ.Լասկերը, Խ.-Ռ.Կապաբլանկան, Զ.Տարրաշը, Վ.Ստեյնիցը, Ա.Ալյոխինը և այլք: Պարտիաներում ծանոթագրությունները շատ սեղմ են տրված: Դրանք բացահայտում են միայն սկզբնախաղի և վերջնախաղի փոխադարձ կապը, հիմնական շարժառիթները և մարտավարական հնարքները:

*Առաջին իսկ քայլերի ընտրությունից կախված՝ սկզբնախաղն ընդունված է համարել բաց, կիսաբաց կամ փակ: Այս բաժանումը հնուց է գալիս և հաճախ տվյալ դիրքի ոգուն չի համապատասխանում: Օրինակ՝ Իսպանական պարտիայում, որը բաց սկզբնախաղ է համարվում, կարող է փակ դիրք ստացվել, իսկ Թագուհու գամբիտում, որը փակ սկզբնախաղ է, կարող են բաց գծերով հարուստ դիրքեր առաջանալ: Հիշի՛ր միայն, որ բաց են կոչվում այն սկզբնախաղերը, որոնք սկսվում են e2-e4 e7-e5 քայլերով, կիսաբաց՝ որտեղ, ի պատասխան սպիտակների e2-e4-ի, սևերն ընտրում են ցանկացած շարունակություն՝ բացի e7-e5-ից, իսկ փակ՝ այնպիսիները, որոնցում սպիտակները խաղն սկսում են ցանկացած քայլով՝ բացի e2-e4-ից:*

*Բազմադարյա փորձը հանգեցրել է սկզբնախաղային բազմաթիվ համակարգերի ստեղծմանը: Դրանք շախմատային տեսության մեջ «համակարգ», «գրոհ», «հակագրոհ», «պաշտպանություն», «գամբիտ», «տարբերակ» անվանումներով են ներկայանում: Օրինակ՝ միայն Իսպանական պարտիայում դու կհանդիպես «Յանիշի գամբիտ», «Մարշալի հակագրոհ», «Ստեյնիցի պաշտպանություն», «Չիգորինյան համակարգեր», «Փոխանակման տարբերակ» և էլի շատ պաշտպանությունների, տարբերակների ...*

*Նախապես ասեմ, որ գրքում բոլոր սկզբնախաղերը չէ, որ կգտնես: Վարպետության ձևավորման այս փուլում դրա կարիքը չկա էլ: Ուստի սկզբնախաղային տեսության մասին միայն որոշ (առայժմ միանգամայն բավարար) տեղեկություններ կստանաս:*

## ԲԱՑ ՍԿԶԲՆԱԽԱՂԵՐ

Այս սկզբնախաղերի ուսումնասիրությունն սկսենք *գամբիտներից*:

Գամբիտները լինում են *ընդունված* (երբ շախմատիստը, մրցակցի մտահղացումներին ընդառաջելով, ընդունում է զոհաբերված խաղաքարը) կամ *մերժված*: Պատահում են և *հակագամբիտներ*, երբ շախմատիստը, ի պատասխան առաջարկված գամբիտի, ինքն է դիմում զոհաբերության:

Պայքարը՝ գամբիտների հետևանքով առաջացած բաց դիրքերում, չափազանց լարված ու մարտական բնույթ է կրում: Այստեղ ժամանակի գործոնը վճռորոշ է, մեծանում է ամեն մի քայլի համար կրած պատասխանատվությունը:

Խորհուրդ կտայի, որ առանց վարանելու գամբիտներն սկզբնախաղային խաղացանկում ընդգրկես: Դրանք կհարստացնեն քո խաղը մարտավարական առատ մտահղացումներով և կնպաստեն կոմբինացիոն տեսողության զարգացմանը: Բացի այդ՝ դա քեզ կօգնի ձևավորելու բնավորությունդ, կսովորեցնի խաղը դինամիկ վարել ու

նյութական կորուստներից չվախենալ:

Միայն գամբիտներ խաղալով կարելի է հասկանալ, որ ակտիվ դիրքը կամ կոմբինացիոն հարվածի իրականացումը փոխհատուցում է զոհաբերված նյութը: Կոմբինացիոն «հոտառության» զարգացմանը նախ նպաստում են հենց այն սկզբնախաղերը, որտեղ մրցակիցների ուժերը դեռևս վաղ փուլում միմյանց են բախվում, այսինքն՝ արդեն խաղասկզբում մարտավարական խաղ է ծավալվում:

Երբեմն այնպես է թվում, թե այս կամ այն սկզբնախաղը դիրքային կամ մարտավարական առումով իրեն սպառել է: Եվ սովորական միջոցներով խաղը թարմացնելու ու աշխուժացնելու բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Այդ պատճառով էլ նման համակարգը վերջնականապես հետազոտված են համարում և դրան սպառիչ գնահատական տալիս: Սակայն տեսաբաններն այդ գնահատականի հետ ոչ միշտ են համաձայնում՝ երբեմն հաջողությամբ համակարգին նոր կյանք շնորհել, այլ կերպ ասած՝ «պայթեցնել» այն՝ արմատապես փոխելով ընդունված գնահատականը: Այսպիսի կոմբինացիոն «պայթեցման» նպատակը զարգացումով առաջ անցնելն է: Իսկ նման առավելություն ձեռք բերելու միջոցներից մեկն էլ գամբիտների կիրառումն է:

Գամբիտային համակարգերը գործնականում կիրառել ու կիրառում են բազմաթիվ հայտնի շախմատիստներ:

## ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. d2-d4 e5:d4
3. c2-c3 d4:c3
4. Փf1-c4 c3:b2

Եթե 4. ... Ձf6, ապա 5. Ձ:c3 Ձc6 6. Ձf3 շարունակությունը Հյորինգի կամ Շոտլանդական գամբիտի կհանգեցնի (*տե՛ս Հյորինգի և Շոտլանդական գամբիտները*):

5. Փc1:b2 (դ.1) ...

1



Այս գամբիտի հայրենիքը Դանիան է: Հետագայում դրա տեսությունը մշակել և կատարելագործել են Հյուսիսային Եվրոպայի շախմատիստները: Այստեղից էլ անվանումը՝ *Հյուսիսային գամբիտ*:

Սպիտակները, խույս տալով 3. Թ:d4 քայլի հետևանքով առաջացող ժամանակի կորստից (*տե՛ս Կենտրոնական սկզբնախաղը*), զինվորների զոհաբերության գնով ցանկանում են զարգացումով առաջ ընկնել: Սևերը կարող էին երկրորդ զինվորի զոհաբերությունը չընդունել (*տե՛ս Կենտրոնական գամբիտը*): Բայց գծերի առկայությունը



և զարգացած զույգ փիղը սպիտակներին վտանգավոր գրոհ են խոստանում:

5. ... Փf8-b4+

Ամենահաջող շարունակությունն այստեղ 5. ... d5-ն է համարվում, որից հետո 6. Փ:d5 (հաջող չէ 6. ed -ն՝ 6. ... Ձf6 7. Ձc3 Փd6 8. Ձf3 0-0 9. 0-0 Փg4 10. Թd4 Ձbd7, և սևերն ամուր դիրքում կպահպանեն գամբիտային զինվորը) 6. ... Ձf6 7. Փ:f7+ Ա:f7 8. Թ:d8 Փb4+ 9. Թd2 Փ:d2+ 10 Ձ:d2, և սպիտակները զոհաբերած երկու զինվորն էլ հետ են շահում, ինչից հետո մոտավորապես հավասար հնարավորություններով դիրք է ստացվում:

6. Ձb1-c3 ...

Կարելի էր 6. Ձd2, և, եթե 6. ... Թg5?, ապա 7. Ձgf3! Թ:g2 8. Նg1 Փ:d2+ 9. Աe2! Թh3 10. Թ:d2 Ձf6 11. Փ:f7+ Աd8 12. Ն:g7 Ձ:e4 13. Թg5+! Ձ:g5 14. Փf6X:

6. ... Ձg8-f6
7. Ձg1-e2! ...

Լինդեն-Մաչուսկի (1864թ.) պարտիայում սևերն ագահաբար վերցրին և երրորդ զինվորը՝

7. ... Ձ:e4?

Ճիշտ կլիներ 7. ... Ձc6-ը:

Ահա՛ թե ինչ վախճան ունեցավ այս պարտիան.

8. 0-0 Ձ:c3
9. Ձ:c3 Փ:c3
10. Փ:c3 Թg5

Իհարկե, սևերը փոխատեղում կատարել չէին կարող՝ 10. ... 0-0-ին կհաջորդեր 11. Թg4 g6 12. Թd4, և մատից փրկվելը հնարավոր չէր լինի:

11. Նe1+ Աd8 (դ.2)

Պարտության էր հանգեցնում և 11 ...Աf8-ը՝ 12. Փb4+ d6 13. Փ:d6+!:

2



Այժմ սևերն երեք զինվորի առավելություն ունեն, սակայն սպառնող գրոհի դեմ ընդունելի պաշտպանություն չկա:

12. f4! Թ:f4

Չէր փրկում և 12. ... Թg6-ը՝ 13. Թe2 Ձc6 14. Փd5, ինչպես նաև 12. ... Թc5+-ը՝ 13. Աh1 Թ:c4 14. Փ:g7:

13. Փ:g7 Նg8
14. Թg4! Թd6
15. Փf6+

Սևերը հանձնվեցին:

Մարյասին - Էպշտեյն
Բոբրույսկ, 1967թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. d2-d4 e5:d4
4. c2-c3 d4:c3
5. Փf1-c4 c3:b2
6. Փc1:b2 d7-d5
7. Փc4:d5 Ձg8-f6
8. 0-0 Փf8-c7
9. Թd1-b3 0-0
10. Նf1-d1 Թd8-c8?

Անհրաժեշտ էր 10. ... Ձ:d5 խաղալ՝ պաշտպանության լավ հնարավորություններով:

11. Ձb1-a3 a7-a6
12. Նa1-c1 Փe7-d8
13. Ձa3-c4 Ձc6-e7 (դ.3)

3



13. ... Ձ:d5-ին կհաջորդեր 14. ed Ձb8 15. Փa3 Փe7 16. Նe1, կամ 14. ... Ձe7 15. d6 Ձc6 16. dc Փ:c7 17. Փa3 Ձe7 18. Նe1, և սևերն անպաշտպան են. օրինակ՝ 18.... Փe6 19. Ձg5:

14. Փd5:f7+! ...

Կոմբինացիոն գեղեցիկ հարված: Փիղը կարելի է վերցնել երեք եղանակով. սակայն, միևնույն է, բոլորն էլ պարտության էին հանգեցնելու:

14. ... Նf8:f7

14. ...Ա:f7? -ին կհաջորդեր 15. Ձce5X, իսկ 14. ... Թ:f7-ին՝ 15. Ձg5!:

15. Ձc4-e5 Ձe7-c6
16. Նe1:c6 b7:c6
17. Ձf3-g5! ...

Սևերը ծուղակ էին նախապատրաստել. 17. Ն:d8-ին կհաջորդեր 17. ...Թ:d8 18. Ձ:f7 Փe6!՝ հաղթանակով:

17. ... Փd8-e7
18. Ձe5:f7 Աg8-f8

Սպառնում էր 19. Ձh6++ Աf8 20. Թg8+! Ձ:g8 21. Ձ:h7X:

19. e4-e5 Ձf6-d5
20. Թb3-f3 Աf8-g8
21. Նd1:d5! Փc8-g4

Պարտություն էր հանգեցնում և 21. ...cd-ն՝ 22. Թ:d5 Փ:g5 23. Ձ:g5+ Փe6 24. Ձ:e6!, բայց ո՛չ 24. Թ:e6+? Թ:e6 25. Ձ:e6 Նb8!:

22. Թf3-e4 Փe7:g5
23. Ձf7:g5 Թe8-h5
24. Նd5-d4

Սևերը հանձնվեցին:

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. d2-d4 e5:d4
3. c2-c3 (դ.4) ...

4



Գամբիտն այս հնուց է հայտնի: XIX դարում այն լայն կիրառություն էր ստացել:

Ինչպես *Հյուսիսային գամբիտում* այստեղ էլ սպիտակները զինվորի կոհաբերությամբ ձգտում են զարգացումով առաջ ընկնել: Սևերը կարող են ընդունել կոհաբերությունը՝ խաղալով 3. ... d4:c3, ինչպես նաև մերժել՝ 3. ... Թd8-e7 կամ 3. ... d7-d5:

Դիտարկե՛նք հերթականությամբ.



Ա.

3. ... d4:c3
4. Ձb1:c3 ...

Ավելի հաջող է, քան 4. Փc4-ը՝ 4. ... cb 5. Փ:b2, և դիրքը *Հյուսիսային գամբիտին* կհանգի:

4. ... Ձb8-c6
5. Փf1-c4 d7-d6

Հնարավոր էր և 5. ... Փb4 6. Ձf3 Ձf6 7. 0-0 Փ:c3 8. bc d6՝ *Շտոլյանդական գամբիտին* անցնելով:

6. Ձg1-f3 Ձg8-f6

Եվ զինվորի դիմաց սպիտակները նախաձեռնություն ստացան:

Բ.

3. ... Թd8-e7
4. c3:d4 ...

Անհաջող էր 4. Փd3-ը՝ կարող էր հաջորդել 4. ... d5 5. Թe2 de 6. Փ:e4 Ձf6!, ինչպես նաև 4. Ձf3-ը՝ 4. ... Թ:e4+ 5. Աd2 Ձc6 6. Փd3 Թd5 7. Նe1+ Փe7: Շպիլման-Ռետի (Բադեն-Բադեն, 1914թ.) պարտիայում սպիտակները 4. Թe2 խաղացին, որին հաջորդեց 4. ... Ձf6 5. Ձd2 d5 6. e5 d3!, և սևերը նախաձեռնություն ստացան: Մոտավորապես հավասար հնարավորություններով խաղի է հանգեցնում 4. Թ:d4-ը՝ 4. ... Ձc6 5. Թe3 Ձf6 6. Փd3 d5 (Սերգիևսկի-Նեժմետդինով, 1960թ.):

4. ... Թe7:e4+
5. Փc1-e3 Փf8-b4+
6. Ձb1-c3 Ձg8-f6
7. Ձg1-f3 Ձf6-d5
8. Թd1-d2 Ձd5:e3
9. f2:e3 Թe4-e7
10. Փf1-d3 ...

Փոխատեղումից հետո (11. 0-0) սպիտակները կոհաբերած զինվորի դիմաց փոխհատուցում կստանան:

Գ.

3. ... d7-d5

Ամենահաջող պատասխանն է համարվում

4. e4:d5 Թd8:d5

4. ... Ձf6-ը սպիտակներին առավելություն էր ընձեռում. օրինակ՝ 5. Փb5+! c6 (կամ 5. ... Փd7 6. Փc4 dc 7. Ձ:c3) 6. dc bc 7. Փc4 Փc5 8. Թe2+! Թe7 9. Թ:e7+ Ա:e7 10. cd Փ:d4 11. Ձf3:

5. c3:d4 Ձb8-c6
6. Ձg1-f3 Փc8-g4
7. Փf1-e2 ...

Եթե 7. Ձc3, ապա 7. ... Փ:f3!:

7. ... Ձg8-f6
8. Ձb1-c3 Թd5-a5՝

մոտավորապես հավասար հնարավորություններով:

Գրիգորև - Բարլիմանսկի
Սարատով, 1890թ.

1. e2-e4 e7-e5
2. d2-d4 e5:d4
3. c2-c3 Թd8-f6?!
4. c3:d4 d7-d6
5. Ձb1-c3 c7-c6
6. Ձg1-f3 Փc8-g4
7. Փf1-e2 Փg4:f3
8. Փe2:f3 Փf8-e7
9. 0-0 Ձg8-h6
10. e4-e5 d6:e5
11. d4:e5 Թf6-e6

11. ... Թ:e5-ի դեպքում սպիտակներն անկասելի գրոհի հնարավորություն կստանային:

12. Ձc3-d5! (դ.5) ...

Միանգամայն ճիշտ որոշում: Զոհաբերությունը փութացված տարբերակում սպիտակներին հաղթանակ է բերում:

5



12. ... c6:d5
13. Փf3:d5 Թe6-d7
14. Փc1:h6 g7:h6
15. Թd1-f3 Ձb8-c6
16. Թf3:f7+ Աe8-d8
17. Փd5:c6 Թd7:c6
18. Նf1-d1+ Աd8-c8
19. Թf7:e7 Աc8-b8

Եթե 19. ... Նe8, ապա 20. Թg7, կամ 20. Թ:h7, և սևերը, միևնույն է, չէին փրկվի:

20. Նa1-c1 Թc6-b6
21. Նd1-d6 Թb6-a5
22. b2-b4

Սևերը հանձնվեցին:

## ՀՅՈՒՐԻՆԳԻ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. d2-d4 e5:d4
4. c2-c3 (դ.6) ...

Այս գամբիտը XIX դարի կեսերին գերմանացի վարպետ Կ.Հյուրինգն է առաջարկել:

6



Սպիտակները զոհաբերության միջոցով ձգտում են զարգացումով առաջ ընկնել, սևերն էլ, իրենց հերթին, աշխատում են առիթը բաց չթողնել և, վերադարձնելով գամբիտային զինվորը, ակտիվ խաղ ծավալել:

Հիմնական շարունակություններն են.

Ա.

4. ... d7-d5
5. e4:d5 Թd8:d5
6. c3:d4 Ձg8-f6
7. Ձb1-c3 Փf8-b4
8. Փf1-e2 Ձf6-e4

Հանդիպում է նաև 8. ...0-0 9. 0-0 Թd8 10. Փg5 շարունակությունը:

9. Փc1-d2 Փb4:c3
10. b2:c3 Ձe4:d2
11. Թd1:d2 0-0
12. 0-0 Թd5-d6

Դիրքը հավասար է:

Բ.

4. ... d4-d3
5. Փf1:d3 Փf8-c5
6. 0-0 d7-d6
7. Ձb1-d2 a7-a5
8. Նf1-e1 Ձg8-e7
9. Ձd2-f1 0-0
10. Փc1-e3 Փc5:e3



11. Ձf1:e3 Ձe7-g6՝ հավասար հնարավորություններով:

Գ.

4. ... d4:c3
5. Ձb1:c3 Փf8-b4
6. Փf1-c4 d7-d6

Եթե 6. ...Ձf6, ապա 7. 0-0 Փ:c3 8. bc d6 9. e5! de 10. Ձg5 Փe6 11. Փ:e6 fe 12. Թb3՝ սպիտակների առավելությամբ:

7. Թd1-b3 Փb4:c3+
8. b2:c3 Թd8-d7

Բոլորովին պարզ չէր լինի դիրքը 8. ... Թe7 9. 0-0 Ձf6 10. Փg5-ից հետո:

9. 0-0 Ձc6-a5
10. Թb3-b4 Ձa5:c4
11. Թb4:c4 ...

Սևերի հնարավորությունները փոքր-ինչ նախընտրելի են:

## ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. d2-d4 e5:d4
4. Փf1-c4 (դ.7) ...

7



Գամբիտն իր անվանումն ստացել 1824-26 թվականներին Էդինբուրգ-Լոնդոն քաղաքների միջև անցկացված նամակագրությամբ մրցամարտից հետո:

Զինվորը հետ շահելուն ժամանակ չվատնելով՝ սպիտակներն ուժերի արագ զարգացման են ձգտում:

4. ... Փf8-c5

Հաջող չէր 4. ... Փb4+-ը, քանի որ 5. c3 dc 6. 0-0! cb 7. Փ:b2, կամ 6. ... d6 7. a3 Փa5 8. b4 Փb6 9. Թb3, և 10. Ձ:c3-ից հետո սպիտակները վտանգավոր գրոհի հնարավորություն կստանային: Սակայն սևերը 4. ... Ձf6 քայլով կարող էին *Երկու ձիերի պաշտպանության* անցնել (*տե՛ս Երկու ձիերի պաշտպանությունը*):

5. c2-c3 ...

Հնարավոր էր և 5. Ձg5 Ձh6 6. Ձ:f7 Ձ:f7 7. Փ:f7+ Ա:f7 8. Թh5+ g6 9. Թ:c5 d5!: Վերջին քայլը սևերին առավելություն է տալիս. օրինակ՝ 10. Թ:d5+ Թ:d5 11. ed Նe8+ 12. Աd1 Ձb4 13. Ձd2 Ձ:d5 14. Ձb3 Փf5, և այլն:

5. ... d4-d3.

Եթե 5. ... dc, ապա 6. Փ:f7+ Ա:f7 7. Թd5+ Աf8 8. Թ:c5+ Թe7, որից հետո 9. Թ:c3! քայլով սպիտակները նորից զինվոր կզոհաբերեին՝ բավարար փոխհատուցում ստանալով:

6. 0-0 d7-d6
7. b2-b4 Փc5-b6
8. a2-a4 a7-a6
9. a4-a5 Փb6-a7
10. Փc4-b3 ...

Այժմ 10. ... Թf6-ին կհաջորդի 11. b5! ab 12. a6! ba 13. Փd5 Ձge7 14. Փg5!: Սևերին չի փրկում նաև 13. ... Փb7-ը՝ 14. Ն:a6! Փ:f2+ 15. Ն:f2 Ն:a6 16. Ձg5!:

Միք - Մորֆի
Մոբիլ, 1855թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. d2-d4 e5:d4
4. Փf1-c4 Փf8-c5
5. Ձf3-g5 Ձg8-h6
6. Ձg5:f7 Ձh6:f7
7. Փc4:f7+ Աe8:f7
8. Թd1-h5+ g7-g6
9. Թh5:c5 d7-d6
10. Թc5-b5 Նh8-e8 (դ.8)

8



11. Թb5-b3+? ...

Քայլի կորուստ է: Անհրաժեշտ էր փոխատեղում կատարել: Այժմ արդեն սևերը, նախաձեռնություն ստանձնելով, գրոհ են սկսում:

11. ... d6-d5
12. f2-f3 Ձc6-a5
13. Թb3-d3 d5:e4
14. f3:e4 Թd8-h4+
15. g2-g3 Նe8:e4+
16. Աe1-f2 Թh4-e7
17. Ձb1-d2 ...

Հիմա մի շարք պարզ քայլեր են հաջորդում, որոնց նպատակը սպիտակ թագուհուն e2 դաշտը պաշտպանելու հնարավորությունից զրկելն է:

17. ... Նe4-e3!
18. Թd3-b5 c7-c6
19. Թb5-f1 Փc8-h3
20. Թf1-d1 Նa8-f8!

Սևերը գրոհի բովը ևս մի ֆիգուր են նետում:

21. Ձd2-f3 Աf7-e8!

Սպիտակները հանձնվեցին:

## ԷՎԱՆՍԻ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Փf8-c5
4. b2-b4 (դ.9) ...

9



Գամբիտն իր հիմնադրի՝ անգլիացի շախմատիստ Ու.Էվանսի անունով է կոչվում: Այն առաջին անգամ 1824 թվականին էր փորձարկվել և XIX դարում լայն կիրառություն ստացել:

Զոհաբերության հիմնական նպատակը վինվորային ուժեղ կենտրոն ստանալն է: Սևերի համար ամենահաջող պաշտպանությունը գամբիտային վինվորը ժամանակին վերադարձնելն է:

4. ... Փc5:b4

4. ... Ձ:b4 5. c3! (եթե 5. Ձ:e5?, ապա 5. ... Թf6!) 5. ... Ձc6 շարունակությունը քայլերի հերթականության տեղափոխությամբ 4. ... Փ:b4 5. c3 Փc5 տարբերակին կհանգեցներ:

Սևերի համար հաջող չէր 4. ... d5 հակագամբիտը. 5. ed Ձ:b4 6. 0-0 Ձf6 7. Ձ:e5 Ձb:d5 8. d4 Փb6 9. Փg5 c6 10. Ձd2, և սպիտակներն ավելի հարմար են կանգնած:

Բարդ (բայց սպիտակների առավելությամբ) պայքար կծավալվեր *Էվանսի մերժված գամբիտում.* 4. ... Փb6 5. a4 a6 6. Ձc3!: Այս քայլով սկսվում է *Սոկոլսկու հարձակումը*, որը սևերի համար բավականին անախորժ է: Նրանք ստիպված են ընտրություն կատարելու հետևյալ շարունակությունների միջև. 6. ... d6 7. Ձd5 Փa7 8. d3 h6 9. Փe3!՝ սպիտակները դիրքային առավելություն ունեն, և 6. ... Ձf6 7. Ձd5 Ձ:d5 8. ed e4 9. dc ef 10. Թ:f3 Թe7+ 11. Աd1 dc 12. Նe1 Փe6 13. Փb2՝ սպիտակների հնարավորությունները նույնպես նախընտրելի են:

5. c2-c3 ...

Այստեղ երկու հիմնական շարունակություն կդիտարկենք՝ 5. ... Փb4-c5, և 5. ... Փb4-a5:

Ա.

5. ... Փb4-c5
6. d2-d4 e5:d4
7. 0-0 ...

*Էվանսի գամբիտի*, այսպես կոչված, *դասական* շարունակությունն է, սակայն թույլ չէր նաև 7. cd Փb4+ 8. Աf1-ը, որի դեպքում փոխատեղումից զրկվելը և վինվորի կորուստը փոխհատուցվում էր կենտրոնի գրավմամբ և գրոհի հնարավորություններով:

7. ... d7-d6
8. c3:d4 Փc5-b6 (դ.10)

Այժմ *Էվանսի գամբիտի «նորմալ դիրքը»* ստացվեց:

10



9. Ձb1-c3 Փc8-g4
10. Փc4-b5 Աe8-f8!
11. Փc1-e3 Ձg8-e7
12. a2-a4 a7-a5
13. Փb5-c4 Փg4-h5
14. Նa1-c1! ...

Անգլիացի վարպետ Բ.Քաֆերթիի առաջարկած այս քայլը նախաձեռնությունը պահպանելու հնարավորություն է ընձեռում:

Բ.

5. ... Փb4-a5

Ավելի ճկուն է, քան՝ 5. ... Փc5-ը. սակայն փղի դիրքն a5 դաշտում իր բացասական կողմն ունի. բացառված չէ, որ սպիտակները Թd1-a4 քայլով անհանգստացնեն նրան:

6. d2-d4 d7-d6
7. Թd1-b3 ...

Շարունակելով 7. de de 8. Թ:d8+ Ձ:d8 9. Ձ:e5 Փe6՝ սպիտակները հետ կբերեին վինվորը, սակայն կկիջեին նախաձեռնությունը:

7. ... Թd8-d7!
8. d4:e5 d6:e5
9. 0-0 ...

Ուշադրության էր արժանի 9. Фa3 Фb6 10. Фb5-ը:

9. ... Фa5-b6
10. Նf1-d1 ...

Սոկոլսկու գեղեցիկ տարբերակը՝ 10. Фa3 Ձa5 11. Ձ:e5 Ձ:b3 12. ab, հերքել է Պ.Կերեսը. 12. ... Թe6! 13. Ф:e6 Ф:e6՝ հավասար հնարավորություններով:

10. ... Թd7-e7
11. a2-a4! Ձg8-h6

Պարտության էր հանգեցնում 11. ... Ձa5?-ը՝ 12. Ф:f7+ Թ:f7 13. Նd8+! Սe7 14. Фg5+, և այլն:

12. a4-a5! Фb6:a5

12. ... Фc5-ի դեպքում շատ հաջող կլիներ 13. a6-ը:

13. Фc1-a3 Թe7-f6
14. Фc4-b5 Фc8-d7
15. c3-c4 ...

Զինվորների փոխարկերության հաշվին՝ սպիտակները գրոհային գերազանց դիրք ստացան:

Անդերսեն - Ցուկերտորթ
Բեռլին, 1858թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Фf1-c4 Фf8-c5
4. b2-b4 Фc5:b4
5. c2-c3 Фb4-c5
6. 0-0 d7-d6
7. d2-d4 e5:d4
8. c3:d4 Фc5-b6
9. d4-d5 Ձc6-a5
10. Фc1-b2 Ձg8-e7
11. Фc4-d3 0-0
12. Ձb1-c3 Ձe7-g6
13. Ձc3-e2 ...

Ավարտելով զարգացումը՝ սպիտակներն ուժերը արքայական թև են տեղափոխում՝ մրցակցի արքայի դեմ գրոհ նախապատրաստելով:

13. ... c7-c5!

Սկսվում է ոչ միայն թագուհու թևի զինվորների առաջխաղացումը, ինչը սևերի հիմնական հակահարվածն է ապահովում, այլև պատրաստվում է ձիու մուտքը d4, որտեղից այն պետք է e6 դաշտը պաշտպանի՝ f7-f6 պարտադիր քայլից հետո:

14. Նa1-c1 Նa8-b8
15. Թd1-d2 f7-f6
16. Սg1-h1 Фb6-c7

16. ... Ձe5-ին կարող էր հաջորդել 17. Ձ:e5 fe 18. f4, և սպիտակների գրոհը ծավալում կստանար:

17. Ձe2-g3 b7-b5
18. Ձg3-f5 b5-b4?

Այժմ սև զինվորները կորցնում են իրենց ուժը: Անհրաժեշտ էր 18. ... c4 խաղալ, և 19.Фb1 b4-ից հետո սևերը լիարժեք հակախաղ կստանային:

19. Նf1-g1 Фc7-b6

Սևերը նախօրոք պաշտպանում են c5 զինվորը, որպեսզի Ձg6-e5-ին հաջորդող հնարավոր փոխանակությունը d զինվորով կատարեն:

20. g2-g4 Ձg6-e5
21. Фb2:e5 d6:e5

21. ... fe-ին կհետևեր 22. Ձg5, և ապա՝ Ձe6:

22. Նg1-g3 Նf8-f7
23. g4-g5! (դ.11) ...

11





Բավական համարձակ և հեռուն տանող զինվորի փոխաբերություն է, եթե հաշվի առնենք, որ բացվում է h1-a8 անկյունագիծը, որտեղ արքան է գտնվում:

23. ... Фc8:f5
24. e4:f5 Թd8:d5
25. g5:f6 ...

Սա՛ էր կոմբինացիայի նպատակը, քանի որ չի կարելի 25. ... Ն:f6՝ 26. Фc4!-ի պատճառով:

25. ... Նb8-d8
26. Նc1-g1! Սg8-h8

26. ... Թ:d3-ին կհաջորդեր 27. Թh6!:

27. f6:g7+ Սh8-g8

Եթե 27. ... Ն:g7, ապա 28. Ն:g7 Թ:f3+ 29. Ն1g2, և սևերը Թh6-ից չէին պաշտպանվի. օրինակ՝ 29. ... Թf4 30. f6!:

28. Թd2-h6 Թd5-d6

Եթե 28. ... Թ:d3, ապա 29. Թ:h7+!:

Սակայն այժմ էլ սևերին մատից խուսափել չի հաջողվում:

29. Թh6:h7+! Սg8:h7
30. f5-f6+ Սh7-g8
31. Фd3-h7+!Սg8:h7
32. Նg3-h3+ Սh7-g8
33. Նh3-h8X

## ԱՐՔԱՅԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 (դ.12) ...

12



Այս գամբիտն ավելի քան չորս հարյուր տարվա պատմություն ունի և մինչ այժմ թարմությունն ու հմայքը չի կորցրել: Այն շատ բարդ ու հետաքրքիր խաղի է հանգեցնում:

Սպիտակները ձգտում են զինվորը e5-ից շեղելու և d2-d4 առաջխաղացմամբ զինվորային ուժեղ կենտրոն ստանալու (d4, e4): Եթե սևերը ճիշտ չպաշտպանվեն, ապա սպիտակներն արքայական թևում անկասելի գրոհ կձեռնարկեն:

*Արքայական ընդունված գամբիտը* լինում է՝ *ձիու*, երբ սպիտակները 3. Ձg1-f3 են խաղում, և *փղի*՝ 3. Фf1-c4:

Գամբիտը *մերժել* սևերը կարող են 2. ... Фf8-c5-ի, կամ 2. ... d7-d5-ի միջոցով:

## ՁԻՈՒ ԳԱՄԲԻՏ

2. ... e5:f4
3. Ձg1-f3 d7-d5!

Հնում այս դիրքում սևերը պաշտպանում էին զինվորը՝ խաղալով 3. ... g5, և 4. Фc4 g4-ից հետո բարդություններով լի խաղ էր ծավալվում:

Պաշտպանության մեկ այլ եղանակ էլ արքայական թևի ֆիգուրների արագ զարգացումն էր համարվում. 3. ... Фe7 4. Фc4 Ձf6! (բայց ոչ՛ 4. ... Фh4+? 5. Սf1!, և h4-ում փիղը կխանգարի ֆիգուրների հետագա զարգացմանը) 5. e5 Ձg4 6. 0-0 Ձc6 7. d4 d5 8. ed Ф:d6՝ սևերը հարմար խաղ ունեն:

Հետաքրքիր է և հետևյալ տարբերակը՝ 3. ... Ձf6 4. e5 Ձh5: Ժամանակին գրումայստեր

Պ.Կերեսը կիրառեց 5. Թe2 քայլը և մի շարք տպավորիչ հաղթանակներ տոնեց: Կոբլենց-Զագորյանսկի (Վիլնյուս, 1946թ.) պարտիայում սևերը 5. Թe2-ին միանգամայն բնական թվացող շարունակություն ընտրեցին՝ 5. ... g6, և 6. d4-ին պատասխանեցին 6. ... Фg7? (ճիշտ կլիներ 6. ... Фe7-ը), որը կոպիտ սխալ դուրս եկավ՝ 7. g4!: Ընդամենը 7 քայլ է կատարված, սակայն սևերի դիրքն արդեն անհուսալի է. նրանք ֆիգուր են կորցնում, այն էլ՝ առանց որևէ փոխհատուցման. 7. ... fg-ին կհաջորդի 8. Фg5! f6 9. ef+ Աf7 10.fg:

Աշխարհի չեմպիոն Ա.Ալյոխինն առաջինն էր, ով այս տարբերակում սևերի ճիշտ պաշտպանության պլանը ցույց տվեց: Կերես-Ալյոխին (Զալցբուրգ, 1943թ.). 5. Թe2 Фe7 6. d4 0-0 7. g4 fg 8. Զc3 d5 9. Фd2 Զc6 10. 0-0-0 Фg4 11. Фe3 f6. սևերը հարմար դիրք ստացան, որն ի վերջո Ալյոխինը հաղթանակի հասցրեց:

4. e4:d5 Զg8-f6

Թույլ էր 4. ... Թ:d5-ը՝ 5. Զc3-ի պատճառով, և եթե 5. ... Թe6+, ապա 6. Աf2!, այնուհետև 7. Фb5+, և 8. Նe1:

5. Фf1-b5+ ...

5. c4-ին կհաջորդեր 5. ... c6.6. dc Զ:c6 7. d4 Фb4+ 8. Զc3 0-0՝ մոտավորապես հավասար հնարավորություններով:

5. ... c7-c6
6.d5:c6 Զb8:c6
7. d2-d4 Фf8-d6՝

սուր խաղով: Պարտիան կարող է այսպիսի ընթացք ստանալ. 8.Թd1-e2+ Фc8-e6 9.Զf3-g5! 0-0 10. Զg5:e6 f7:e6 11.Фb5:c6 b7:c6 12.0-0! Թd8-c7 13.Թe2:e6+ Աg8-h8, և սևերը վինվորի դիմաց նախաձեռնություն կստանան:

## ՓՂԻ ԳԱՄԲԻՏ

2. ... e5:f4
3. Фf1-c4 d7-d5

Թույլ էր 3. ... Թh4+-ը: Թեև սպիտակները փոխատեղում կատարելու հնարավորությունից կզրկվեին, այնուամենայնիվ 4. Աf1 g5 5. Զc3 Զf6 6. Զf3 քայլերից հետո սև թագուհին հետ կշպրտվեր, և սպիտակները ոչ միայն զարգացումով կգերազանցեին, այլև կենտրոնում առավելության կհասնեին:

4. Фc4:d5 Զg8-f6
5. Զb1-c3 Фf8-b4
6. Զg1-e2 ...

Հնարավոր էր և 6. Զf3 Ф:c3 7. dc c6 8. Фc4 Թ:d1+ 9. Ա:d1 0-0 10. Ф:f4 Զ:e4 11. Նe1՝ հավասար խաղով:

6. ... Фb4:c3
7. b2:c3 Զf6:d5
8. e4:d5 Թd8-h4+
9. Աe1-f1 Фc8-g4՝

մոտավորապես հավասար հնարավորություններով: Օրինակ՝ կարող է հետևել. 10. Թe1 Թ:e1+ 11. Ա:e1 f3 12. gf Ф:f3 13. Նg1 Ф:d5 14. Ն:g7 Զc6 15. Զf4 0-0-0 16. Աf2, և այլն:

## ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵՐԺՎԱԾ ԳԱՄԲԻՏ

2. ... Фf8-c5
3. Զg1-f3 ...

Սխալ էր 3. fe-ն՝ 3. ... Թh4+ 4. g3 Թ:e4+՝ շահելով նավակը:

3. ... d7-d6
4. Фf1-c4 Զb8-c6



5. d2-d3 Զg8-f6
6. Զb1-c3 Фc8-g4

Սպիտակների դիրքը փոքրինչ ավելի ակտիվ է: Այստեղ ամենահաջող շարունակությունը 7. Զa4-ն է համարվում՝ ձգտելով ձին փղի հետ փոխանակելու:

## ՖԱԼՔԲԵՐԻ ՀԱԿԱԳԱՄԲԻՏ

2. ... d7-d5
3. e4:d5 e5-e4

Հաջող քայլ է: Այն արգելում է ձին f3 դաշտում զարգացնելը:

4. d2-d3 Զg8-f6
5. Զb1-d2 ...

Գրոսմայստեր Բրոնշտեյնը խորհուրդ է տալիս 5. de Զ:e4 6. Фe3-ը, որից հետո ընդունելի է 6. ... Թh4+ 7. g3 Զ:g3 8. Զf3՝ երկուստեք հնարավորություններով:

5. ... e4:d3
6. Фf1:d3 Զf6:d5
7. Զd2-e4 Фf8-e7

Խաղը հավասար է:

Անդերսեն - Կիզերիցկի
Լոնդոն, 1851թ.

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 e5:f4
3. Фf1-c4 Թd8-h4+
4. Աe1-f1 b7-b5?!

Լ.Կիզերիցկին այս կասկածելի քայլի նկատմամբ, որի նպատակը f7 խոցելի դաշտից փիղը շեղելն է, հատուկ հարգանք էր տածում:

5. Фc4:b5 ...

Առաջարկված զոհաբերությունը չընդունելու պատճառներ չկային:

5. ... Զg8-f6
6. Զg1-f3 Թh4-h6

h5 դաշտը ձիու համար է ազատ թողնվում: Բայց այդ՝ 6. ... Թh5-ին կհաջորդեր 7. Զc3:

7. d2-d3?! ...

Ճիշտ կլիներ 7. Զc3-ը՝ շարունակելով զարգացումը:

7. ... Զf6-h5?!

Սևերն անվերապահորեն հավատարիմ են մնում իրենց ծրագրին: Անհրաժեշտ էր 7. ... Фc5, և 8. d4-ին՝ 8. ... Фb6՝ գրոհելով կենտրոնը:

8. Զf3-h4?! ...

Հաջող կլիներ 8. Նg1! քայլը՝ խոչընդոտելով Զg3-ը և, իր հերթին, սպառնալով g4:

8. ... Թh6-g5?

Ինչպես հետագայում ցույց է տվել Լ.Կիզերիցկին՝ հարկավոր էր 8. ... g6! խաղալ, ինչը 9. g3 Фe7, կամ 9. g4 Զf6 10. Զg2 Թh3 11. Ф:f4 Զ:g4-ից հետո սևերին առավելություն կապահովեր: Այժմ առավելությունը, թերևս, սպիտակներինն է:

9. Զh4-f5 c7-c6
10. g2-g4 Զh5-f6 (դ.13)

Ակներև է, որ 10. ... cb 11. gh-ից հետո սպիտակները դիրքային առավելություն կստանային:

13


11. Նh1-g1! ...

Անդերսենը անմնացորդ

հաշվարկել էր ստեղծված դիրքը: Հիմա նա ֆիգուրի կոխաբեության բումամբ դիրքային մեծ առավելության է հասնում:

11. ... c6:b5
12. h2-h4 Թg5-g6
13. h4-h5 Թg6-g5
14. Թd1-f3 Ձf6-g8

Սպառնում էր 15. Փ:f4:

15. Փc1:f4 Թg5-f6
16. Ձb1-c3 Փf8-c5
17. Ձc3-d5 Թf6:b2
18. Փf4-d6! ...

Գեղեցիկ քայլ է. սպիտակներն առաջարկում են մրցակցին՝ վերցնել նավակներից ցանկացածը: Ասենք սակայն, որ հաղթանակի համար բավարար կլիներ ինչպես 18. Փe3-ը, այնպես էլ՝ 18. Նe1-ը:

18. ... Փc5:g1

Ինչպես նշել է Վ.Ստեյնիցը՝ 18. ... Թ:a1+ 19. Աe2 Թb2! շարունակությունը սևերին փրկության հույս էր ներշնչում:

19. e4-e5!! ...

Սպիտակները մրցակցին թույլ են տալիս, արդեն իսկ շահած նավակից ու թեթև ֆիգուրից բացի, շախով մյուս նավակը ևս վերցնել:

19. ... Թb2:a1+
20. Աf1-e2 Ձb8-a6

20. ... Փa6-ի դեպքում, ինչպես ապացուցել է Է.Ֆալքբեերը, սպիտակները նույնպես հաղթանակ կտանեին՝ 21. Ձc7+ Աd8 22. Ձ:a6!, և այլն:

21. Ձf5:g7+ Աe8-d8
22. Թf3-f6+! Ձg8:f6
23. Փd6-e7X

Ինչպես տեսնում ես՝ սպիտակներին պակասում է թագուհին, երկու նավակներն ու փիղը: Ֆալքբեերը, 1855թ. «Վիններ շախմատային» ամսագրում, այս պարտիան *Անմահ* անվանեց:

Բաաման - Գրինֆիթս
Բոթնոր-Ռիջիս, 1968թ.

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 e5:f4
3. Ձg1-f3 Ձg8-f6
4. e4-e5 Ձf6-h5
5. Թd1-e2 Փf8-e7
6. d2-d4 0-0
7. Ձb1-c3 ...

Հրաժարվելով արքայական թևում անհապաղ գրոհի անցնելուց (Կերեսի-Ալյոխինի՝ 7. g4)՝ Մեծ Բրիտանիայի 1960-1970 թվականների չեմպիոն Մայքլ Բաամանը (Միքայել Բաամաջյան) նախ՝ կարգավորումն է ավարտում:

7. ... d7-d6
8. Փc1-d2 d6:e5?! (դ.14)

Ըստ Պ.Կերեսի՝ այստեղ ուժեղագույնը 8. ... Ձc6!-ն է. 9. 0-0-0 Փg4՝ սևերի առավելությամբ:

14 

Պարտիայում կատարված քայլից հետո սպիտակները մեծ առավելություն են ստանում:

9. d4:e5 Փe7-h4+?

Արժեր փորձել 9. ... c6, և 10. 0-0-0-ին՝ 10. ... Թc7, սակայն սևերի դիրքն այս դեպքում ևս բավական ծանր կլիներ:

Պարտիայում կատարված քայլից հետո սպիտակները, մի քանի գեղեցիկ գոհաբերությունների միջոցով, հաղթանակի են հասնում:

10. g2-g3 f4:g3
11. 0-0-0! Փc8-d7
12. h2:g3! Ձh5:g3
13. Թe2-h2! Ձg3:h1
14. Ձf3:h4 Փd7-g4
15. Փf1-d3! Փg4:d1
16. Ձh4-f5 ...

Այստեղ սևերը կարող էին և վայր դնել զենքը՝ սպառնում էր 17. Ձe7+, և 18. Թ:h7X, որից բավարար պաշտպանության հնարավորություն չկար. օրինակ՝ 16. ... g6-ին կհաջորդեր 17. Թh6!, 16. ... h6-ին՝ 17. Ձ:h6+՝ երկու դեպքում էլ սևերը մատից չէին խուսափի, իսկ 16. ... f6-ին կարող էր հետևել 18. Ձ:g7՝ հեշտ հաղթանակով:

Պարտիայում դեռևս հետևեց.

16. ... Թd8:d3
17. c2:d3 Փd1-g4
18. Ձf5-h6+

Եվ սևերն ընդունեցին պարտությունը:

Սպասսկի - Բրոնշտեյն
Լենինգրադ, 1960թ.

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 e5:f4
3. Ձg1-f3 d7-d5
4. e4:d5 Փf8-d6

Երբ այս տարբերակի երկու խոշոր գիտակներն են հանդիպում, դա միշտ հետաքրքիր է:

Իրենց վերջին քայլով սևերը ձգտում են մրցակցին շեղելու տրորված արահետներից:

5. Ձb1-c3 ...

Ավելի ուժեղ է 5. d4-ը, և եթե 5. ... Ձf6, կամ 5. ... Ձe7, ապա 6. c4:

5. ... Ձg8-e7
6. d2-d4 0-0
7. Փf1-d3 Ձb8-d7
8. 0-0 (դ.15) ...

15 

8. ... h7-h6?

Սևերն արքայի դիրքն են միայն թուլացնում: Ինչպես հետագայում ցույց է տվել Բ.Սպասսկին՝ այս պահին նրանք կարող էին շարունակել ինչպես 8. ... Ձg6՝ 9. Ձe4 Ձf6 10. Ձ:d6 Թ:d6 11. c4 Փg4, այնպես էլ՝ 8. ... Ձf6՝ 9. Ձe5 Ձe:d5 10. Ձ:d5 Ձ:d5 11. Փ:f4 Ձ:f4 12. Ն:f4 Թg5 (իհարկե, ո՛չ 12. ... f6??՝ 13. Փc4+ Աh8 14. Ձg6+, և մատ հաջորդ քայլով), և երկու դեպքում էլ հավասար խաղ կստացվեր:

9. Ձc3-e4 Ձe7:d5
10. c2-c4 Ձd5-e3
11. Փc1:e3 f4:e3
12. c4-c5 Փd6-e7
13. Փd3-c2 ...

Սպիտակները մրցակցի արքայի դեմ գրոհ են նախապատրաստում: 13. Թe2 Ձf6! 14. Ձ:f6+

(կամ 14. Թ:e3 Չd5) 14. ... Փ:f6 15. Թ:e3 Նe8-ը սևերին բավարար հակախաղի հնարավորություն էր ընձեռում:

13. ... Նf8-e8

Արդեն բավարար չէր 13. ... Չf6-ը, քանի որ 14. Թd3-ի միջոցով սպիտակները ոչ միայն հետ կբերեին զինվորը, այլ` գրոհի լավ հնարավորություններ կպահպանեին:

14. Թd1-d3 e3-e2
15. Չc4-d6!? ...

Սպիտակները նավակ և թեթև ֆիգուր են զոհաբերում` ամենայն հավանականությամբ, հոգեբանական նկատառումներից մղված. այդ պահին սևերը ժամանակի խիստ պակաս էին զգում: Ավելի հուսալի ու ճիշտ կլիներ 12. Նf2-ը, որը, առանց ավելորդ ռիսկի դիմելու, կամրապնդեր առավելությունը:

15. ... Չd7-f8?

Ճիշտ կլիներ շարունակել 15. ... Փ:d6! 16. Թh7+ Աf8 17. cd efԹ+ 18. Ն:f1 cd 19. Թh8+ Աe7 20. Նe1+ Չe5 21. Թ:g7 Նg8 22. Թ:h6 Թb6 23. Աh1 Փe6 24. de d5, և սևերը գրոհի լավ հնարավորություններ կստանային:

16. Չd6:f7! e2:f1Թ+
17. Նa1:f1 Փc8-f5

17. ... Ա:f7-ին կհաջորդեր 18. Չe5+ Աg8 19. Թh7+!! Չ:h7 20. Փb3+` անխուսափելի մատով, իսկ 17. ... Թd5-ին` 18. Չ3e5 Փ:c5 19. Չ:h6+ gh (կամ 19...Աh8` 20. Ն:f8+, և 21. Թh7X) 20. Փb3:

18. Թd3:f5 Թd8-d7
19. Թf5-f4 Փe7-f6
20. Չf3-e5 Թd7-e7
21. Փc2-b3 Փf6:e5
22. Չf7:e5+ Աg8-h7

Սա անմիջապես պարտության է հանգեցնում, սակայն միանգամայն անհուսալի էր և 22. ... Աh8 23. Թf5 g5 24. h4-ը:

23. Թf4-e4+

Սևերը հանձնվեցին:

Բրոնշտեյն - Պանով
Մոսկվա, 1974թ.

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 Փf8-c5
3. Չg1-f3 d7-d6
4. c2-c3 Փc8-g4

Ճիշտ կլիներ 4. ... Չf6-ը:

5. f4:e5 d6:e5
6. Թd1-a4+! Փg4-d7
7. Թa4-c2 ...

Իհարկե, Դ.Բրոնշտեյնին հայտնի էր այս տեսական տարբերակը, որը գործնականում Ֆ.Մարշալն էր հաճախ կիրառում: Սպիտակներին այն առավելություն է խոստանում:

7. ... Չb8-c6
8. b2-b4 Փc5-d6
9. Փf1-c4 ...

Կարելի էր և 9. Փe2` այսպես դանիայի գրոսմայստեր Բ.Լարսենն էր խաղում:

9. ... Չg8-f6
10. d2-d3 Թd8-e7
11. 0-0 0-0-0
12. a2-a4 (դ.16) ...

16




12. ... a7-a5!

Այս քայլը, թագուհու թևի սպիտակ զինվորների գրոհը կասեցնելու առումով, երևի թե` ամենահաջողն էր, քանի որ 13. ba Չ:a5-ից հետո սպիտակները, ամենայն հավանականությամբ, անկարող կլինեին բաց b գիծն օգտագործել:

13. b4-b5! Չc6-b8
14. Չb1-d2 Փd7-g4
15. Չd2-b3 b7-b6
16. Փc1-e3?! ...

Անփութություն է: Ճիշտ կլիներ 16. Աh1-ը` ազատելով g1 դաշտը:

16. ... Չb8-d7?

Սևերը հանկարծակի ծագած հնարավորությունն են կորցնում: Այս պահին նրանք կարող էին 16. ... Փ:f3! 17. Ն:f3 Չg4-ի միջոցով փիղը g1-a7 անկյունագծից հեռացնել:

17. Նa1-e1 Փg4-e6
18. Փc4:e6 Թe7:e6
19. Աg1-h1 Թe6-e7

Սպիտակների դիրքը, անկասկած, հեռանկարային է, և նրանք վերադասավորում են իրենց ուժերը:

20. Չb3-d2 Չf6-g4
21. Փe3-g1 h7-h5
22. Չd2-c4 g7-g5?!

Ճիշտ կլիներ 22. ... h4-ը` սպառնալով 23. ... h3: Այնինչ այժմ սևերը գրոհը կանխել չեն հասցնում:

23. Չc4:d6+ c7:d6
24. Չf3-d2 f7-f6
25. Չd2-c4 Աc8-b7
26. Փg1:b6! ...

Ֆիգուր զոհաբերելով` սպիտակներն անկասելի գրոհի հնարավորություն են ստանում:

26. ... Չd7:b6
27. Չc4:a5+ Աb7-c7
28. Չa5-c6 Թe7-e6
29. a4-a5 Չb6-d7
30. b5-b6+! ...

Վերջին հարվածը, որից պաշտպանվելն անհնար էր:

30. ... Աc7-b7

Եթե 30. ... Ա:c6, ապա 31. Թa4+ Աb7 32. a6+ Աb8 33. Թc6, և մատն անխուսափելի կլիներ:

31. a5-a6+ Աb7:b6
32. Նe1-b1+

Եվ այս անհուսալի դիրքում սևերն սպառեցին ժամանակը:

Շպիլման - Տարաշ
Մորավսկա կղզիներ,1923թ.

1. e2-e4 e7-e5
2. f2-f4 d7-d5
3. e4:d5 e5-e4
4. d2-d3 Չg8-f6
5. d3:e4 Չf6:e4
6. Չg1-f3 ...

Ուշադրության էր արժանի 6. Փe3-ը:

6. ... Փf8-c5
7. Թd1-e2 ...

Այստեղ Ս.Տարտակովերը 7. Փd3 է առաջարկել:

7. ... Փc8-f5 (դ.17)

17


8. g2-g4? ...

Ինչ խոսք՝ դոկտոր Զ.Տարաշը այսպիսի ընթացքին պատրաստ էր՝ վերջին քայլը «Բիլգեր» հայտնի ամսագրում հենց Ռ.Շպիլմանն էր առաջարկել:

8. ... 0-0!

Այսպիսի շրջադարձի Շպիլմանը չէր սպասում, այլապես՝ 8. Ձc3! կխաղար:

9. g4:f5 Նf8-e8

10. Փf1-g2 ...

10. Թg2-ին կհաջորդեր հանդարտ 10. ... Թ:d5-ը, և 11. Փe2 Ձc6 12. Ձc3 Թ:f5-ից հետո սևերը բազմաթիվ սպառնալիքներով լի խաղ կստանային:

10. ... Ձe4-f2

11. Ձf3-e5 Ձf2:h1

12. Փg2:h1 Ձb8-d7

Վաղաժամ էր 12. ... f6-ը՝ 13. d6!-ի պատճառով:

13. Ձb1-c3 f7-f6

14. Ձc3-e4 f6:e5

15. Ձe4:c5 Ձd7:c5

16. f4:e5 Թd8-h4+

Սպիտակները որակի դիմաց երկու զինվոր ստացան, սակայն արքայի անհաջող դիրքը նրանց վիճակը բարդացնում է:

17. Աe1-f1 ...

Եթե 17. Աd1, ապա 17. ... Թd4+՝ հաղթանակով:

17. ... Նe8-f8!

18. Աf1-g1 ...

18. Թf3-ին կհաջորդեր 18. ... Թc4+: Չէր փրկում և 18. f6-ը՝ 18. ... Նae8!, իսկ 18. e6 Ն:f5+ 19. Աg1 Նaf8 20. Փe3 Ձe4 շարունակությունը նույնպես ծանր հետևանքներ կունենար:

18. ... Թh4-d4+

19. Փc1-e3 Թd4:e5

20. Նa1-e1 Ձc5-d7

Ձին արքայական թևն է շտապում:

21. Թe2-c4 Աg8-h8

22. Փh1-e4 Նa8-e8

23. Փe3-d4 Թe5-f4

24. Նe1-e2 Ձd7-f6

24. ... Ն:e4?-ին կհաջորդեր 25. Ն:e4 Թ:e4 26. Փ:g7+:

25. Փd4:f6 ...

Հիմա էլ սևերը բաց g գծով են հարձակվում: Սպիտակներն անկարող են փրկվել:

25. ... g7:f6

26. h2-h3 Նf8-g8

Սպիտակները հանձնվեցին:

## ԼԱՏՎԻԱԿԱՆ ԳԱՄԲԻՏ

1. e2-e4 e7-e5

2. Ձg1-f3 f7-f5 (դ.18)

18



Այս շարունակության մասին Ջ.Պոլերիոյի ձեռագրերում է դեռևս հիշատակվում: XVII դարում գամբիտը Ջ.Գրեկոն էր կիրառում (2. ... f5 շարունակությունը երբեմն *Գրեկոյի գամբիտ* են անվանում): Գործնականում գամբիտն այս լայն կիրառություն ստացավ՝ շնորհիվ ռիգացի շախմատիստների (և առաջին հերթին՝ Կ.Բետինշի) վերլուծությունների: 1934-36 թվականներին Ստոկհոլմ-Ռիգա համակազրությամբ խաղացված մրցամարտում ռիգացիները (ինձ՝ բոլոր պարտիաներում նրանք սևերով էին խաղում) հաղթանակ տարան (+3 - 0 =2): Այստեղից էլ անվանումը՝ *Լատվիական գամբիտ*:

Կարելի է ասել, որ սա արքայական գամբիտն է, միայն թե՝ սևերի կիրառմամբ: Սակայն մեկ քայլի պակասն իրեն զգացնել է տալիս, և սևերի եռանդուն խաղ ստանալու հույսերը դժվար թե կիրականանացվեն:

3. Ձf3:e5! ...

Ամենահաջող շարունակությունն է: Պակաս խոստումնալից էր 3. d4-ը՝ 3. ... fe 4. Ձ:e5 Ձf6, կամ 3. ef-ը՝ 3. ... e4 4. Ձe5 Ձf6 5. Փe2, որին կարող էր հաջորդել 5. ... d6 6. Փh5+ Աe7 7. Ձf7 Թe8 8. Ձ:h8 (կամ 8. Ձc3 Ձ:h5 9. Ձd5+ Աd7 10. Թ:h5 Նg8) 8. ... Թ:h5 9. Թ:h5 Ձ:h5 10. g4 Ձf6՝ և բարդ խաղ կծավալվեր:

3. ... Թd8-f6

4. Ձe5-c4 ...

Հնարավոր էր և 4. d4 d6 5. Ձc4 fe 6. Ձc3 Թg6 7. Թe2 Ձc6 8. Փe3 Փe7 9. 0-0-0 Ձf6 10. d5 Ձb4 11. Ձa5 0-0 12. Թc4 Ձa6 13. h3 Աh8 14. Փe2՝ առավելությունն սպիտակներինն է (Կոֆման-Վիշնևսկի, Կիև, 1947թ.):

4. ... f5:e4

5. Ձb1-c3 Թf6-g6

6. d2-d3 Փf8-b4

7. Փc1-d2 ...

Տրիֆունովիչ-Աշենիեկ (Ստոկհոլմ, 1939թ.) պարտիայում՝ 7. de Թ:e4+ 8. Ձe3 Փ:c3+ 9. bc Ձf6 ( 9. ... Ձe7 10. Փc4 d6 11. 0-0 Փe6 12. Թh5+ Աd7 13. Փ:e6+ Թ:e6 14. c4 տարբերակում սպիտակները հստակ առավելություն կպահպանեին) 10. Փc4 c6 11. 0-0 d5 12. Ձ:d5!-ից հետո, սպիտակները փայլուն անզկայրին գրոհը՝ 12. ... Թ:c4 13. Նe1+ Աf7 14. Ձ:f6 Ա:f6 15. Թd6+ Փe6 16. Փg5+! Ա:g5 17. Ն:e6 Ձd7 18. Թ:d7 Թ:c3 19. f4+ Աh5 20. Նe5+ Աh6 21. Նh5+!: Երկու քայլից մատն անխուսափելի է, սևերը հանձնվեցին:

7. ... Փb4:c3

8. Փd2:c3 d7-d5

9. Ձc4-e5 Թg6-f5

10. d3:e4 Թf5:e4+

11. Փf1-e2 Ձg8-f6

12. 0-0 c7-c6

Եթե 12. ... 0-0, ապա 13. Փf3՝ զինվոր շահելով:

13. Փe2-h5+ Աe8-f8

14. Նf1-e1 Թe4-h4

Այսպես են պարզացել իրադարձությունները Սմիսլով-Կամիշև (Մոսկվա, 1944թ.) պարտիայում: Հեշտ է համոզվել, որ սևերը, պարզացումով ետ մնալով և զրկվելով փոխատեղման հնարավորությունից, դժվարին դիրքում են հայտնվել: Ահա՛ խաղավարտը. 15. Փg6! Ձa6 16. Թe2 Փh3 17. Ձf3: Սևերը հանձնվեցին:

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԽԱՂ

1. e2-e4 e7-e5
2. d2-d4 e5:d4
3. Թd1:d4 (դ.19) ...

19


Այս սկզբնախաղը նախորդ դարի կեսերին լայն կիրառություն էր գտել:

Կենտրոնում լարվածությունը թուլացնելուց հետո սպիտակները թագուհին արքայական թև են տեղափոխում՝ փորձելով փոխատեղման դիրքի դեմ գրոհ ձեռնարկել:

Ընդհանուր առմամբ՝ սկզբնախաղը սպիտակներին առավելություն, նույնիսկ՝ բարդ պայքար չի խոստանում: Ժամանակի կորուստը, ինչը հետևանք է թագուհին վաղաժամ դուրս բերելու, հաճախ սևերին նույնիսկ նախաձեռնությունն ստանձնելու հնարավորություն է ընձեռում:

3. ... Ձb8-c6
4. Թd4-e3 ...

4. Թa4?! Ձf6 5. Ձc3 Փb4 շարունակությունը մոտավորապես հավասար դիրքի կհանգեցներ:

4. ... Ձg8-f6
5. Ձb1-c3 Փf8-b4

Սուր պայքար է ծավալվում: Սևերը ձգտում են կենտրոնում d7-d5 հարվածն արագ իրականացնելու, ինչը կհավասարեցնի հնարավորությունները:

Կարելի էր և 5. ... Փe7 6. Փc4 (կամ 6. Թg3 0-0 7. Փh6 Ձe8 8. Փf4 d6 9. 0-0-0 Փe6 10. h4 Փf6) 6. ... 0-0 7. Փd2 d6 8. 0-0-0 Փe6 9. Փ:e6 fe՝ հավասար խաղով. օրինակ՝ 10. Թh3 Թd7 11. Ձge2 e5, և այլն:

6. Փc1-d2 0-0
7. 0-0-0 Նf8-e8
8. Փf1-c4 d7-d6

Այստեղ հնարավոր է ինչպես 9. Ձf3 Փe6, այնպես էլ՝ 9. f3: Վերջին դեպքում ճիշտ կլինի 9. ... Ձa5, և 10. Փd3-ին՝ 10. ... d5! պատասխանել: Ուշադրության է արժանի նաև 9. Ձh3!?-ը՝ 9. ... Ձa5 10. Փd3 d5 11. Թg3! d4? 12. Փg5! dc 13. e5 Ձh5 14. Փ:h7+ Ա:h7 15. Թh4՝ հաղթանակով: Սակայն, շարունակելով 11. ... de! 12. Ձ:e4 Փ:d2+ 13. Ն:d2 Ձ:e4 14. Փ:e4 Թf6!, սևերը փոքր-ինչ ավելի հարմար խաղ կստանան:

Խորհրդակիցներ - Բլեքբերն
Բրեդֆորդ, 1901թ.

1. e2-e4 e7-e5
2. d2-d4 e5:d4
3. Թd1:d4 Ձb8-c6
4. Թd4-e3 g7-g6

Հնարավոր էր և 4. ... Ձf6:

5. Փc1-d2 Փf8-g7
6. Ձb1-c3 ...



Եթե 6. Փc3, ապա 6. ... Ձf6:

6. ... Ձg8-e7
7. 0-0-0 0-0
8. f2-f4? (դ.20) ...

Անհրաժեշտ էր 8. Փc4 խաղալ, քանի որ այժմ սևերը, կենտրոնում գեղեցիկ հակահարված հասցնելով, ստանձնում են նախաձեռնությունը:

20


8. ... d7-d5!
9. e4:d5 ...

Կամ 9. Ձ:d5 Ձ:d5 10. ed Թ:d5 11. Փb4 Թ:a2! (ավելի ուժեղ է, քան՝ 11. ... Փ:b2+-ը) 12. Փ:f8 Թ:b2+ 13. Աd2 Ա:f8, և սևերը որակի դիմաց երկու զինվոր ու երկարատև գրոհ կունենային:

9. ... Ձc6-b4
10. Փf1-c4 Փc8-f5
11. Փc4-b3 Ձe7:d5
12. Ձc3:d5? ...

Սա արդեն կոպիտ սխալ է: Անհրաժեշտ էր 12. Թf3-ի միջոցով պարտադրել 12. ... Ձ:c3 13. Փ:c3 Թe7՝ պարզեցնելով խաղը:

12. ... Ձb4:d5
13. Թe3-f3 Թd8-f6!

Սրընթաց հարձակման սկիզբն է:

14. c2-c3 Ձd5-b4!

Սպառնում է 14. ... Ձd3+:

15. Փb3-c4 Թf6-a6!!

Սևերը թագուհին են զոհաբերում, սակայն այն վերցնելու դեպքում մեկ քայլից մատ կստացվեր:

16. g2-g4 ...

Չէր փրկում և 16. cb Թ:c4+ 17. Փc3 Փ:c3! 18. Թ:c3 (18. bc Թ:a2) 18. ... Թ:f4+ 19. Թd2 Թe4 (կամ 19. Նd2 Թe4 20. Աd1 Նfe8) շարունակությունը:

16. ... Թa6:a2
17. Փd2-e3 Փg7:c3!

Սպիտակները հանձնվեցին:

## ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՐՏԻԱ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. d2-d4 e5:d4
4. Ձf3:d4 (դ.21) ...

21


Այս սկզբնախաղը նույնպես դարերի վաղեմություն ունի: Սակայն անվանում ստացավ, միայն երբ այն հաջողությամբ կիրառեցին շոտլանդացի շախմատիստները՝ Էդինբուրգ և Լոնդոն քաղաքների միջև 1824 թվականին կայացած նամակագրությամբ խաղում:

Սպիտակները կենտրոնում առավելության են ձգտում: Սակայն սևերը կարող են պահպանել հավասարակշռությունը՝ իրենց հերթին գրոհելով e4-ի զինվորը:

4. ... Ձg8-f6

Եթե 4. ... Ձ:d4?!, ապա 5. Թ:d4 Թf6! (5. ... Ձf6?! 6. e5!, և սևերն ստիպված են շարունակելու 6. ... Ձg8) 6. e5!՝ սպիտակների առավելությամբ:

Որպես այլընտրանք՝ այստեղ հնարավոր էր ինչպես 4. ... Թh4-ը , այնպես էլ՝ 4. ... Փc5-ը, և եթե 5. Ձ:c6, ապա նախ՝ 5. ... Թf6!, նոր միայն՝ Թ:c6՝ թույլ չտալով թագուհու թևի զինվորային շղթայի խզում: Հնարավոր է նաև ինչպես 5. Փe3, այնպես էլ՝ 5. Ձb3 շարունակությունը:

5. Ձb1-c3 ...

Հաջող չէր 5. Ձ:c6-ը՝ 5. ... bc 6. e5 Թe7 7. Թe2 Ձd5 8. Ձd2 Փb7 9. Ձb3 0-0-0 10. c4 Ձb6, և սպիտակները զարգացումով հետ կընկնեին:

5. ... Փf8-b4
6. Ձd4:c6 b7:c6
7. Փf1-d3 d7-d5
8. e4:d5 ...

Թույլ էր 8. e5-ը՝ 8. ... Ձg4 9. 0-0 Փc5՝ 10. ... Թh4 սպառնալիքով:

8. ... c6:d5
9. 0-0 0-0
10. Փc1-g5 Փc8-e6

Անհրաժեշտ է d5 զինվորը պաշտպանել. 10 ... Փe7-ին կարող էր հաջորդել 11. Փ:f6 Փ:f6 12. Թh5 g6 13. Թ:d5 Թ:d5 14. Ձ:d5 Փ:b2 15. Նab1 Փe5 16. Նfc1՝ սպիտակների առավելությամբ:

Մրցակիցների հնարավորությունները հավասար են: Հնարավոր է 11. Ձb5 c5 12. a3 Փa5 13. b4 cb 14. ab Փ:b4 15. Ն:a7 Ն:a7 16. Ձ:a7 h6!, և այլն:

Ռսկանյան - Լիստենգարտեն
Ռիգա, 1975թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Ձb1-c3 Ձg8-f6
4. d2-d4 e5:d4
5. Ձf3:d4 Փf8-b4
6. Ձd4:c6 b7:c6
7. Փf1-d3 d7-d5
8. e4:d5 Թd8-e7+
9. Թd1-e2 c6:d5

Եթե 9. ... Թ:e2+, ապա 10. Փ:e2, և սպիտակներն աննշան առավելություն կստանային:

10. Թe2:e7+ Փb4:e7

Այս թերացումը սպիտակներին հնարավորություն է ընձեռում ստանձնելու նախաձեռնությունը: Ձին, կաշկանդումից ազատվելով, թագուհու թևում առկա թուլությունները գրոհելու հնարավորություն է ստանում: Ճիշտ էր 10. ... Ա:e7 11. 0-0 Նd8-ը:

11. Ձc3-b5! Աe8-d8
12. 0-0 ...

Անհաջող էր 12. Փf4-ը՝ 12. ... c6 13. Ձc7 Ձh5-ի պատճառով:

12. ... Փc8-d7
13. Փc1-f4 Ձf6-e8

Սևերը փղերից որևէ մեկը ձիու հետ փոխանակել և մրցակցին երկու փղի առավելություն տալ չեն ցանկանում: Հավասարիմ մնալով այս սկզբունքին՝ նրանք զգալիորեն թուլացնում են իրենց դիրքը:

14. c2-c4! ...

Սպառնում էր 14. ... c6, և 15. ... Փd6: Իսկ այժմ 14. ... c6-ին կհետևեր 15. Ձc3:

14. ... Նa8-b8
15. b2-b3 d5:c4
16. b3:c4 Ձe8-d6

Արդեն չափազանց ծանր դիրքում սևերը որոշում են զինվոր զոհաբերել՝ փոխարենը փակելով d ուղղաձիգը:

17. Ձb5:a7 Նb8-b7
18. Փf4-e3 c7-c6
19. Նa1-b1 Աd8-c7
20. c4-c5! ...

Վճռվում է պայքարի ելքը. 20. ... Ձb5-ին կհաջորդեր 21. Փf4+ Աd8 22. Ձ:b5 cb 23. Փe4 Նa7 24. Նfd1 (սպառնում է 25. c6) 24. ... Աc8 25. c6, և 26. Ն:b5՝ հաղթանակով: Դա է պատճառը, որ սևերը որոշում են ժամանակավորապես ֆիգուր զոհաբերել: Թերևս, այստեղ կարելի էր և հանձնել խաղը:

20. ... Նh8-b8
21. c5:d6+ Փe7:d6
22. Նb1-c1 c6-c5
23. Փe3:c5 Փd6:c5
24. Նc1:c5+ Աc7-b6
25. Նc5-g5 Աb6:a7
26. Նg5:g7 Փd7-e6
27. Նg7:h7 Նb7-b2
28. a2-a4 ...

Եվ մի քանի քայլից սևերն իրենց պարտված ճանաչեցին:

## ՖԻԼԻԴՈՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 d7-d6 (դ.22)

Սկզբնախաղն այս հիշատակվում է Հյութինգենյան ձեռագրերում և Լ.Լուսենայի գրքում: Հետագայում այն մշակել և գործնականում վարպետորեն կիրառել է ֆրանսիացի հանճարեղ շախմատիստ Ֆ.Ֆիլիդորը: Այստեղից էլ անվանումը՝ *Ֆիլիդորի պաշտպանություն*:

22 

Այս սկզբնախաղում սևերը ճնշված, սակայն բավականին ամուր դիրք են ստանում:

3. d2-d4 Ձg8-f6

Անհրաժեշտ է արքայական թևի ուժերը հնարավորին չափ արագ զարգացնել: Սխալ էր, օրինակ, 3. ... Փg4-ը (տե՛ս Մորֆի - Բրաունշվեյգ, Իզուար պարտիան): Պասիվ էր 3. ... Ձd7-ը՝ 4. Փc4-ին սևերը հարկադրված են 4. ... c6 խաղալ, այլապես՝ 4. ... Ձgf6?-ին կհաջորդեր 5. de Ձ:e5 (եթե 5. ... de?, ապա 6. Ձg5!) 6. Ձ:e5 de 7. Փ:f7+ Ա:f7 8. Թ:d8 Փb4+ 9. Թd2, իսկ 4. ... Փe7?-ին՝ 5. de Ձ:e5 (5. ... de 6. Թd5) 6. Ձ:e5 de 7. Թh5, և երկու դեպքում էլ սպիտակներն զգալի առավելության են հասնում:

Սևերին ծանր դիրքի կհասցներ Ֆիլիդորի առաջարկած 3. ... f5-ը՝ 4. ef e4 5. Ձg5 Փ:f5 6. Ձc3 Ձf6 7. f3:

Հնարավոր էր և 3. ... ed, բայց դա կենտրոնը հանձնելու հետ

է առնչվում և Ֆիլիդորի պաշտպանության ոգուն չի համապատասխանում:

4. Չb1-c3 ...

Եթե 4. de, ապա 4. ... Չ:e4 5. Չbd2 Չ:d2 6. Փ:d2 Չc6, և, չնայած սպիտակները որոշ առավելություն կպահպանեին, խաղը պարզ տեսք կստանար:

4. ... Չb8-d7
5. Փf1-c4 Փf8-e7
6. 0-0 0-0
7. Թd1-e2 ...

Սպիտակները d1 դաշտը թագուհու թեւի նավակի համար են ազատում:

7. ... c7-c6
8. a2-a4 ...

Կարևոր քայլ է, որն արգելում է b7-b5 առաջխաղացումը:

Որպես արդյունք՝ սպիտակները հարմար խաղ ստացան:

Մորֆի -
դուքս Բրաունշվեյգ,
կոմս Իզուար
Փարիզ, 1858թ.

1. e2-e4 e7-e5
2. Չg1-f3 d7-d6
3. d2-d4 Փc8-g4?

Ժամանակի կորուստ է. 4. de-ի դեպքում սևերը f3 դաշտում ստիպված կլինեն փոխանակություն կատարելու, այլապես՝ զինվոր կկորցնեն (4. ... de 5. Թ:d8+ Ա:d8 6. Չ:e5):

4. d4:e5 Փg4:f3
5. Թd1:f3 d6:e5
6. Փf1-c4 Չg8-f6

Ակնհայտ է, որ, զինվորային համաչափ դասավորության պայմաններում, սպիտակները մեկ ֆիգուր ավելի են կարգաբել: Բացի այդ՝ մատից պաշտպանվելով (սպառնում էր 7. Թ:f7X)՝ խորհրդակիցները չեն նկատում Մորֆիի նոր սպառնալիքը:

Անհրաժեշտ էր խաղալ 6. ... Թd7, թեև այս դեպքում էլ Թb3, Չc3, 0-0, Նfd1-ից հետո սևերին դժվարին պաշտպանություն էր սպասում:

7. Թf3-b3 ...

Կրկնակի հարվածով սպիտակները զինվոր են շահում:

7. ... Թd8-e7

Թերևս, ընդունելի է: Սևերը համաձայն են զինվոր կորցնելուն, մտադրվելով 8. Թ:b7-ին՝ 8. ... Թb4+-ի միջոցով մրցակցին թագուհիների փոխանակություն պարտադրել՝ գրոհի թափը թուլացնելով, սակայն սպիտակները միայն զինվորով բավարարվել չեն ցանկանում:

8. Չb1-c3! c7-c6
9. Փc1-g5 b7-b5? (դ.23)

23 

Ճիշտ կլիներ 9. ... Թc7-ը՝ փորձելով զարգացնել արքայական թեւի ուժերը:

Իսկ այժմ գեղեցիկ կոմբինացիա է հետևում, որի նպատակը գրոհի համար գծեր բացելն է:

10. Չc3:b5! c6:b5
11. Փc4:b5+ Չb8-d7
12. 0-0-0 ...



Սպառնում է 13. Փ:d7+:

12. ... Նa8-d8

Եթե 12. ... Թb4, ապա 13. Փ:f6 gf (13. ... Թ:b3 14. Փ:d7x) 14. Փ:d7+՝ հաղթանակով:

13. Նd1:d7! Նd8:d7
14. Նh1-d1 ...

Ուշադրությո՛ւն դարձրու, որ սպիտակների բոլոր ուժերը գրոհին միացան:

14. ... Թe7-e6
15. Փb5:d7+ Չf6:d7
16. Թb3-b8+! Չd7:b8
17. Նd1-d8X

## ՎԻԵՆՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԱ

1. e2-e4 e7-e5
2. Չb1-c3 (դ.24) ...

24 

Այս սկզբնախաղը ուսումնասիրել է ռուսաստանցի շախմատիստ Կ.Յանիշը (1842-1843թ.թ.), սակայն ավելի ուշ՝ մի խումբ վիեննացի շախմատիստներ, Կ.Գամպեի գլխավորությամբ, մանրակրկիտ հետազոտել են այն: Այստեղից էլ անվանումը՝ *Վիեննական պարտիա*:

2. Չc3 քայլով սպիտակները f2-f4 առաջխաղացումն են նախապատրաստում՝ նախապես արգելելով d7-d5 հակահարվածը (ինչպես *Ֆալքբեերի հակագամբիտում*): Սակայն ժամանակի կորուստը սևերին հնարավորություն է ընձեռում, առանց մեծ ճիգերի, ուժերի համախմբումն ավարտելու և կենտրոնում հակախաղ սկսելու:

Հիմնական շարունակությունները են 2. ... Չg8-f6-ը և 2. ... Չb8-c6-ը:

Թույլ է 2. ... Փc5-ը. պատասխանելով 3. f4՝ սպիտակները կանցնեն *արքայական մերժված գամբիտի* հայտնի տարբերակին, իսկ 3. ... Փ:g1 4. Ն:g1 ef 5: d4 Թh4+ 6. g3 տարբերակում սպիտակները զինվորի դիմաց նախաձեռնություն կստանձնեն:

Ա.

2. ... Չg8-f6
3. f2-f4 ....

Ուշադրության էր արժանի դեռևս Էմ. Լասկերի կիրառած 3. g2-g3 շարունակությունը, որը տեսությունն այժմ բավականին ճշգրտել է, և խաղը դիրքային պայքարի է հանգում. 3. ... d5 4. ed Չ:d5 5. Փg2 Չ:c3 6. bc Փd6 (կարելի էր և 6. ... Չc6, կամ 6. ... Փc5), և մոտավորապես հավասար հնարավորություններով խաղ է ստացվում: Իսկ այժմ հնարավոր է ինչպես 3. ... Փc5, այնպես էլ՝ 3. ... Փb4:

3. ... d7-d5
4. f4:e5 Չf6:e4
5. Չg1-f3 ...

Ուշադրության էր արժանի 5. d3-ը, որին սևերը չպետք է պատասխանեն 5. ... Թh4+, քանի որ 6. g3 Չ:g3 7. Չf3 Թh5 8.

Ձ:d5! Փg4 9. Փg2 Ձ:h1 10. Ձ:c7+ Աd7 11. Ձ:a8 Ձc6 12. Փe3-ից հետո սպիտակների հնարավորությունները գերադասելի են: Սակայն, շարունակելով 5. ... Ձ:c3 6. bc c5 (հնարավոր էր և 6. ... d4!?) 7. Ձf3 Փc7 8. Փc2 Ձc6 9. 0-0 0-0 10. Նb1! Թa5! 11. Թe1 f6, սևերը մոտավորապես հավասար խաղ կստանային:

5. ... Փf8-e7

5. ... Փg4 շարունակությանը Շպիլման-Ֆլյամբերգ պարտիայում կհանդիպենք:

6. d2-d4 0-0
7. Փf1-d3 f7-f5

Հաջող չէր 7. ... Փb4-ը՝ 8. 0-0!-ի պատճառով:

8. e5:f6 Փe7:f6
9. 0-0 Ձb8-c6

Խաղատախտակին մոտավորապես հավասար դիրք է ստացվել. օրինակ՝ 10. Ձe2 Ձb4 11. Փb5 Փd7, կամ 10. ... Փf5 11. c3 Թd7 12. Փf4 Նae8:

Բ.

2. ... Ձb8-c6

Զարգացման այս համակարգը հանդարտ պայքարի է հանգեցնում:

ա) 3. Փf1-c4 Ձg8-f6
4. d2-d3 Փf8-b4
5. Փc1-g5 ...

Այս համակարգին փոխադարձ կաշկանդումն է բնորոշ: Սևերը ձգտում են d7-d5 առաջխաղացումն իրականացնելու, իսկ սպիտակները՝ խոչընդոտելու դրան:

5. ... h7-h6!
6. Փg5:f6 ...

Եթե 6. Փh4, ապա 6. ... d6 7. Ձe2 Փe6, և եթե 8. 0-0?, ապա 8. ... g5! 9. Փg3 h5, և սևերը նախաձեռնություն կստանային:

6. ... Փb4:c3+!
7. b2:c3 Թd8:f6
8. Ձg1-e2 d7-d6
9. 0-0 g7-g5

Սևերը f2-f4 առաջխաղացումն են արգելում:

10. d3-d4 Ձc6-e7!

Դիրքը հավասար է:

բ) 3. f2-f4 e5:f4

Դիրքն *արքայական գամբիտ* է մոտավորապես հիշեցնում, սակայն՝ որոշ առանձնահատկություններով:

4. Ձg1-f3 ...

Հետաքրքիր է և Ստեյնիցի գամբիտը՝ 4. d4!? Թh4+ 5. Աe2: Արքայի փոխատեղման իրավունքից զրկվելը փոխհատուցվում է ուժեղ կենտրոնով, բայց այդ՝ Ձf3-ի ու Ձd5-ի միջոցով սպիտակները մի քանի քայլ կշահեն:

4. ... g7-g5

Պարտադիր քայլ է, այլապես, 4. ... Ձf6 5. Փc4 (5. e5 Ձh5 6. Փc4 d6 7. d4 de 8. 0-0 Փg4 տարբերակում սևերը հարմար դիրքում նյութական առավելությունը կպահպանեին) 5. ... Փb4 6. Ձd5! 0-0 7. 0-0 Ձ:e4 8. d4 շարունակության դեպքում, ըստ Շպիլմանի, սպիտակներն ուժեղ գրոհի հնարավորություն կստանային:

5. d2-d4 ...

Հնարավոր էր և 5. h4 g4 6. Ձg5 h6 7. Ձ:f7 Ա:f7, ինչն *արքայական գամբիտի* կհանգեցներ:

5. ... g5-g4
6. Փf1-c4 g4:f3



7. 0-0 ...

Եթե 7. Թ:f3, ապա 7. ... Ձ:d4! 8. Փ:f7+ Ա:f7 9. Թh5+ Աg7 10. 0-0 Ձf6! 11. Թg5+ Աf7 12. Փ:f4 Նg8!, և սպիտակները նյութականի կորուստների դիմաց փոխհատուցում չէին ստանա:

7. ... d7-d5
8. e4:d5 Փc8-g4

Մի դիրք ստացվեց, որտեղ սպիտակները զոհաբերած ֆիգուրի դիմաց բավարար փոխհատուցում են ստացել: Օրինակ՝ 9. Թd2! Փg7 10. Թ:f4 Փ:d4+ 11. Աh1 (կարելի էր և 11. Փe3!?) 11. ... fg+ 12. Ա:g2 Թh4 13. Թ:f7+ Աd8 14. Թf8+ Աd7 15. dc+ bc 16. Թf4. նյութական հավասարակշռությունը վերականգնվեց, մինչդեռ սպիտակների հնարավորությունները գերադասելի են:

Շպիլման - Ֆլյամբերգ
Մանհայմ, 1914թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձb1-c3 Ձg8-f6
3. f2-f4 d7-d5
4. f4:e5 Ձf6:e4
5. Ձg1-f3 Փc8-g4
6. Թd1-e2 (դ.25) ...

Սպառնում է ինչպես 7. Ձ:e4, այնպես էլ 7. Թb5+:

25



6. ... Ձe4-c5?!

Սա սպիտակներին խաղը սրելու հնարավորություն է ընձեռում: Ճիշտ կլիներ խաղալ 6. ... Ձg5 (6. ... Ձc6?՝ 7. Ձ:e4 Ձd4? 8. Թd3 Փ:f3 9. Ձg3!, և սևերը ֆիգուր կկորցնեին, սակայն ընդունելի էր նաև 6. ... Ձ:c3 7. bc c5-ը, կամ 7. dc c6-ը, միայն թե այս վերջին դեպքում նրանք փոխատեղումը պետք է կատարեին այն թևում, որտեղ կհանգրվաներ մրցակցի արքան) 7. d3 Փe7 8. Փf4 Ձc6 9. Թf2, կամ 7. d4 Ձ:f3+ 8. gf Փe6. երկու դեպքում էլ կողմերի հնարավորությունները միանգամայն հավասար կլինեին:

7. d2-d4! Փg4:f3
8. Թe2:f3 Թd8-h4+
9. g2-g3! ...

Սևերը 9. Թf2 էին սպասում՝ 9. ... Թ:f2+ 10. Ա:f2 Ձe6 11. Ձ:d5 c6, և 12. ... Ձ:d4-ից հետո դիրքը նրանց համար նպաստավոր վերջնախաղի կհանգեր:

9. ... Թh4:d4
10. Փc1-e3 Թd4:e5
11. 0-0-0 ...

Երկու զինվորի զոհաբերությունն սպիտակներին դիրքային մեծ առավելության հասցրեց:

11. ... c7-c6
12. Ձc3:d5 c6:d5
13. Նd1:d5 Թe5-e6

Ավելի հաջող չէր և 13. ... Թe4-ը՝ 14. Փb5+ Ձc6 15. Փ:c5 Թ:f3 16. Նe1+:

14. Փf1-c4 ...

Սա ավելի ուժեղ է, քան՝ 14. Փ:c5 Փ:c5 15. Ն:c5 0-0:

14. ... Թe6-e4
15. Փe3:c5!

Սևերը հանձնվեցին. 15. ...

Թ:f3 16. Նe1+ -ից հետո մատն անխուսափելի էր:

Գ.Կ. Սարգսյան-Զաքարյան
Երևան, 1974թ.

1. e2-e4 e7-e5
2. Զb1-c3 Զg8-f6
3. Փf1-c4 Զb8-c6

Ավելի ուժեղ էր 3. ... Զ:e4-ը՝ 4. Զ:e4 d5!, կամ 4. Փ:f7+ Ա:f7 5. Զ:e4 d5!, իսկ 4. Թh5 Զd6 5. Թ:e5+ Թe7 6. Թ:e7+ Փ:e7 7. Փb3 Զf5 8. Զf3 c6 9. 0-0 d5 տարբերակը հավասարության էր հանգեցնում:

Պարտիայում ընտրած շարունակությունը պարզեցումներից խուսափելու հնարավորություն է ընձեռում:

4. d2-d3 Փf8-e7
5. Զg1-e2 Զc6-a5
6. 0-0 0-0
7. a2-a4 Զa5:c4
8. d3:c4 c7-c6
9. b2-b3 a7-a5
10. Փc1-b2 Փe7-c5
11. Զe2-g3 ...

Կարելի էր և 11. Աh1՝ նախապատրաստելով f2-f4 առաջխաղացումը: Սակայն սպիտակները դիրքային պայքարի էին հակված:

11. ... d7-d6
12. h2-h3 Փc8-e6
13. Աg1-h1 Զf6-g4! (դ.26)

26



Օգտվելով մրցակցի դանդաղկոտությունից՝ սևերը ստանձնում են նախաձեռնությունը:

14. Թd1-f3 ...

Ձին չէր կարելի վերցնել՝ 14. hg Թh4+ 15. Աg1 Թ:g3, և սպիտակները վատ դիրքում նաև պինվոր կկորցնեին:

14. ... Թd8-h4
15. Զc3-e2 Զg4-h6

Սևերը պատրաստվում են 16. ... f5, կամ 16. ... Փg4 խաղալ: Սպիտակները որևէ հակախաղից զրկված են, և քիչ թե շատ ընդունելի շարունակություն դժվար է առաջարկել:

16. Զg3-f5 Փe6:f5
17. e4:f5 e5-e4
18. Թf3-f4 ...

18. Թc3-ին կհաջորդեր 18. ... Զ:f5 19. g4 Փb4!:

18. ... Թh4:f4
19. Զe2:f4 Զh6:f5
20. Նa1-d1 Նf8-e8
21. g2-g4 ...

Սպառնում էր 21. ... e3: Սակայն սև ձին մրցակցի ճամբարը ներխուժելու հնարավորություն այս դեպքում էլ է ստանում:

21. ... Զf5-h4
22. Փb2-d4 Նa8-d8
23. Փd4:c5 d6:c5
24. Նd1:d8 ...

Համեմատաբար ավելի հաջող էր 24. Զe2-ը, սակայն, շարունակելով Զf3, Զd2 և նավակները d ուղղաձիգով կրկնապատկելով, սևերը միևնույն է կգրավեին բաց գիծը:

24. ... Նe8:d8
25. Նf1-e1 Նd8-d4!
26. c2-c3 Զh4-f3



27. c3:d4 ...

27. Նe2?-ին կհաջորդեր 17. ... Նd1+, և 28. ... Նg1X:

27. ... Զf3:e1
28. d4:c5 Զe1-d3

Պարտիայում հետևեց ևս.

29. Զf4-e2 Զd3:f2+
30. Աh1-g2 Զf2-d3
31. Աg2-g3 Աg8-f8
32. Զe2-c3 Զd3:c5
33. Աg3-f4 Աf8-e7
34. Աf4-e5 f7-f6+
35. Աe5-d4 Աe7-d6
36. Զc3-e2 Զc5:b3+
37. Աd4:e4 Զb3-c5+

Սպիտակները հանձնվեցին:

## ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԻԱ

1. e2-e4 e7-e5
2. Զg1-f3 Զb8-c6
3. Փf1-c4 Փf8-c5 (դ.27)

27



Սկզբնախաղն այս հիշատակված է Հյոթինգենյան ձեռագրերում: Դրա սկզբնական հետազոտությունները Ջ.Պոլերիոն, և ապա՝ Ջ.Գրեկոն են կատարել: Մինչև XIX դարը այն լայն կիրառություն ուներ, այնուհետև հեռացավ «թատերաբեմից», քանի որ սևերը լիարժեք խաղ էին ստանում: Եվ միայն 1970-80 թվականներին *Իտալական պարտիան* վերածնունդ ապրեց՝ հիմնականում շնորհիվ առվետական շախմատիստների (Ա.Լուտիկով, Ա.Յուսուպով, Ա.Դոլմատով և այլք) վերլուծական աշխատանքների:

4. c2-c3 ...

Սպիտակները պատրաստվում են d2-d4 քայլով գրավելու կենտրոնը: Ավելի հանդարտ պայքարի էր հանգեցնում 4.d2-d3-ը:

4. ... Զg8-f6

Սևերը պարտավոր են e4-ի պինվորը գրոհել: Պասիվ 4. ... d6-ին կարող էր հաջորդել 5.d4 ed 6.cd Փb6 7. Զc3, և նրանք ճնշված դիրքում կհայտնվեին:

5. d2-d4 e5:d4
6. c3:d4 Փc5-b4+

Կենտրոնում հակահարվածը չուշացնելու առումով սևերը պետք է փիղը շախով հեռացնեն:

7. Փc1-d2 ...

Ավելի ակտիվ էր 7. Զc3-ը, որը *Գրեկոյի վերլուծություններում* կհանդիպես:

7. ... Փb4:d2+

Սևերի համար ոչ ցանկալի բարդությունների կհանգեցներ 7. ... Զ:e4 շարունակությունը. 8. Փ:b4 Զ:b4 9. Փ:f7+ Ա:f7 10. Թb3+ d5 11. Զe5+ Աe6! 12. Թ:b4 c5:

8. Զb1:d2 d7-d5
9.e4:d5 Զf6:d5
10. Թd1-b3 Զc6-e7
11. 0-0 0-0
12. Նf1-e1 c7-c6

Սևերի ձին կենտրոնում ակ-

տիվ դիրք է զբաղեցնում, ինչն էլ թույլ է տալիս պնդելու, որ սևերը վատ չեն կանգնած:

## ԳՐԵԿՈՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII դարի իտալացի շախմատիստ Ջոակինո Գրեկոյի (1600-1634թ.թ.) ձեռագրերում իր ժամանակին կիրառություն ունեցող բազմաթիվ սկզբնախաղային տարբերակներ է վերլուծվել: Դրանցից մեկն էլ *Իտալական պարտիայում* նավակի կոհաբերության հետ առնչվող տարբերակն է:

1.e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Փf8-c5
4. c2-c3 Ձg8-f6
5. d2-d4 e5:d4
6. c3:d4 Փc5-b4+
7. Ձb1-c3 Ձf6:e4
8. 0-0 Ձe4:c3
9. b2:c3 Փb4:c3
10 Թd1-b3!? Փc3:a1?
11. Փc4:f7+ Աe8-f8
12. Փc1-g5 Ձc6-e7
13. Ձf3-e5! ...

Փայլուն հարձակողական քայլ է: Սպառնում է 14. Փg6!: Օրինակ՝ 13. ... d6 14. Փg6, և ինչպես 14. ... de-ին, այնպես էլ՝ 14. ... hg-ին կհաջորդի 15. Թf7x: Կարևոր է նաև, որ f3 դաշտն այժմ ազատ է և թագուհուն մատչելի:

13. ... Փa1:d4
14. Փf7-g6! d7-d5
15. Թb3-f3+ Փc8-f5
16. Փg6:f5 Փd4:e5
17. Փf5-e6+! Փe5-f6
18. Փg5:f6 g7:f6
19. Թf3:f6+ Աf8-e8
20. Թf6-f7X

Հայտնի է, որ նման կայծակնային ջախջախում միայն կոպիտ սխալների հետևանքով է հնարավոր, սակայն տվյալ դեպքում սևերի խաղն ուժեղացնելու համար երեք հարյուր տարի պահանջվեց:

Պարզվում է, որ 10. ... Փ:a1?-ի, կամ 10. ... Փ:d4?-ի (սա նույնպես պարտության կհանգեցներ) փոխարեն՝ անհրաժեշտ էր 10. ... d5! խաղալ, և 11. Փ:d5 0-0 12. Փ:f7+ Աh8 13. Թ:c3 Ն:f7 14. Թb3-ից հետո դիրքն սպիտակների համար կլիներ փոքր-ինչ ավելի հարմար կլիներ, այդուհանդերձ՝ սևերի համար միանգամայն ընդունելի: Սա էլ նպաստեց, որ շախմատային աշխարհը նորից այս տարբերակով հետաքրքրվի: Ընդամենը մի քանի տասնամյակ առաջ գրոսմայստեր Պ.Կերեսը գտավ, որ 9. ...Փ:c3-ին սպիտակները 10. Թb3!?-ի փոխարեն կարող էին 10. Փa3! պատասխանել, ինչը փութացված տարբերակում սպիտակներին հաղթանակ կապահովեր (դ.28).

28


Հիմնական շարունակությունն են.

Ա.

10. ... Ձe7 11. Թb3 d5 12. Թ:c3 dc 13. Ն:fe1 Փe6 14. Փ:e7 Ա:e7 15. d5! Թ:d5 16. Նad1 Թc5 17. Նe5 Թb6 18. Ն:e6+:

Բ.

10. ... d5 11. Փb5 Փ:a1 12. Նe1+ Փe6 13. Թa4!:

Գ.

10.... d6 11. Նe1 Փa5 12. Թa4 a6 13. Փd5 Փb6 14. Ն:c6! Փd7 15. Նe1+ Աf8 16. Ն:d6!:

Ժամանակակից տեսությունն առաջարկում է 9. bc-ին 9. ... d5! պատասխանել: Հնարավոր է 10. cb dc 11. Նe1+ Ձe7 12. Թe2 Փe6 13. Փg5 Թd7 14. Փ:e7 Ա:e7 15. Թc2 f6!՝ կասեցնելով Նe5 և d4-d5 սպառնալիքն ու նախապատրաստելով արքայի նահանջը (Աf7):

Հնարավոր էր և 8. ... Փ:c3 9. d5! (այս քայլով *Մյոլերի գրոհն* է սկսվում) 9. ... Փf6! 10. Նe1 Ձe7 11. Ն:e4 d6 12. Փg5 Փ:g5 13. Ձ:g5 0-0 (13. ... Փf5?՝ 14. Թf3!) 14. Ձ:h7 Ա:h7՝ մոտավորապես հավասար հնարավորություններով: Օրինակ՝ 15. Թh5+ Աg8 16. Նh4 f5 17. Թh7+ Աf7 18. Նh6 Նg8! 19. Նe1 Թf8! 20. Փb5 Նh8! 21. Թ:h8 gh 22. Թh7+ Աf6 23. Ն:e7 Թ:e7 24. Թ:h6+՝ հավերժական շախով: Սևերը կարող էին և, 14. ... Փf5-ի միջոցով, պարզեցումների գնալ՝ 15. Ն:e7 Թ:e7 16. Ձ:f8 Ն:f8, կամ 15. Նh4 Նe8, և, հետե 16. Թh5, ապա 16. ... Ձg6 17. Նd4 Նe5 18. f4 Ձ:f4 19. Ն:f4 Փg6 20. Թh3 Թc8: Սա է պատճառը, որ *Մյոլերի գրոհը* գործնականում համեմատաբար հազվադեպ է կիրառվում:

Ստեյնից - Բարդելեբեն
Հասթինգս, 1895թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Փf8-c5
4. c2-c3 Ձg8-f6
5. d2-d4 e5:d4
6. c3:d4 Փc5-b4+
7. Ձb1-c3 d7-d5

Սկզբնախաղային որոշ ձեռնարկներում այս շարունակությունը քննադատվում է, բայց դրա հեղինակությունն, այնուամենայնիվ, անսասան է մնում:

8. e4:d5 Ձf6:d5
9. 0-0 Փc8-e6

Բայց կենտրոնի առկայության պայմաններում զինվոր շահելու փորձը սևերի համար «մահացու» կլիներ՝ 9. ... Փ:c3 10. bc Ձ:c3? 11. Թe1+, և 12. Թ:c3, կամ 9. ... Ձ:c3 10. bc Փ:c3 11. Թb3! Փ:a1 12. Փ:f7+ Աf8 13. Փg5 Ձe7 14. Նe1:

10. Փc1-g5 Փb4-e7

Իհարկե, ո՛չ 11. ...f6՝ 12. Նe1-ի պատճառով:

Իսկ այժմ սպիտակները մի շարք փոխանակությունների միջոցով մրցակցին փոխատե-

ղում կատարելու հնարավորությունից են զրկում :

11. Փc4:d5 Փe6:d5
12. Ձc3:d5 Թd8:d5
13. Փg5:e7 Ձc6:e7
14. Նf1-e1! ...

Այժմ 14. ... Թd7-ին կհաջորդի 15. Թe2, իսկ a8-ի նավակը ներգրավել պաշտպանությանը՝ Նa8-d8-d7, սևերն ուղղակի չեն հասցնում՝ 14. ... Նd8 15. Թe2 Նd7 16. Ձe5 Նd6 17. Ձg6! Նe6 18. Ձf4 Ն:e2 19. Ձ:d5, և սպիտակները որակ են շահում:

14. ... f7-f6

Սևերը մտադիր են «արհեստական» փոխատեղում կատարել (Աf7, և Նe8):

15. Թd1-e2 Թd5-d7
16. Նa1-c1 ...

Այս պարտիայում սպիտակների կատարած միակ վիճելի քայլն է: Թերևս, ավելի ուժեղ էր 16. Թe4! c6 17. Նe2 Աf7 18. Նae1 Ձd5 19. Թh4-ը:

16. ... c7-c6

Ճիշտ կլիներ 16. ... Աf7-ը: Սևերը փորձում են c ուղղաձիգում ճնշումը վերացնել՝ ենթադրելով, թե դեռ կհասցնեն Աf7 խաղալ:

17. d4-d5! ...

Այս քայլով սպիտակները բազմաքայլ մի կոմբինացիա են նախապատրաստում. զինվորը զոհաբերելով՝ նրանք d4 դաշտով գրոհում նաև ձին կներգրավեն:

17. ... c6:d5
18. Ձf3-d4 Աe8-f7

Վերացնելով Ձf5 սպառնալիքը:

19. Ձd4-e6 Նh8-c8
20. Թe2-g4 ...

Երկու քայլից մատ է սպառնում (21. Թ:g7+, և 22. Թf8X):

20. ... g7-g6

Բայց ո՛չ 20. ... Ձg6?, որին կհաջորդեր 21. Ձg5+՝ շահելով թագուհին:

21. Ձe6-g5+ Աf7-e8
22. Նe1:e7+!! (դ.29) ...

29



Կոմբինացիան սկսվեց: Եթե 22. ... Թ:e7, ապա 23. Ն:c8+՝ հաղթանակով: 22. ... Ա:e7-ին կհաջորդեր 23. Նe1+ Աd6 (կամ 23. ... Աd8 24. Ձe6+ Աe7 25. Ձc5+) 24. Թb4+ Աc7 (24. ... Աc6՝ 25. Նc1X, 24. ... Նc5՝ 25. Նe6+) 25. Ձe6+! Աb8 26. Թf4+ Նc7 27. Ձ:c7 Թ:c7 28. Նe8X:

22. ... Աe8-f8!!

Փայլուն պատասխան, որն ընդգծում է առաջին հորիզոնականի թուլությունը: Բոլոր սպիտակ ֆիգուրներն առաջվա պես հարվածի տակ են, c1 դաշտից էլ մատ է սպառնում: Հարց է առաջանում, թե մրցակիցներից ո՞վ է հաղթանակի համար պայքարում:

23. Նe7-f7+! Աf8-g8

Ֆիգուրի կորստով կավարտվեր 23. ... Թ:f7 24. Ն:c8+ Ն:c8 25. Թ:c8+ Թe8 26. Թ:e8+ շարունակությունը:

24. Նf7-g7+!! ...

Կոմբինացիայի գագաթնակետը, ինչը պետք է, անշուշտ, տեսներ Վ.Ստեյնիցը կոմբինացիան սկսելուց առաջ: Անպաշտպան նավակը շարունակում է հետապնդել արքային:

24. ... Աg8-h8

Եթե 24. ... Աf8?, ապա 25. Ձ:h7+ Ա:g7 (Աe8) 26. Թ:d7+:

25. Նg7:h7+! ...

Այստեղ Ք.Բարդելեբենը, պատասխան քայլ չկատարելով, լքեց դահլիճը, իսկ Ստեյնիցը ներկաներին ցույց տվեց կոմբինացիայի վերջաբանը.

26. ... Աg8 27. Նg7+ Աh8 28. Թh4+! Ա:g7 29. Թh7+ Աf8 30. Թh8+ Աe7 31. Թg7+ Աe8 32. Թg8+ (բայց ո՛չ 32. Նe1+ Աd8 33. Ձe6+ Թ:e6!, և կհաղթեին արդեն սևերը) 32. ... Աe7 33. Թf7+ Աd8 34. Թf8+ Թe8 35. Ձf7+ Աd7 36. Թd6X:

## ԵՐԿՈՒ ՁԻԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Ձg8-f6 (դ.30)

30



Այս սկզբնախաղի առաջին վերլուծություններն իտալացի շախմատիստ Ջուլիո Պոլերիոյին են պատկանում (XVI դար):

Սևերը գրոհում են e4-ի զինվորը և միաժամանակ կենտրոնում հակահարված են նախապատրաստում (d7-d5):

Եթե սպիտակները 4. Ձc3 խաղան, ապա հնարավոր է 4. ... Ձ:e4 5. Ձ:e4 d5 6. Փd3 de 7. Փ:e4 Փd6:

Դիտարկենք երկու հիմնական տարբերակը՝ 4. Ձf3-g5, և 4. d2-d4:

### Ա.

4. Ձf3-g5 ...

Սպիտակներն առանց հապաղելու f7 կետն են գրոհում: Սևերը պետք է մեծ ճշտությամբ պաշտպանվեն:

4. ... d7-d5
5. e4:d5 Ձc6-a5!

Հաջող չէր 5. ... Ձ:d5-ը (*տե՛ս Պոլերիո-Դոմենիկո պարտիան*):

6. d2-d3 ...

6. Փb5+ շարունակությունը Չոկիլտոյա-Նեժմետդինով պարտիայում կհանդիպեն:

6. ... h7-h6
7. Ձg5-f3 e5-e4
8. Թd1-e2 ...

Ֆիգուրի հետաքրքիր զոհաբերություն է առաջարկել Բրոնշտեյնը՝ Ռոյանի դեմ խաղացած պարտիայում (12-րդ շախմատային օլիմպիադա, 1956թ.). 8. de!? Ձ:c4 9. Թd4 Ձb6 10. c4. սպիտակները ֆիգուրի դիմաց երկու զինվոր և կենտրոնում գերիշխանություն ունեն:

8. ... Ձa5:c4
9. d3:c4 Փf8-c5
10. Ձf3-d2 0-0
11. Ձd2-b3 Փc8-g4
12. Թe2-f1 Փc5-b4+
13. c2-c3 Փb4-e7

Սևերը կինվորի դիմաց հարուստ խաղ ստացան:

Բ.

4. d2-d4 e5:d4
5. 0-0 ...

Հնարավոր էր նաև 5. e5!? d5 6. Փb5 Ձe4 7. Ձ:d4 Փd7 8. Փ:c6 bc 9. 0-0 Փc5՝ երկուստեք սուր խաղով:

5. ... Ձf6:e4
6. Նf1-e1 d7-d5
7. Փc4:d5! Թd8:d5
8. Ձb1-c3 Թd5-a5
9. Ձc3:e4 Փc8-e6
10. Ձe4-g5 0-0-0!
11. Ձg5:e6 f7:e6
12. Նe1:e6 Փf8-d6

Ընդունելով կինվորների կոհաբերությունը և այնուհետև դրանք վերադարձնելով՝ սևերը գրոհը ետ մղեցին ու հարմար դիրք ստացան:

Պոլերիո - Դոմենիկո
Հռոմ, 1602թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Ձg8-f6
4. Ձf3-g5 d7-d5
5. e4:d5 Ձf6:d5?
6. Ձg5:f7! ...

Տեսությունն այստեղ նաև 6. d4 է առաջարկում, սակայն ֆիգուրի կոհաբերությունը, թերևս, գրոհի ուժեղագույն շարունակությունն է:

6. ... Աe8:f7
7. Թd1-f3+ Աf7-e6

Այլապես՝ սպիտակները ֆիգուրը հետ կբերեին՝ կինվորի առավելությունը պահպանելով:

8. Ձb1-c3 Ձc6-e7 (դ.31)

Ավելի համառ էր 8. ... Ձb4-ը, սակայն այս դեպքում էլ, 9. Թe4 c6 10. a3 Ձa6 11. d4-ից հետո, սևերին ծանր պաշտպանություն էր սպասում:

31


9. d2-d4 c7-c6
10. Փc1-g5 h7-h6

Ավելի ուժեղ չէր 10. ...Աd7-ը՝ 11. de Աe8 12. 0-0-0! Փe6 13. Ձ:d5 Փ:d5 (13. ... cd՝ 14. Փb5+!) 14. Ն:d5 cd 15. Փb5+՝ հաղթանակով:

11. Փg5:e7 Փf8:e7
12. 0-0-0 Նh8-f8
13. Թf3-e4 Նf8:f2
14. d4:e5! Փe7-g5+
15. Աc1-b1 Նf2-d2
16. h2-h4! Նd2:d1+
17. Նh1:d1 Փg5:h4
18. Ձc3:d5 c6:d5
19. Նd1:d5 ...

Ընկավ սևերի պաշտպանական ամրոցի վերջին աշտարակը (d5 կետը): Պայքարի ելքը վճռված է:

Հնարավոր էր նաև 19. Փ:d5+ Աe7 20. Թ:h4+:

19. ... Թd8-g5
20. Նd5-d6++ Աe6-e7
21. Նd6-g6

Սևերը հանձնվեցին:

Չոկիլտյա - Նեժմետդինով
Բուխարեստ, 1954թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-c4 Ձg8-f6
4. Ձf3-g5 d7-d5
5. e4:d5 Ձc6-a5
6. Փc4-b5+ ...

Սպիտակները կինվոր են շահում, սակայն, զարգացումով հետ մնալով, զիջում են նախաձեռնությունը:

6. ... c7-c6
7. d5:c6 b7:c6
8. Փb5-e2 h7-h6
9. Ձg5-f3 e5-e4
10. Ձf3-e5 Թd8-c7
11. Ձe5-g4 ...

Ճիշտ կլիներ 11. d4-ը, քանի որ այժմ սպիտակները զարգացումով է՛լ ավելի են ետ մնում:

11. ... Փc8:g4!

Սևերը փղերից մեկին «հրաժեշտ» են տալիս, սակայն ժամանակ շահում, ինչն այս պահին ավելի կարևոր էր:

12. Փe2:g4 Փf8-c5
13. Փg4-e2 Նa8-d8
14. c2-c3? ...

Ֆիգուրի շահումով գայթակղված՝ սպիտակներն իրենց դիրքն են թուլացնում: Ճիշտ կլիներ փոխատեղում կատարել:

14. ... Ձa5-b7
15. 0-0 h6-h5!

Ուշադրությո՛ւն դարձրո՛ւ, որ սևերը փոխատեղումից կամավոր են հրաժարվում: Զարգացման կզալի առավելություն ունենալով՝ նրանք պատրաստվում են ողջ թափով արքայի դեմ գրոհել, իսկ այդ նպատակով անհրաժեշտ է նավակը h գծում պահպանել:

16. d2-d4 e4:d3
17. Փe2:d3 Ձf6-g4
18. Թd1-e2+ Աe8-f8! (դ.32)

Փոխատեղման իրավունքի կորուստը սարսափելի չէ՝ դրության տերը սևերն են:

32


19. g2-g3 Թc7-d7!

Գրոհելով փիղը՝ սևերը միաժամանակ g4-ի ձին են պաշտպանում: Դա նրանց h ուղղաձիգը բացելու և եզրափակիչ գրոհ ձեռնարկելու հնարավորություն է ընձեռում:

20. Փd3-e4 h5-h4
21. Փc1-f4 Ձg4:h2!

22. Նf1-e1 ...

Վերցնել ձին չէր կարելի՝ 22. Ա:h2 hg++-ից հետո արքան մատային ցանցում կհայտնվեր:

22. ... Զh2-g4
23. Փe4-f3 Զg4:f2

Իհարկե, հաղթանակի էր հանգեցնում նաև 23. ... Փ:f2+-ը, սակայն Նեժմետդինովը որոշում է խնդիրն ուղղակի գրոհի միջոցով վճռել:

24. Փf4-e3 h4:g3
25. Փe3:c5+ Զb7:c5
26. Փf3:c6 ...

Սպիտակների վերջին հույսն է: Փիղը վերցնել չի կարելի՝ 27. Թe7+-ի պատճառով:

26. ... Զf2-h3+
27. Աg1-f1 Թd7-f5+

Սպիտակները հանձնվեցին. 28. Փf3 g2+! 29. Թ:g2 (29. Ա:g2 Զf4+) 29. ... Զf4 30. Թg3 Նh3 31. Թf2 Զcd3-ից հետո սպառնալիքներն անկասելի կդառնային:

## ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՐՏԻԱ

1. e2-e4 e7-e5
2. Զg1-f3 Զg8-f6 (դ.33).

33


Սկզբնախաղն այս առաջին անգամ հետազոտել են Ա.Պետրովն ու Կ.Յանիշը դեռևս XIX դարի առաջին կեսերին: Այստեղից էլ անվանումը՝ *Ռուսական պարտիա* (կամ՝ *Պետրովի պաշտպանություն*):

Իրենց հերթին e4-ի զինվորը գրոհելով՝ սևերը կենտրոնում պարզեցումների են ձգտում՝ սահմանափակելով սպիտակների ակտիվ խաղի հնարավորությունները:

3. d2-d4 ...

Առավել եռանդուն շարունակությունն է: Հնարավոր էր և 3. Զ:e5, որին անհրաժեշտ էր պատասխանել 3. ... d6 (3. ... Զ:e4?՝ 4. Թe2), և 4. Զf3 Զ:e4-ից հետո սպիտակներին ակտիվ խաղ ծավալելը շատ դժվար կլիներ:

Պետրոսյան-Սպասսկի մրցամարտի (1969թ.) 13-րդ և 15-րդ պարտիաներում խաղացվեց 5. Թe2 Թe7 6. d3 Զf6 7. Փg5 Թ:e2+ 8. Փ:e2 Փe7 9. Զc3 c6 10. 0-0-0 Զa6, և սևերը (Բ.Սպասսկի) առանց մեծ ջանքերի ոչ-ոքիի հասան:

3. ... e5:d4

Հնարավոր էր և 3. ... Զ:e4 4. Փd3 d5: Զինվորը d5 հրապուրելով՝ սպիտակները e5 դաշտը զինվորով հսկելու հնարավորությունն են բացառում:
5. Զ:e5 Փd6. Ստացված համաչափ դիրքում սպիտակներին դժվար է իրենց առավելությունն ապացուցել: Համեմատաբար սուր խաղ էր խոստանում 5. ... Զd7 շարունակությունը (*տե՛ս Դոլմատով-Հակոբյան պարտիան*).

4. e4-e5 Զf6-e4
5. Թd1:d4 d7-d5



6. e5:d6 ...

Սպիտակները հարկադրված են կողանցիկ վերցնել ՝ սպառնում էր 6. ... Փc5:

6. ... Զe4:d6
7. Զb1-c3 Զb8-c6
8. Թd4-f4 ...

f4-ում թագուհին անխոցելի է և ակտիվ հարձակողական դիրք է զբաղեցնում, սակայն կենտրոնում զինվորների բացակայությունը հեշտացնում է պաշտպանությունը:

8. ... g7-g6
9. Փc1-d2 Փf8-g7
10. 0-0-0 Փc8-e6

Այնուհետև հնարավոր է 11. Զg5 Թf6 12. Թ:f6 Փ:f6 13. Զ:e6 fe 14. Նe1 Աd7 15. Զe4:

Սպիտակների դիրքը փոքրինչ գերադասելի է:

Դոլմատով - Վ.Հակոբյան
Երևան, 1988թ.

1. e2-e4 e7-e5
2. Զg1-f3 Զg8-f6
3. d2-d4 Զf6:e4
4. Փf1-d3 d7-d5
5. Զf3:e5 Զb8-d7
6. Զe5:d7 ...

Հնարավոր էր և 6. Զ:f7 Թe7 (6. ... Ա:f7 7. Թh5+ Աe7 8. Թe2 Աf7 9. Թh5+, ոչ-ոքի) 7. Թe2!? (7. Զ:h8՝ 7. ... Զc3+ 8. Աd2 Զ:d1 9. Նe1 Զ:f2 10. Փ:h7 Զe4+ 11. Ն:e4 de 12. Փg6+՝ հավասար հնարավորություններով. Ի.Զայցև-Կարպով, Լենինգրադ, 1966թ.) 7. ... Թ:f7 (7. ... Ա:f7՝ 8. Թh5+ Աf6 9. 0-0 Թf7 10. Թh4+ g5 11. Փ:g5+ Զ:g5 12. f4՝ սպիտակների բացահայտ առավելությամբ. Գուրգենիձե-Բելով, Թբիլիսի, 1977թ.) 8. f3 Զf6 9. 0-0 Թh5 10. fe Թ:e2 11. Փ:e2 Զ:e4: Դիրքը միանգամայն հավասար է:

6. ... Փc8:d7
7. 0-0 Թd8-h4

Սևերը մտադիր են երկար փոխատեղում կատարել և արքայի դեմ գրոհ ձեռնարկել: Սպիտակներին հապաղել չի կարելի:

8. c2-c4 0-0-0
9. c4-c5 g7-g5
10. Զb1-c3 Փf8-g7
11. g2-g3 ...

Սպիտակները ցանկանում են փիղը h1-a8 անկյունագիծ տեղափոխել, որտեղից այն և՛ սեփական արքայի պաշտպանությունը կհոգա, և՛ մրցակցի արքայի դեմ կազմակերպվող գրոհին կմասնակցի:

11. ... Թh4-h3
12. Զc3:e4 d5:e4
13. Փd3:e4 Փd7-b5!
14. Փc1:g5 (դ.34) ...

34


Երկուստեք սուր պայքար է ծավալվել: Մրցակիցներից բավականին ճշգրիտ խաղ է պահանջվում. օրինակ՝ 14. Նe1? Ն:d4 15. Թf3 Ն:e4! 16. Թ:e4 Փc6: Հավասար դիրքի էր հանգեցնում 14. Փg2!? Թf5 15. Թb3 c6

16. Նd1 (եթե 16. d5?, ապա 16. ... Փ:f1 17. dc Փa6!, և սևերը պետք է հաղթեն) 16. ... Ն:d4 17. Ն:d4 (17. Փc3? Փa4!) 17. ... Փ:d4 18. Փc3-ը:

14. ... Նd8:d4

Եթե 14. ... Փ:f1?, ապա 15. Փ:d8 Ն:d8 16. Թ:f1 Թ:f1+ 17. Ն:f1 Ն:d4 18. Փ:h7, և սպիտակները վճռորոշ նյութական առավելության կհասնեին:

15. Թd1-b3 ...

15. Թf3-ին նորից 15. ... Ն:e4! կհաջորդեր:

15. ... Նd4:e4
16. Թb3:b5 h7-h6!
17. Փg5-e3 ...

Պարտության կհանգեցներ 17. c6 hg 18. Թ:b7+ Աd8 19. Նad1+ Աe7 20. Թ:c7+ Աf6 21. Նd6+ Նe6-ը:

17. ... Նe4-h4!
18. Նf1-d1 ...

18. gh?-ին՝ 18. ... Փe5!:

18. ... Թh3:h2+
19. Աg1-f1 Թh2-h3+
20. Աf1-e1 ...

Չէր կարելի 20. Աe2՝ 20. ... Թg4+-ի պատճառով:

20. ... Նh4-e4
21. c5-c6! Նe4:e3+

Սևերը հարկադրված են ոչ-ոքիով բավարարվել:

22. f2:e3 Թh3:g3+
23. Աe1-e2 ...

Եթե 23. Աd2?, ապա 23. ... Նd8+!, և սևերը կհաղթեին:

23. ... Թg3-g2+
24. Աe2-e1 Թg2-g3+

Ոչ-ոքի:

## ԻՍՊԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԱ

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-b5 (դ.35) ...

35


Սկզբնախաղն այս դեռևս XV-XVI դարերից մեզ հասած՝ իսպանացի շախմատիստներ Լուսենայի և Լոպեսի աշխատություններում է հանդիպում: Հնագույններից մեկը լինելով՝ այն ներկայումս էլ լայն կիրառություն ունի: Դա բացատրվում է *Իսպանական պարտիայի* հարուստ և խորը բովանդակությամբ:

Սկզբնախաղում սպիտակները ձգտում են c2-c3 քայլից հետո առաջ մղելու կենտրոնական զինվորը՝ d2-d4, ի պատասխան՝ սևերը կարող են պաշտպանական տարբեր համակարգեր ընտրել:

*Իսպանական պարտիայի* համակարգերն ընդունված է երկու խմբի բաժանել. համակարգեր, որոնք առանց 3. ... a7-a6 քայլի են խաղարկվում, և համակարգեր, որտեղ սևերը կիրառում են այդ քայլը: Մենք կծանոթանանք դրանցից մի քանի հիմնականներին:



Ա. Համակարգեր՝ առանց 3. ... a7-a6 քայլի.

### ՅԱՆԻՇԻ ԳԱՄԲԻՏ

3. ... f7-f5

Հակագրոհային այս հետաքրքիր համակարգն ավելի քան հարյուր տարի առաջ Կ.Յանիշն է առաջարկել: Այն երկուստեք սուր ու բովանդակալից պայքար է խոստանում: Սպիտակների հնարավորությունները, թերևս, փոքր-ինչ գերադասելի են:

4. Ձb1-c3 ...

Ամենահաջող շարունակությունն է համարվում: Հնարավոր էր և 4. d3 fe 5. de Ձf6՝ մոտավորապես հավասար խաղով: Հետաքրքիր է 4. d4 fe 5. Ձ:e5 (5. Փ:c6 dc 6.Ձ:e5 Թh4!՝ հարուստ խաղով) 5. ... Ձ:e5 6. de c6 շարունակությունը, ինչն սպիտակներին ստիպում է կոհաբերության դիմել. 7. Ձc3!? (բայց ո՛չ 7. Փe2՝ 7. ... Թa5+, և սևերը զինվոր են շահում) 7. ... cb 8. Ձ:e4 d5 9. ed Ձf6 10. 0-0! ( 10. Թd4-ին լավ է 10. ... Փe7-ը), ապա՝ 10. ... Ձ:e4 11. Թh5+ g6 12. Թe5+ Աf7 13. Թ:h8 Թf6 14. Թ:h7+ Փg7, և բարդ, խճճված դիրք է ստացվում:

4. ... f5:e4
5. Ձc3:e4 ...

Այստեղ երկու հիմնական շարունակություններն են 5. ... d5-ը և 5. ... Ձf6-ը:

ա) 5. ... d7-d5
6. Ձf3:e5 ...

Հնարավոր էր 6. Ձg3 Փg4! 7. h3 Փ:f3 8. Թ:f3 Ձf6 9. d3 Փd6 10. Ձh5 0-0 11. Ձ:f6+ Թ:f6 12. Թ:f6 սպիտակների ոչ մեծ առավելությամբ (Ցեյտլին-Կուպրեյչիկ, 1969թ.):

6. ... d5:e4
7. Ձe5:c6 Թd8-d5

7. ... Թg5-ին սպիտակները կպատասխանեին 8. Թe2! և, 8. ... Ձf6 (իհարկե, ո՛չ 8. ... Թ:g2?՝ 9. Թh5+ Թg6 10. Ձe5+՝ հաղթանակով) 9. f4 Թ:f4 (կարելի էր և 9. ... Թh4+) 10. Ձ:a7+ Աd8 11. Ձ:c8, և 12. d4-ից հետո առավելություն կստանային:

8. c2-c4 Թd5-d6
9. Ձc6:a7+ ...

Բարդ և երկուստեք սուր պայքար էր խոստանում 9. c5!?-ը՝ 9. ... Թ:c5 10. Թa4 Ձf6 11. d4 Թb6!:

9. ... Փc8-d7
10. Փb5:d7+ Թd6:d7
11. Թd1-h5+ g7-g6

11. ... Աd8-ին կհաջորդեր 12. Թa5! Աe8 ( 12. ... b6՝ 13. Թa6) 13. d4! ed 14. Փe3՝ առավելությամբ:

12. Թh5-e5+ Աe8-f7
13. Ձa7-b5 c7-c6
14. Թe5-d4 (դ.36) ...

36


Եթե 14. Թ:h8, ապա 14. ... Ձf6 15. Ձc3 Նe8 16. b3 Փc5 17. Թ:c8+

Ա:e8 18. h3 Թ:d3, և սևերը հակախաղ կստանային:

Ստեղծված դիրքում (դ.36), շարունակելով 14. ... Թ:d4! 15. Ձ:d4 Փg7, սևերը զոհաբերած երկու զինվորի դիմաց բավարար փոխհատուցում են ստանում: Պինչուկ-Աղզամով պարտիայում (1964թ.) հետևեց. 16. Ձe2 Նa4 17. f3 Ն:c4 18. fe Ն:e4 19. d3 Նh4 20. 0-0+ Աe6 21. Փd2 Ն:b2, և մրցակիցները շուտով խաղաղ դաշն կնքեցին:

բ) 5. ... Ձg8-f6

Այս հինավուրց շարունակությունը ներկայումս երկրորդ երիտասարդությունն է ապրում:

6. Ձe4:f6+ ...

6. Թe2-ին կհաջորդեր 6. ... Թe7 7. 0-0 d5 8. Ձ:f6+ gf 9. d4 e4 10. Ձh4 f5 11. g3 Փg7՝ բավարար հակախաղով:

6. ... Թd8:f6
7. Թd1-e2 Փf8-e7
8. Փb5:c6 d7:c6!

Այժմ հնարավոր է 9. Թ:e5 Փg4! 10. Թ:f6 Փ:f6 11. Ձg1 0-0-0, կամ 9. Ձ:e5 Փf5 10. d3 0-0-0 11. 0-0 Փd6 12. d4 Նhe8 13. f4 Փ:e5! 14. de Թg6. երկու դեպքում էլ սևերը զոհաբերած զինվորի դիմաց գերազանց խաղ ունեն:

## ՍՏԵՅՆԻՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3. ... d7-d6

Պաշտպանության այս համակարգը սևերին հնարավորություն է ընձեռում դեռևս սկզբնախաղում մի շարք փոխանակությունների միջոցով թեթևայնելու պաշտպանությունը: Որպես արդյունք՝ սևերը ճնշված, սակայն ամուր դիրք են ստանում:

Պաշտպանության թերությունն այն է, որ սևերը կոմբինացիոն, ստեղծագործական խաղ ծավալելու առանձնապես մեծ հույսեր չեն փայփայում, և դիրքային պայքարում (իսկ խաղն ընդհանուր առմամբ այդպիսի բնույթ է ստանում) սպիտակները ոչ մեծ, սակայն կայուն առավելություն են պահպանում:

4. d2-d4 Փc8-d7
5. Ձb1-c3 ...

5. de-ին սևերը պետք է 5. ... de պատասխանեին. 5. ... Ձ:e5? շարունակությունը զինվորի կորստյան էր հանգեցնում 6. Ձ:e5 de (կամ 6. ... Փ:b5 7. Ձ:f7) 7. Թd5!:

5. ... e5:d4
6. Ձf3:d4 Ձg8-f6
7. 0-0 Փf8-e7

Սևերը թեթև ֆիգուրների փոխանակության միջոցով (Ձ:d4, և Փ:b5) կփորձեն խաղը պարզեցնել:

Սպիտակները կարող են խույս տալ պարզեցումներից՝ 8. Ձde2, կամ 8. Փ:c6 bc 9. Փf4! 0-0 10. e5 Ձe8 11. Թf3 (կամ 11. Նe1):

Բ. Համակարգեր՝ 3. ... a7-a6 քայլով.

## ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

3. ... a7-a6
4. Փb5:c6 d7:c6
5. Ձb1-c3 ...



5. Ձ:e5-ից հետո սևերը 5. ... Թd4-ի միջոցով զինվորը հետ կբերեին:

Ներկայումս հաճախ 5. 0-0 է հանդիպում, որին կարելի է ինչպես 5. ... f6, այնպես էլ՝ 5. ... Թd6 պատասխանել:

5. ... f7-f6
6. d2-d4 e5:d4
7. Թd1:d4 Թd8:d4
8. Ձf3:d4 Փc8-d7
9. Փc1-e3 0-0-0
10. 0-0-0 Փf8-d6

Փոխանակման տարբերակում սպիտակները գերազանց զինվորային շղթա են պահպանում, սակայն սևերի զույգ փղի առկայությունը հավասարեցնում է կողմերի հնարավորությունները:

## ՍՏԵՅՆԻՑԻ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

3. ... a7-a6
4. Փb5-a4 d7-d6

Վաղաժամ էր 4. ... b5-ը, քանի որ 5. Փb3-ից հետո սևերը չէին կարող 5. ... Ձf6 խաղալ՝ 6. Ձg5-ի պատճառով:

5. c2-c3 ...

Հնարավոր էր և 5. d4 b5 6. Փb3 Ձ:d4 7. Ձ:d4 ed, և եթե 8. Թ:d4?, ապա 8. ... c5 9. Թd5 Փe6 10. Թc6+ Փd7 11. Թd5 c4, և սևերը ֆիգուր կշահեին: Սակայն, 8. Թ:d4-ի փոխարեն՝ կարելի էր շարունակել. 8. Փd5 Նb8 9. Թ:d4, կամ, գամբիտային ոճով, 8. c3 dc 9. Ձ:c3՝ սպիտակները զինվորի դիմաց նախաձեռնություն կստանային:

Երբեմն հանդիպում է 5. Փ:c6+ bc 6. d4, որին ճիշտ է պատասխանել 6. ... f6՝ ամրապնդելով կենտրոնական e5 զինվորը:

5. ... Փc8-d7
6. d2-d4 Ձg8-f6

Որպես այլընտրանք՝ հնարավոր էր g8-ի ձին e7 դաշտում զարգացնել՝ հետագայում g6 տեղափոխելով. 6. ... Ձge7 7. Փb3! h6 (սպառնում էր 8. Ձg5) 8. 0-0 Ձg6 9. Փe3 Փe7 10. Ձbd2 0-0: Սպիտակները տարածքային առավելություն ունեն, մինչդեռ սևերի դիրքը բավականին ամուր է:

7. 0-0 Փf8-e7

Կարելի էր և 7. ... Ձ:e4 8. Նe1 Ձf6 9. Փ:c6 Փ:c6 10. de de 11. Թ:d8+ Ն:d8 12. Ձ:e5 Փe4 13. Ձd2 Փe7 14. Ձ:e4 Ձ:e4 15. Փh6 gh 16. Ն:e4 0-0 17. Ձc6 bc 18. Ն:e7 Նd2 19. Ն:c7 Նfd8, 20. ... Ն:b2. դիրքը հավասար է:

8. Ձb1-d2 0-0
9. Նf1-e1 Փd7-e8

Վերջին տարիների փորձն ապացուցում է, որ 9. ... ed 10. cd Ձb4 11. Փ:d7 Թ:d7 12. Ձf1 c5 13. a3 Ձc6 14. d5 Ձe5 15. Ձg3-ը, սպիտակներին հարուստ խաղ է խոստանում:

10. Ձd2-f1 Ձf6-d7
11. Ձf1-g3 f7-f6

Ստացվեց, այսպես կոչված, *Կեչկեմետյան տարբերակի* կառուցվածքը: Սևերը փոքր-ինչ ճնշված դիրք ունեն:

## ԲԱՑ ՏԱՐԲԵՐԱԿ

3. .. a7-a6
4. Փb5-a4 Ձg8-f6
5. 0-0 Ձf6:e4

Սուր տարբերակ է: Այս արագ բաց դիրքն օգտագործելով՝

սպիտակները հեշտությամբ հետ են շահում փինվորը:

Սևերը կարող են պահպանել հավասարակշռությունը, սակայն անհրաժեշտ է կշռադատված խաղալ:

6. d2-d4 ...

Եթե 6. Նe1, ապա կարող էր հաջորդել 6. ... Ձc5 7. Ձ:e5 Փe7 8. Ձc3 0-0 9. Փ:c6 dc, և սևերը հարմար խաղ կունենային:

6. ... b7-b5

Համարվում էր, որ 6. ... ed 7. Նe1 d5 8. Ձ:d4 շարունակությունը (*Ռիգայի տարբերակ*) սևերի համար վտանգավոր է, քանի որ հավերժական շախ հայտարարելու փորձը՝ 8. ... Փd6 9. Ձ:c6 Փ:h2+, անհաջողություն է մատնվում. 10. Աh1 (10. Ա:h2 Թh4+-ից հետո, իրոք, հավերժական շախ կստացվեր) 10. ... Թh4 11. Փg5?! Թ:g5 12. Թ:d5! Թ:d5 13. Ձb4+, և սպիտակները պահպանում են նյութական առավելությունը: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց՝ 13. ... Աd8! 14. Ձ:d5 Փe5!-ից (կամ 14. ... Ձc5-ից) հետո սևերը բացահայտ առավելության են հասնում: Իսկ ահա 11. Ն:e4+ de 12. Թd8+ Թ:d8 13. Ձ:d8+ Ա:d8 14. Ա:h2 տարբերակում սպիտակները ոչ մեծ առավելություն են պահպանում:

7. Փa4-b3 d7-d5

8. d4:e5 Փc8-e6

9. c2-c3 ...

Կերեսի առաջարկած 9. Թe2-ին սևերը կարող են 9. ... Փc5 10. Փe3 Թe7 11. Նd1 Նd8 շարունակությունն ընտրել:

9. ... Փf8-e7

Երկուստեք սուր դիրքերի էր հանգեցնում 9. ... Փc5 քայլը:

10. Ձb1-d2 0-0

Այս դիրքում, որն ավելի շուտ սպիտակների համար է բարենպաստ, լավագույն շարունակություններն են 11. Փc2-ը կամ 11. Թe2-ը՝ նպատակ ունենալով սևերին ստիպել ձիերը փոխանակելու կամ ձին c5 դաշտը հեռացնելու:

## ԳԼԽԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

3. ... a7-a6

4. Փb5-a4 Ձg8-f6

5. 0-0 ...

Սպիտակները պատրաստվում են նավակով e4-ի փինվորը պաշտպանել: Հնարավոր էին նաև 5. Ձc3, 5. d3 քայլերը, սակայն դրանք սպիտակների հիմնական ծրագրին չէին համապատասխանում, որն, ինչպես գիտես, c2-c3 և d2-d4 առաջխաղացմամբ է պայմանավորվում:

5. ... Փf8-e7

6. Նf1-e1 ...

Հնարավոր էր 6. Թe2 b5 7. Փb3 0-0 9. c3 d5 (Պ.Շլեխտերի քայլը), որը հետաքրքիր հակագրոհ է խոստանում: Այժմ սպիտակները երկու հիմնական շարունակություն ունեն՝ 9. ed, և 9. d3.

ա) 9. ed Փg4 (Պ.Կերեսի քայլն է. ավելի թույլ էր 9. ... Ձ:d5-ը՝ 10. Ձ:e5 Ձf4 11. Թe4 Ձ:e5 12. d4!) 10. dc e4 11. d4 ef 12. gf Փh5, և երկու փինվորի դիմաց սևերն ուժեղ գրոհի հնարավորություն կստանան:

բ) 9. d3 d4 10. cd (բարդ և երկուստեք սուր խաղ ստանալու հնարավորություն էր ընձեռում 10. Ձbd2-ը՝ հետագա Նf1-d1, և Ձd2-f1-g3-ով) 10. ... Ձ:d4 11. Ձ:d4 Թ:d4 12. Փe3 Թd6, և կողմերի հնարավորությունները մոտավորապես հավասար են:

6. ... b7-b5

7. Փa4-b3 ...

Ստացված դիրքում սևերը կարող են ընտրություն կատարել 7. ... d7-d6-ի, որը *Չիգորինի համակարգին* է հանգեցնում, և 7. ... 0-0-ի միջև, որից հետո *Մարշալի գրոհ* կոչվող՝ երկուստեք սուր տարբերակն է ստացվում:

## ՉԻԳՈՐԻՆԻ ՀԱՄԱԿԱՐԳ

(1. e4 e5 2. Ձf3 Ձc6 3. Փb5 a6 4. Փa4 Ձf6 5. 0-0 Փe7 6. Նe1 b5 7. Փb3)

7. ... d7-d6

8. c2-c3 0-0

9. h2-h3 ...

Եթե միանգամից 9. d4, ապա 9. ...Փg4 (սպառնում է 10. ... Փ:f3) 10. d5 Ձa5 11. Փc2 c6! 12. dc Ձ:c6 13. Ձbd2 b4!, և սևերը հակախաղ կստանային:

9. ... Ձc6-a5

Այստեղ կիրառվում է և հունգարացի վարպետ Բրեյերի քայլը՝ 9. ... Ձb8՝ նպատակ ունենալով 10. d4-ին՝ 10. ... Ձbd7 պատասխանել:

10. Փb3-c2 c7-c5

11. d2-d4 ...

Երբեմն հանդիպում է և 11. d3-ը, որպեսզի թագուհու թևի ֆիգուրները զարգացնելուց հետո միայն d4 խաղայվի:

11. ... Թd8-c7

12. Ձb1-d2 ...

Չիգորինի համակարգի հիմնական դիրքն է: Սպիտակները կենտրոնում բացարձակ տիրապետության են ձգտում կամ աշխատում են գոնե հսկել այն, որպեսզի, արքայական թևում ստիճանաբար ուժեղացնելով ճնշումը, ֆիգուրների ու փինվորների համատեղ գրոհ ձեռնարկեն: Այդ նպատակով կարևոր է ձիու դասական՝ Ձb1-d2-f1-e3 (կամ g3՝ նայած կոնկրետ դիրքը) խուսանավումը: Ձին ձգտում է f5 թափանցել ու սև արքայի դիրքը գրոհել, կամ d5 ներխուժել, որպեսզի հարկադրական փոխանակությունից հետո b1-h7 անկյունագիծը բացվի, ինչը գրոհի համար անչափ կարևոր է, և միևնույն ժամանակ սև e5 փինվորը նավակի հարվածի տակ հայտնվի: Սևերն էլ, իրենց հերթին, փորձում են հակադրվել դրան՝ կենտրոնում հսկողություն սահմանել և թագուհու թևում հակագրոհ ձեռնարկել: Օրինակ՝ d4:e5-ի դեպքում նրանք կարող են d գծով մարտավարական գործողություններ ծավալել կամ, բացելով c ուղղաձիգը (c5:d4), հենց c գծով սպառնալիքներ ստեղծել:

## ՄԱՐՇԱԼԻ ՀԱԿԱԳՐՈՀ

(1. e4 e5 2. Ձf3 Ձc6 3. Փb5 a6 4. Փa4 Ձf6 5. 0-0 Փe7 6. Նe1 b5 7. Փb3)

7. ... 0-0

Շտապ փոխատեղումը, չիգորինյան 7. ... d6-ի փոխարեն, գամբիտի նախապատրաստություն է, ինչն այս հարյու-

րամյակի սկզբին ԱՄՆ-ի բազմակի չեմպիոն Ֆ.Մարշալն է կիրառել:

8. c2-c3   d7-d5

Այս քայլն է բնորոշում *Մարշալի հակագրոհը*:

9. e4:d5   ...

Այժմ սևերը կարող են ընտրություն կատարել 9. ... Ձf6:d5-ի, որը Մարշալի մտահղացումն էր, և 9. ... e5-e4-ի միջև, որը շատ ավելի սուր դիրքի է հանգեցնում:

Հենց այս կարգով էլ ենք ուսումնասիրենք.

Ա.

9. ...   Ձf6:d5
10. Ձf3:e5   Ձc6:e5
11. Նe1:e5   c7-c6

11. ... Ձf6 շարունակությանը կհանդիպես Կապաբլանկա-Մարշալ պարտիայում:

12. d2-d4   ...

Տեսաբաններից ոմանք նախընտրում են 12. d3-ը. օրինակ՝ 12. ... Փd6 13. Նe1 Փf5 14. Փ:d5 cd 15. Ձd2 Փ:d3 16. Թf3՝ մոտավորապես հավասար հնարավորություններով:

12. ...   Փe7-d6
13. Նe5-e1   Թd8-h4
14. g2-g3   Թh4-h3
15. Փc1-e3   Փc8-g4
16. Թd1-d3   Նa8-e8
17. Ձb1-d2   Նe8-e6
18. a2-a4   f7-f5!

Հնարավոր էր և 18. ... Թh5 19. ab ab 20. c4 Ձ:e3 21. Ն:e3 Փe2! 22. Թc2 Նh6 23. h4 Փf4!՝ վտանգավոր սպառնալիքներով:

19. Թd3-f1   Թh3-h5
20. f2-f4   b5:a4!
21. Նa1:a4   Նf8-b8
22. Փb3:d5   c6:d5
23. Թf1-g2   Թh5-e8
24. Թg2:d5   Աg8-h8.

Այստեղ 25. Աf2 g5 26. Ն:a6 (ո՛չ 26. h3՝ 26. ... gf 27. gf Փe7!) 26. ... Ն:b2 27. Նa2 gf 28. gf Ն:a2! 29. Թ:a2 Փ:f4! 30. Ձf1 Նe4-ը բարդ և երկուստեք սուր դիրքի է հանգեցնում, որտեղ, ըստ Մ.Տալի, սևերը պինվորի դիմաց բավարար փոխհատուցված են:

Բ.

9. ...   e5-e4

Այս շարունակությունը երկու պինվորի կոհաբերության հետ է առնչվում և արտակարգ սուր դիրքի է հանգեցնում:

10. d5:c6   ...

Ամենահաջող շարունակությունն է: Չպարզաբանված բարդություններ կառաջանային 10. Ձg5-ից հետո:

10. ...   e4:f3
11. d2-d4   ...

Ծանր պաշտպանություն կպահանջվեր 11. Թ:f3 Փg4 12. Թg3 Նe8 13. d4 Փd6 14. Ն:e8+ Թ:e8 15. Թe3 Թ:c6 տարբերակում, քանի որ բոլոր սև ֆիգուրները պատրաստ կլինեին գրոհի:

11. ...   Փe7-d6

Եթե 11. ... Փg4, ապա 12. gf Փh5 13. Փf4 Փd6 14. Փg3, և սպիտակներն ամուր դիրքում նաև նյութական առավելություն կպահպանեին:

12. Փc1-g5   Փd6:h2+
13. Աg1:h2   Ձf6-g4+
14. Աh2-g1   Թd8:g5
15. Թd1:f3   ...

Սպառնում է 16. Թ:f7+:

15. ...   h7-h5



16. Ձb1-a3   ...

Սպիտակները գերադասելի դիրքում նաև պինվորի առավելություն են պահպանում:

Ռոդրիգես - Բարրերաս
Սյենֆուեգոս, 1979թ.

1. e2-e4   e7-e5
2. Ձg1-f3   Ձb8-c6
3. Փf1-b5   f7-f5
4. Ձb1-c3   f5:e4
5. Ձc3:e4   d7-d5
6. Ձf3:e5   d5:e4
7. Ձe5:c6   Թd8-d5
8. c2-c4   Թd5-d6
9. Թd1-h5+!?   ...

Ինչպես արդեն տեսանք՝ ամենահաջող շարունակությունն այստեղ 9. Ձ:a7+-ն էր:

9. ...   g7-g6
10. Թh5-e5+   Թd6:e5
11. Ձc6:e5+   c7-c6
12. Փb5-a4   Փf8-g7
13. d2-d4   e4:d3
14. Փc1-f4   g6-g5!? (դ.37)

Ինչպես պայքարի հետագա ընթացքն է ապացուցում՝ այս քայլը սևերին հակախաղի հնարավորություն է ընձեռում:

37


15. Փf4-g3   Փc8-f5
16. 0-0-0   ...

Հնարավոր է՝ ճիշտ կլիներ ավելի պուսպ 16. 0-0-ով բավարարվել:

16. ...   Նa8-d8
17. Նh1-e1   Ձg8-e7
18. Նe1-e3   ...

18. Փb3-ին կարող էր 18. ... g4! հետևել:

18. ...   Նd8-d4
19. Ձe5:d3   ...

Եթե 19. Փb3, ապա 19. ... g4 20. f4 gf 21. gf Փh6 22. f4 Ն:f4!, և սևերը կստանձնեին նախաձեռնությունը:

19. ...   Նd4:c4+
20. Փa4-c2   Աe8-f7
21. Աc1-d2!   ...

Սպիտակները պետք է զգույշ գործեն: Օրինակ՝ 21. Աb1 Նd8! 22. Փb3 b5! 23. Աa1 Աf8, և նրանք ճնշված դիրքում կհայտնվեին:

21. ...   Նc4-d4.

Ավելի թույլ էր 21. ... Նd8-ը՝ 22. Փb3 b5 23. Աe2՝ ակնհայտ առավելությամբ:

22. Աd2-e2   Նh8-d8

Սակայն ո՛չ 22. ... Ձd5?՝ 23. Ձe5+ Փ:e5 24. Ն:e5՝ հաղթանակով:

23. Փc2-b3+   Աf7-g6
24. Ձf3-e5+   Փg7:e5
25. Նe3:e5   Նd4:d1
26. Փb3:d1   Փf5-d3+
27. Աe2-e1   Ձe7-f5
28. Փd1-b3   Ձf5:g3
29. Նe5-e6+   ...

Դիրքը պարզվեց: Սպիտակները նախաձեռնությունը վերցնելու վերջին ճիգերն են գործադրում: Սակայն սևերը հստակ պաշտպանությամբ ոչ-ոքիի են հասնում:

29. ...   Աg6-g7

Իհարկե, վատ էր 29. ... Աf7-ը՝ 30. Ն:c6+! Աf8 31. Նf6+, և այլն:

30. Նc6-e7+ Աg7-f6
31. Նe7-e6+ Աf6-g7
32. Նe6-e7+ Աg7-f6
33. Նe7-f7+ Աf6-g6
34. h2:g3 Նd8-e8+
35. Աe1-d1 Փd3-e2+
36. Աd1-c1 Փe2-a6!
37. g3-g4 Նc8-e4
38. Փb3-c2 Աg6:f7
39. Փc2:e4 h7-h6
40. Աc1-d2 Աf7-f6

Ոչ-ոքի:

Սմիսլով - Էյվե
Հաագա, 1948թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-b5 a7-a6
4. Փb5-a4 Ձg8-f6
5. 0-0 Ձf6:e4
6. d2-d4 b7-b5
7. Փa4-b3 d7-d5
8. d4:e5 Փc8-e6
9. Թd1-e2 Ձe4-c5

Հավասար խաղի էր հանգեցնում 9. ... Փe7 10. Նd1 0-0 11. c4 bc 12. Փ:c4 Փc5 13. Փe3 Փ:e3 14. Թ:e3 Թb8 15. Փb3 Ձa5 16. Ձbd2 Թa7 շարունակությունը:

10. Նf1-d1 Ձc5:b3
11. a2:b3 Թd8-c8 (դ.38)

38


Սևերը վերացրեցին b3-ի փիղը և թագուհին հեռացրին d ուղղաձիգից:

12. c2-c4! ...

Սևերին ոչինչ չի մնում, քան՝ ընդունել զոհաբերությունը:

12. ... d5:c4
13. b3:c4 Փe6:c4
14. Թe2-e4 ...

Թագուհին կենտրոնում հարմար դիրք գրավեց:

14. ... Ձc6-e7

14. ... Թc6-ին կհաջորդեր 15. Նd6! Փ:d6 16. Թ:c6+ Աe7 17. ed+, իսկ 14. ... Ձb4-ին՝ 15. Փg5!՝ 16. Նd8+ սպառնալիքով:

15. Ձb1-a3! ...

Այս քայլը, ըստ երևույթին, Մ.Էյվեն չէր սպասում:

15. ... c7-c6

15. ... Փb3-ին կհաջորդեր 16. Նd3 Փe6 17. Ձ:b5 Փf5 18. Ձ:c7+:

16. Ձa3:c4 b5:c4
17. Թe4:c4 ...

Սպիտակները վերականգնեցին նյութական հավասարակշռությունը և շարունակում են գրոհը՝ կենտրոնում մնացած արքայի դեմ:

17. ... Թc8-b7

17. ... Թe6-ին հնարավոր էր հետևյալ կոմբինացիան. 18. Ն:a6! Թ:c4 19. Ն:a8+ Ձc8 20. Ն:c8+ Աe7 21. Նc7+ Աe6 22. Ն:c6+, և ապա՝ ձիով ճանկառք արքային ու թագուհուն:

18. e5-e6! f7-f6
19. Նd1-d7 Թb7-b5
20. Թc4:b5 c6:b5

Սևերը կարգայումով հետ են մնացել և ի վիճակի չեն պաշտպանելու թագուհու թևի թույլ պինվորները:



21. Ձf3-d4 ...

Սպառնում է 22. Ձ:b5:

21. ... Նa8-c8
22. Փc1-e3 Ձe7-g6
23. Նa1:a6 Ձg6-e5
24. Նd7-b7 Փf8-c5
25. Ձd4-f5 0-0

Եթե 25. ... Փ:e3, ապա 26. Ձd6+:

26. h2-h3!

Սևերը հանձնվեցին. 26. ... g6-ին կհաջորդեր 27. Ձh6+ Աh8 28. Փ:c5 Ն:c5 29. Նaa7՝ h7 դաշտից անկասելի մատային սպառնալիքով:

Կապաբլանկա - Մարշալ
Նյու Յորք, 1918թ.

1. e2-e4 e7-e5
2. Ձg1-f3 Ձb8-c6
3. Փf1-b5 a7-a6
4. Փb5-a4 Ձg8-f6
5. 0-0 Փf8-e7
6. Նf1-e1 b7-b5
7. Փa4-b3 0-0
8. c2-c3 d7-d5
9. e4:d5 Ձf6:d5
10. Ձf3:e5 Ձc6:e5
11. Նe1:e5 Ձd5-f6

Նեդելկովիչ-Գելլեր պարտիայում (1957թ.) խաղացվեց 11. ... Ձb6 12. d4 Փd6 13. Փg5 Թd7 14. Նe1 Փb7 15. Ձd2 Նae8 16. f3: Վերջին քայլի փոխարեն՝ ճիշտ կլիներ 16. Թh5-ը՝ 16. ... Թf5 17. Ձf1! h6 18. Ն:e8 Ն:e8 19. Ձe3 Ն e3 20. fe՝ սպառնալով 21. Նf1:

12. Նe5-e1 ...

Ներկայումս ամենահաջող շարունակությունն է համարվում 12. Նe2-ը (կամ 12. d4 Փd6 13. Նe2 )՝ 12. ... Փd6 13. d4 Փb7 14. Ձd2 Թd7 15. Ձf1, կամ 13. ... Ձg4 14. h3 Թh4 15. Ձd2, կամ 13. ... Ձh5 14. Թd3 Թh4 (14. ... Թf6՝ 15. Փd5) 15. g3:

12. ... Փe7-d6
13. h2-h3 Ձf6-g4!?

Այս զոհաբերությունը Ֆ.Մարշալը հենց Խ-Ռ.Կապաբլանկայի՛ հետ հանդիպման համար էր նախապատրաստել: Կարելի էր 13. ... Փb7 14. d4 Թd7 համեմատաբար հանգիստ շարունակությունն ընտրել:

14. Թd1-f3! ...

Կապաբլանկան «նվերը» չի ընդունում՝ նկատելով, որ 14. hg Թh4 15. Թf3-ից հետո սևերը գեղեցիկ հաղթանակ կտանեին՝ 15. ... Փh2+! 16. Աf1 Փ:g4 17. Թe4 Փf4! 18. g3 Թh2!, կամ 16. Աh1 Փ:g4 17. Թ:g4 Թ:g4 18. Ա:h2 Նae8:

14. ... Թd8-h4
15. d2-d4 ...

Եթե 15. Նe8, ապա 15. ... Փb7 16. Ն:f8+ Ն:f8 17. Թ:g4 Նe8 18. Աf1 Թe7 19. Փe6 Փd5՝ սևերի դիրքը գերադասելի կլիներ:

15. ... Ձg4:f2! (դ.39)

39


16. Նe1-e2 ...

Չէր կարելի 16. Թ:f2?՝ 16. ...

Փh2+! (բայց ո՛չ 16. ... Փg3??՝ 16. Թ:f7+!-ի պատճառով) 17. Աf1 Փg3 18. Թe2 Փ:h3 19. gh Նae8, և սևերը կհաղթեին: Պարտիայում կատարված քայլից ուժեղ կլինեը 16. Փd2-ը, որը կարգելեր ինչպես 16. ... Ձg4-ը՝ կհաջորդեր 17. Նe4!, այնպես էլ՝ 16. ...Փg3-ը՝ 17. Թ:f7+: 16. ... Փ:h3 (Արոնին-Դեմուրիա, 1957թ.) 17. gh Ձ:h3+ 18. Աf1 g5 19. Նe4 Փf4 20. Փ:f4 Ձ:f4 21. Ձd2 Նad8 22. Ն:f4 gf 23. Ձe4-ից հետո սպիտակները հաղթանակ տարան: Դոնի Ռոստով-Պենզա քաղաքների միջև կայացած պարտիայում (1958թ.) սևերն ընտրեցին 16. ... Փb7 շարունակությունը, սակայն 17. Թ:b7 Ձd3 (կամ 17. ... Թg3 18. Թf3 Ձ:h3+ 19. Աf1) 18. Նe2! Թg3 19. Աf1 Թh2 20. g4 Թ:h3+ 21. Թg2-ից հետո սպիտակները հաղթում են:

| | |
|---|---|
| 16. ... | Փc8-g4 |

Կապաբլանկան այս քայլը գրոհի ամենահաջող շարունակությունն է համարել, բայց չգիտես ինչու չի քննարկել հանդարտ 16. ... Ձg4-ը, որը խաղը հավասարեցնելու հնարավորություն էր ընձեռում. օրինակ՝ 17. Նe8 (վատ էր 17. Թ:a8-ը՝ 17. ... Թg3 18. hg Թh2+ 19. Աf1 Փg3 20. Փe3 Թh1+ 21. Փg1 Փh2 22. Աe1 Թ:g1+ 23. Աd2 Փf4+, իսկ 17. Փf4-ին՝ 17. ... Փb7 18. Թf1 Ձf6 19. Փ:d6 cd՝ հավասար հնարավորություններով) 17. ... Ձf6 18. Ն:f8+ Ա:f8 19. Ձd2: Սակայն Մարշալը ոչ-ոքիի չէր ձգտում: Եվ դա էր պատճառը, որ նա հրաժարվեց ձիով նահանջելուց:

| | |
|---|---|
| 17. h3:g4 | ... |

Չէր կարելի 17. Թ:f2?, որին կհաջորդեր 17. ... Փg3 18. Թf1 Փ:e2 19. Թ:e2 Նae8՝ հաղթանակով:

| | |
|---|---|
| 17. ... | Փd6-h2+ |
| 18. Աg1-f1 | Փh2-g3 |
| 19. Նe2:f2 | Թh4-h1+ |
| 20. Աf1-e2 | Փg3:f2 |

Ճակատագրական սխալ: Ճիշտ կլիներ 20. ... Թ:c1-ի միջոցով պահպանել լարվածությունը. օրինակ՝ 21. Փ:f7+ Աh8 22. Նf1 Թc2+ 23. Ձd2 Նae8+ 24. Փ:e8 Ն:e8+ 25. Թe3 Ն:e3+ 26. Ա:e3 g5, կամ 21. Թ:g3 Թ:b2+ 22. Աd3 Թ:a1 23. Աc2 b4, և երկու դեպքում էլ երկար ու դժվարին պայքար էր սպասվում: Պարտիայում կատարված քայլից հետո դիրքը պարզվում է՝ հօգուտ սպիտակների:

| | |
|---|---|
| 21. Փc1-d2! | Փf2-h4 |
| 22. Թf3-h3 | Նa8-e8+ |
| 23. Աe2-d3 | Թh1-f1+ |
| 24. Աd3-c2 | Փh4-f2 |
| 25. Թh3-f3 | Թf1-g1 |

Եթե 25. ... Նe2, ապա 26. a4! Թe1 27. ab!, և չի կարելի 27. ... Փe3՝ 28. Թ:e3-ի պատճառով:

| | |
|---|---|
| 26. Փb3-d5 | c7-c5 |
| 27. d4:c5 | Փf2:c5 |
| 28. b2-b4 | Փc5-d6 |
| 29. a2-a4 | a6-a5 |
| 30. a4:b5 | a5:b4 |
| 31. Նa1-a6 | b4:c3 |
| 32. Ձb1:c3 | Փd6-b4 |
| 33. b5-b6 | Փb4:c3 |
| 34. Փd2:c3 | h7-h6 |
| 35. b6-b7 | Նe8-e3 |
| 36. Փd5:f7+ | |

Եվ սպիտակները հինգ քայլից մատ հայտարարեցին (*մատ*):



# ԿԻՍԱԲԱՑ ՍԿԶԲՆԱԽԱՂԵՐ

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 1. e2-e4 | e7-e6 |
| 2. d2-d4 | d7-d5 (դ.40) |

40 

1834-1836թ.թ. Լոնդոն և Փարիզ քաղաքների միջև նամակագրությամբ խաղ անցկացվեց, որտեղ մրցակիցներն սկզբնախաղն այսպես կարգավորեցին (դ.40): Պարտիան ավարտվեց ֆրանսիացիների հաղթանակով: Այստեղից էլ անվանումը՝ *Ֆրանսիական պաշտպանություն*:

Հետաքրքիր և ներկայումս էլ լայն կիրառություն ունեցող այս սկզբնախաղում սևերը, թեև մի փոքր ճնշված, բայց բավական ամուր դիրք են ստանում: Սկզբնախաղի թերությունն այն է, որ որոշ տարբերակներում c8-ի փիղը փակված է մնում, և այն կարգավորելը դժվար է լինում: Սակայն ակտիվ խաղը կենտրոնում և թագավորի թևում, կազմված c7-c5 առաջխաղացման հետ, սևերին հակախաղի լավ հնարավորություն է ընձեռում:

e4-ի զինվորը կարելի է փոխանակել՝ խաղալով 3. e4:d5. կարելի է այն առաջ շարժել՝ 3. e4-e5, ինչպես և պաշտպանել՝ 3. Ձb1-c3, կամ 3. Ձb1-d2: Սպիտակների այս քայլի ընտրությունից կախված՝ *Ֆրանսիական պաշտպանության* չորս հիմնական տարբերակն է ձևավորվել:

### Ա. ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

| | |
|---|---|
| 3. e4:d5 | e6:d5 |

Համաչափ դիրք է ստացվում, որտեղ կողմերին առավելության հասնելը դժվար է:

| | |
|---|---|
| 4. Փf1-d3 | Ձb8-c6 |
| 5. c2-c3 | Փf8-d6 |
| 6. Թd1-f3 | Փc8-e6 |
| 7. Ձg1-e2 | Թd8-d7 |
| 8. Փc1-f4 | Ձg8-e7 |
| 9. Փf4:d6 | Թd7:d6 |
| 10. Թf3-g3 | Թd6:g3 |

Խաղը հավասար է:

### Բ. ՏԱՐԲԵՐԱԿ՝ 3. e4-e5 ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՄԲ

| | |
|---|---|
| 3. e4-e5 | c7-c5! |
| 4. c2-c3 | Թd8-b6! |

Այս քայլին հատուկ ուշադրություն դարձրե՛ք: Սևերը d4-ի վրա ճնշումը մեծացնելով՝ b2-ի զինվորն են միաժամանակ գրոհում՝ սահմանափակելով սպիտակների թագուհու թևի զարգացումը: Թագուհու վաղաժամ զարգացումն այս դեպքում արդարացված է, առավել ևս, որ b6 դաշտում սպիտակները չեն կարող նրան անհանգստացնել:

5. Ձg1-f3 Ձb8-c6
6. a2-a3 ...

Հաջող չէր 6. b3-ը՝ 6. ... cd 7. cd Փb4+ 8. Փd2 Ձ:d4:

Այժմ սպիտակները ճնշումից ազատվելու համար մտադիր են 7. b4 խաղալ: Սևերը խանգարում են դրան:

6. ... a7-a5
7. Փf1-d3 ...

Փիղը կարգավորելուց բացի՝ սպիտակները նաև ծուղակ են նախապատրաստել. եթե 7. ... cd 8. cd Ձ:d4? 9. Ձ:d4 Թ:d4??, ապա 10. Փb5+՝ շահելով թագուհին:

7. ... Փc8-d7
8. 0-0! ...

Զինվորը նախաձեռնություն ստանձնելու նպատակով է զոհաբերվում:

8. ... c5:d4
9. c3:d4 Ձc6:d4
10. Ձf3:d4 Թb6:d4
11. Ձb1-c3 Թd4-b6

Վտանգավոր էր երկրորդ զինվորը վերցնելը՝ 11. ... Թ:e5 12. Նe1 Թd6 13. Ձb5, և սպիտակներն ուժեղ գրոհ ձեռնարկելու հնարավորություն կստանային:

12. Թd1-e2 ...

Սպիտակները զոհաբերած զինվորի դիմաց նախաձեռնություն ստացան:

### Գ. ՆԻՄՑՈՎԻՉԻ ՏԱՐԲԵՐԱԿ

3. Ձb1-c3 Փf8-b4

Կարելի էր և 3. ... Ձf6:

4. e4-e5 c7-c5
5. a2-a3 Փb4:c3+
6. b2:c3 Ձg8-e7
7. a3-a4 Ձb8-c6
8. Ձg1-f3 Թd8-a5

Բարդ դիրք է: 9. Փd2-ին կարելի է 9. ... c4 պատասխանել, իսկ 9. Թd2-ին, շարունակելով 9. ... Փd7, 10. ... Նc8, թագուհու թևում հակախաղի հնարավորություն ստանալ:

### Դ. ՏԱՐԱՇԻ ՏԱՐԲԵՐԱԿ

3. Ձb1-d2 c7-c5!

Չնայած այս դեպքում սևերը մեկուսացված զինվոր են ստանում՝ այնուամենայնիվ, սա ամենահաջող շարունակությունն է, քանի որ սևերին հաջողվում է խաղը պարզեցնել և կարգավորումը հանգիստ ավարտել:

Հնարավոր էր և 3. ... Ձf6 4. e5 Ձfd7 5. f4, կամ 3. ... Ձc6 4. Ձgf3 Ձf6 5. e5 Ձd7 6. Փb5, որն ավելի բարդ խաղ է խոստանում: Նշենք, սակայն, որ այդ տարբերակներում սևերը ճնշված դիրք կստանային:

4. e4:d5 e6:d5
5. Ձg1-f3 Ձg8-f6

Հնարավոր էր 5. ... Ձc6, բայց 6. Փb5-ից հետո պաշտպանությունը կդժվարանար. օրինակ՝ 6. ... Փd6 7. 0-0 Ձe7 8. dc Փ:c5 9. Ձb3 Փb6 10. Փe3! Փ:e3 11. Փ:c6+ bc (11. ... Ձ:c6 12. Նe1) 12. fe, և սպիտակները սև դաշտերում ճնշում կգործադրեին:

6. Փf1-b5+ Փc8-d7
7. Փb5:d7+ Ձb8:d7
8. 0-0 Փf8-e7
9. d4:c5 Ձd7:c5

Կողմերի հնարավորությունները հավասար են: d5-ի զինվորը c4 և e4 դաշտերն է հսկում:

Սմիսլով - Բոտվիննիկ
Մոսկվա, 1954թ.

1. e2-e4 e7-e6
2. d2-d4 d7-d5



3. Ձb1-c3 Փf8-b4
4. e4-e5 c7-c5
5. a2-a3 Փb4-a5

Այս շարունակությունը սևերի համար միշտ աննպաստ է համարվել, սակայն գործնականում կիրառվում է:

6. b2-b4 ...

Ալյոխինի քայլն է: Սպիտակները մտադիր են 6. ... cb-ին 7. Ձb5 պատասխանել և 7. ... ba+ 8. c3-ից հետո ուժեղ գրոհ ձեռնարկել:

6. ... c5:d4
7. Թd1-g4 Ձg8-e7

Համարձակ քայլ է: Մի քանի ամիս անց Բոտվիննիկը, Ունցիկերի հետ հանդիպման ժամանակ, ավելի զգույշ խաղաց (7. ... Աf8), սակայն նորից ծանր դիրք ստացավ:

8. b4:a5 d4:c3
9. Թg4:g7 Նh8-g8
10. Թg7:h7 Ձb8-d7

10. ... Ձbc6-ին սպիտակները կարող էին շարունակել 11. f4 Թ:a5 12. Ձf3 Փd7 13. Ձg5 Նf8 14. Փe2՝ սպառնալով 15. Ձ:f7!:

11. Ձg1-f3 Ձd7-f8
12. Թh7-d3 Թd8:a5
13. h2-h4! ...

Քայլի նպատակը փղի համար g5 դաշտում հենակետ ստեղծելն է, որտեղից փիղը նաև նավակի գրոհից g ուղղաձիգը կծածկի:

13. ... Փc8-d7
14. Փc1-g5 Նa8-c8
15. Ձf3-d4 Ձe7-f5
16. Նa1-b1! (դ.41) ...

Հետաքրքիր դիրք է ստացվել: Երկու մրցակիցն էլ հրաժարվել են փոխատեղումից, իսկ խաղը թևերում է ծավալվում:

41



16. ... Նc8-c4

16. ... b6-ի դեպքում սպիտակներն ուժեղ պատասխան ունեին՝ 17. Ձb5՝ սպառնալով 18. Թ:f5! Փ:b5 (18. ... ef??՝ 19. Ձd6x) 19. Թf6: Համեմատաբար ավելի հաջող էր 16. ... Ձ:d4 17. Թ:d4 b6 շարունակությունը, սակայն այստեղ ևս, շնորհիվ անցողիկ զինվորի և փղերի զույգի, որն ամբողջ խաղատախտակը հսկողության տակ է պահում, սպիտակները հաղթանակի հասնելու հնարավորություններ կպահպանեին:

17. Ձd4:f5 e6:f5
18. Նb1:b7 Նc4-e4+?

Խաղը բարդացնելու հնարավորություն էր ընձեռում որակի զոհաբերությունը՝ 18. ... Ն:g5 19. hg Նe4+, սակայն այս դեպքում ևս, շարունակելով 20. Փe2 Ձg6 (20. ... Ձe6 21. g6, և չէր կարելի 21. ... Ձf4՝ 22. Թ:e4-ի պատճառով) 21. Աf1 Ձ:e5 22. Նh8+ Աe7 23. Թb5 Թ:a3 24. Թ:d5 Թc1+ 25. Փd1 Թd2 26. Թc5+ Աe6 27. Նe8+!, սպիտակները կհաղթեին:

19. Թd3:e4! d5:e4
20. Նb7-b8+ Փd7-c8
21. Փf1-b5+ Թa5:b5
22. Նb8:b5 Ձf8-e6

23. Փg5-f6 Նg8:g2
24. h4-h5 Փc8-a6
25. h5-h6!

Սևերը հանձնվեցին:

Ռեշևսկի - Վահանյան
Սկոպյե, 1976թ.

1. e2-e4 e7-e6
2. d2-d4 d7-d5
3. Ձb1-d2 Ձg8-f6
4. e4-e5 Ձf6-d7
5. f2-f4 ...

Այս քայլը Գուֆելդ-Խասինի պարտիայից հետո տարածում ստացավ՝ 5. ... c5 6. c3 Ձc6 7. Ձdf3 (միայն այսպե՛ս է հնարավոր d4-ում զինվորը պահպանել) 7. ... Թb6 8. g3 (արքայի համար թաքստոց է նախապատրաստվում) 8. ... cd 9. cd Փb4+ 10. Աf2 f6 11. Աg2 0-0 12. Փd3 Աh8 (ճիշտ կլիներ 12. ... Փe7, և 13. ... f5) 13. Ձe2 fe 14. de Փe7 15. h4 Ձc5 16. Ձg5 Ձ:e5? (ճիշտ էր 16. ... h6-ը, թեև սևերի դիրքը, այդուհանդերձ, վատ էր) 17. fe Ձ:d3 18. Թ:d3 Փ:g5 19. Փ:g5 Թ:b2 20. Փf4, և սևերը հանձնվեցին:

5. ... c7-c5
6. c2-c3 Ձb8-c6
7. Ձd2-f3 Թd8-a5

Այս քայլը, որն արգելում է փղի կարգայումը d3 դաշտում (8. Փd3? cd), սևերին հավասար խաղի հնարավորություն է ընձեռում:

8. Աe1-f2 ...

Ուշադրության էր արժանի 8. Փe3-ը:

8. ... Փf8-e7
9. Փf1-d3?! ...

Ավելի հաջող էր 9. g3՝ Գուֆելդ-Խասինի պարտիայի հետքերով:

9. ... Թa5-b6!
10. Ձg1-e2 f7-f6

Սևերը պատրաստվում են d4 և e5 դաշտերում փոխանակությունների միջոցով զինվոր շահել:

11. e5:f6 Փe7:f6
12. Աf2-g3 c5:d4
13. c3:d4 0-0
14. Նh1-e1? (դ.42) ...

Սպիտակները պետք է 14. h3 խաղային՝ արքայի համար վերադարձի ճանապարհ ապահովելով: Այժմ Ռ.Վահանյանը, օգտագործելով մրցակցի արքայի դիրքը, վճռական գրոհի է անցնում:

42 

14. ... e6-e5!!

Մտահղացումով փայլուն և մեծագույն վարպետությամբ իրականացված կոմբինացիայի սկիզբը:

15. f4:e5 Ձd7:e5!

Այս հարվածը կհետևեր նաև 15. de-ի դեպքում:

16. d4:e5 Փf6-h4+!!

Երկրորդ ֆիգուրի անսպասելի զոհաբերությունն սպիտակները մերժել չեն կարող:

17. Աg3:h4 Նf8:f3!

Նոր հարված, որը կարևոր



պաշտպանին է վերացնում:

18. Նe1-f1! ...

Եթե 18. gf, ապա 18. ... Թf2+ 19. Աg5 h6+ 20. Աf4 g5x:

18. ... Թb6-b4+!
19. Փc1-f4 Թb4-e7+
20. Փf4-g5 Թe7-e6
21. Փd3-f5 ...

Իհարկե, ո՛չ 21. h3?՝ 21. ... Ն:h3+! 22. gh Թ:h3x:

21. ... Նf3:f5
22. Ձe2-f4 Թe6:e5

Սևերն, ի վերջո, զինվոր շահեցին՝ գրոհի լավ հնարավորություններ պահպանելով:

23. Թd1-g4 Նf5-f7
24. Թg4-h5 Ձc6-e7
25. g2-g4 ...

Պաշտպանվելով 25. ... Ձf5+ սպառնալիքից: Չէին փրկում և՛ 25. Փ:e7-ը՝ 25. ... Ն:f4+ 26. Ն:f4 Թ:f4+ 27. g4 Թ:h2+, և՛ 25. Թ:f7+-ը՝ 25. ... Ա:f7 26. Ձd3+ Ձf5+ 27. Ն:f5+ Թ:f5:

25. ... Ձe7-g6+
26. Աh4-g3 Փc8-d7
27. Նa1-e1 Թe5-d6
28. Փg5-h6 Նa8-f8!

Այս անհուսալի դիրքում սպիտակներն սպառեցին ժամանակը:

## ԿԱՐՈ-ԿԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4 c7-c6 (դ.43).

43 

Մրցաշարերում այս սկզբնախաղը XIX դարի վերջում է հանդիպել (Շ.Վինավեր, 1883թ.), իսկ նախնական մշակումն իրականացրել են անգլիացի վարպետ Գ.Կարոն և ավստրիացի շախմատիստ Մ.Կանը՝ 1886 թվականին: Այստեղից էլ անվանումը՝ *Կարո-Կանի պաշտպանություն*:

Ինչպես *Ֆրանսիական պաշտպանությունում*, այնպես էլ՝ այստեղ, սևերը d7-d5 առաջխաղացումն են նախապատրաստում: Ի տարբերություն ֆրանսիականի՝ *Կարո-Կանի պաշտպանության* հիմնական տարբերակներում սևերը c8-ի փիղը կարգայնելու հնարավորություն են ստանում, քանի որ նրա ճանապարհը e7-e6 քայլով չի փակվում: Թերևս, միակ թերությունն այն է, որ զինվորը c5 դաշտը հասցնելը (ինչը հաճախ անհրաժեշտ է դառնում) սևերը երկու քայլով են իրականացնում:

### Ա.ՏԱՐԲԵՐԱԿ՝ 3. e4-e5 ԱՌԱՋԽԱՂԱՑՄԱՄԲ

2. d2-d4 d7-d5
3. e4-e5 Փc8-f5!
4. Փf1-d3 Փf5:d3
5. Թd1:d3 e7-e6
6. Ձg1-e2 ...

6. Ձf3-ի դեպքում սևերը, ըստ Նիմցովիչի, կարող էին 6. ... Թa5+ շարունակել և 7. c3-ից հետո 7. ... Թa6-ի միջոցով թագուհիների փոխանակություն պարտադրել, քանի որ սպիտակ թագուհու նահանջի դեպքում փոխատեղումը կկասեցվեր:

6. ... Թd8-b6
7. Ձb1-c3 c6-c5

Սևերը կենտրոնում հակախաղի գերազանց հնարավորություն ստացան:

## Բ. ՊԱՆՈՎԻ ԳՐՈՀ

2. d2-d4 d7-d5
3. c4:d5 c6:d5
4. c2-c4 Ձg8-f6

4. ... dc 5. Փ:c4-ից հետո սկզբնախաղը *թագուհու ընդունված գամբիտին* կհանգեր (*տե՛ս թագուհու ընդունված գամբիտը*):

5. Ձb1-c3 e7-e6

5. ... Ձc6-ին կարող էր հաջորդել 6. Փg5 dc (ավելի հաջող էր 6. ... e6!-ը, 6. ...Թb6-ը, կամ 6. ... Թa5!?-ը) 7. d5 Ձe5 8. Թd4 Ձd3+ 9. Փ:d3 cd 10. 0-0-0, և սպիտակները կարգացումով առաջ կընկնեին:

6. Ձg1-f3 Փf8-e7
7. c4-c5 0-0
8. b2-b4 ...

Սպիտակները թագուհու թևում որոշ առավելություն ունեն: Բոտվիննիկ-Գոլոմբեկ պարտիայում (1956թ.) հետևեց. 8. ... b6 9. Փd3 Փd7? (ճիշտ կլիներ 9. ... a5 10. Ձa4 Ձfd7-ը) 10. Փe3 Ձg4 11. 0-0 a5 12. Ձa4!, և սպիտակները բացահայտ առավելության հասան:

## Գ. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

2. d2-d4 d7-d5
3. Ձb1-c3 d5:e4
4. Ձc3:e4 Փc8-f5

Հնարավոր էր նաև 4. ... Ձd7՝ նախապատրաստելով 5. ... Ձgf6, կամ նույնիսկ 4. ... Ձf6 5. Ձ:f6+ gf (կարելի էր և 5. ... ef):

5. Ձe4-g3 Փf5-g6
6. Ձg1-f3 Ձb8-d7
7. h2-h4 h7-h6
8. h4-h5 ...

Դիտարկվող տարբերակի ժամանակակից մեկնությունն է:

8. ... Փg6-h7
9. Փf1-d3 Փh7:d3
10. Թd1:d3 Թd8-c7!

Սևերը պատրաստվում են երկար փոխատեղում կատարել՝ միաժամանակ թույլ չտալով փիղը f4-ում կարգացնելու:

11. Փc1-d2 0-0-0
12. 0-0-0 Ձg8-f6
13. Թd3-e2! ...

Սպասկու մտահղացումն է՝ սպիտակները ձգտում են ձին e5 դաշտում հաստատելու, ինչը կուժեղացնի նրանց դիրքը:

13. ... e7-e6
14. Ձf3-e5 Ձd7:e5

Եթե 14. ... Ձb6, ապա 15. Փa5, և սպիտակները բավականին ապատ խաղ կստանային:

15. d4:e5 Ձf6-d7
16. f2-f4 Փf8-e7
17. Ձg3-e4 Ձd7-c5

Սպիտակները տարածքային առավելություն ունեն:

## Դ. ՏԱՐԲԵՐԱԿ՝ Ձg1-f3 ՔԱՅԼՈՎ

2. Ձg1-f3 d7-d5
3. Ձb1-c3 ...

Քայլերի այս հերթականության դեպքում սևերին 3. ... Փf5 խաղալը ձեռնտու չէ՝ 3. ... de 4. Ձ:e4 Փf5 5. Ձg3 Փg6 6. h4 h6 7. Ձe5 Փh7 8. Թh5! (սպառնում է մատ՝ f7 դաշտից) 8. ... g6 9. Փc4 e6 10. Թe2 (սպառնում է 11. Ձ:f7! Ա:f7 12. Թ:e6+) 10. ... Թe7, և սպիտակներն ակնհայտ դիրքային առավելություն ունեն:

3. ... Փc8-g4

Թույլ էր 3. ... d4-ը՝ 4. Ձe2 c5 5. c3! Ձc6 6. cd cd 7. Թa4!, և սպիտակները զինվոր կշահեին:

4. h2-h3 Փg4:f3
5. Թd1:f3 e7-e6

Ավելի ուժեղ էր Իլիվիցկու 5. ... Ձf6! քայլը:

6. d2-d4! Ձg8-f6
7. Փf1-d3 d5:e4
8. Ձc3:e4 Ձf6:e4

Զինվորի կռհաբերությունն ընդունելը վտանգավոր է, քանի որ կդանդաղեցնի կարգացումը:

9. Թf3:e4 Ձb8-d7

Սպիտակները կենտրոնում ոչ մեծ առավելություն ունեն:

Նիմցովիչ - Կապաբլանկա
Նյու Յորք, 1929թ.

1. e2-e4 c7-c6
2. d2-d4 d7-d5
3. e4-e5 Փc8-f5
4. Փf1-d3 Փf5:d3
5. Թd1:d3 e7-e6
6. Ձb1-c3 Թd8-b6
7. Ձg1-e2 c6-c5
8. d4:c5 Փf8:c5
9. 0-0 Ձg8-e7
10. Ձc3-a4 ...

*Կարո-Կանի պաշտպանության* այս տարբերակում, ինչպես տեսանք, սևերը մեծ դժվարությունների չեն հանդիպում և արագ հավասարեցնում են խաղը: Վերջին քայլով սպիտակները կամենում են պարզեցնել դիրքը: Ուշադրության էր արժանի 10. a3-ը՝ ստիպելով 10. ... Թc6:

10. ... Թb6-c6
11. Ձa4:c5 Թc6:c5
12. Փc1-e3 Թc5-c7
13. f2-f4 Ձe7-f5
14. c2-c3? ...

Պասիվ քայլ է, որից հետո նախաձեռնությունը սևերն են ստանձնում: Ըստ Ա.Ալյոխինի՝ անհրաժեշտ էր 14. Նac1 Ձc6 15. Փf2 h5 16. c4 dc 17. Թ:c4 0-0 18. Նfd1՝ նախապատրաստելով Ձe2-c3-e4 խուսանավումը:

14. ... Ձb8-c6
15. Նa1-d1 g7-g6
16. g2-g4? ...

Սա արդեն ռազմավարության առումով սխալ է՝ սպիտակներն արքայական թևն են թուլացնում, ինչից էլ մեծ հմտությամբ օգտվում է Կապաբլանկան:

Հարկավոր էր 16. Փf2 h5 17. Նd2, և ապա՝ Նc1 խաղալ՝ նախապատրաստելով c գծի բացումը:

16. ... Ձf5:e3
17. Թd3:e3 h7-h5! (դ.44)

Վերջին քայլի նպատակը h գիծը բացելն է կամ՝ պաշտպանված, ուժեղ կենտրոն ստանալը:

44


18. g4-g5 ...

Եթե 18. h3, ապա 18. ... hg 19. hg 0-0-0, և սևերը ի ուղաձիգով հակագրոհ կկազմակերպեին:

18. ... 0-0

19. Ձe2-d4 Թc7-b6!

Սևերը մրցակցին 20. Ձb5 խաղալ չեն թույլատրում:

20. Նf1-f2 Նf8-c8

21. a2-a3 Նc8-c7

22. Նd1-d3 Ձc6-a5

23. Նf2-e2! Նa8-e8!

Սխալ կլիներ փինվոր շահելու փորձը՝ 23. ... Ձc4 24. Թf2 Ձ:a3՝ 25. f5!-ի պատճառով (սակայն ո՛չ 25. ba? Թb1+):

24. Աg1-g2 Ձa5-c6

25. Նe2-d2 ...

Ոչ-ոքիի հնարավորություններ էր ընձեռում 25. Ձ:c6-ը:

25. ... Նe8-c8

26. Նd2-e2 Ձc6-e7!

27. Նe2-d2 Նc7-c4

28. Թe3-h3 Աg8-g7

29. Նd2-f2 a7-a5

Սպիտակներն սպասողական քայլեր են կատարում, մինչդեռ սևերը քայլառքայլ ուժեղացնում են դիրքը: Կապաբլանկան վերջնախաղը վարպետորեն է խաղարկում:

30. Նf2-e2 Ձe7-f5!

31. Ձd4:f5+ ...

31. Նed2-ին սևերը կպատասխանեին 31. ... Ձ:d4, և 32. Ն:d4 Ն:d4 33. cd Նc4 34. Թe3 a4-ից հետո դիրքային մեծ առավելություն կստանային:

31. ... g6:f5

32. Թh3-f3 ...

Եթե 32. Թ:h5, ապա 32. ... Նh8 33. Թf3 Նh4՝ հաղթանակով:

32. ... Աg7-g6

33. Նe2-d2 Նc4-e4

34. Նd3-d4 Նc8-c4

35. Թf3-f2 Թb6-b5

36. Աg2-g3 ...

Կամ 36. Ն:c4 Թ:c4 37. Նd4 Թb3!, և եթե նավակների երկրորդ զույգը նույնպես փոխանակվի, ապա թագուհիներով վերջնախաղը սպիտակներին ոչ մի լավ բան չի խոստանա՝ նրանց արքայի դիրքը բաց է, բացի այդ՝ սևերն անցունակ փինվոր ունեն:

36. ... Նc4:d4

37. c3:d4 Թb5-c4

38. Աg3-g2 b7-b5

39. Աg2-g1 b5-b4

40. a3:b4 a5:b4

41. Աg1-g2 Թc4-c1

42. Աg2-g3 Թc1-h1!

43. Նd2-d3 Նe4-e1

44. Նd3-f3 Նe1-d1

45. b2-b3 Նd1-c1!

46. Նf3-e3 ...

Եթե 46. Աh3, ապա 46. ... Նc2:

46. ... Նc1-f1

Սպիտակները հանձնվեցին:

Տալ - Բրոնշտեյն

Լենինգրադ, 1971թ

1. e2-e4 c7-c6

2. c2-c4 d7-d5

3. e4:d5 c6:d5

4. d2-d4 Ձg8-f6

5. Ձb1-c3 ...

Քայլերի հերթականության տեղափոփոխությամբ՝ *Պանովի գրոհն* ստացվեց:

5. ... Ձb8-c6



6. Փc1-g5 Փc8-g4?!

Լավագույն շարունակությունը չէ, ինչը և ապացուցում է Մ.-Տալը: Ընդհանրապես՝ սևերն այստեղ 6. ... e6, 6. ... Թb6 կամ 6. ... Թa5 են խաղում:

7. Փf1-e2! ...

Նախկինում 7. f3 էին շարունակում, որը, 7. ... Փe6 8. c5-ից հետո, բարդ խաղի էր հանգեցնում. սպիտակների հնարավորություններն այստեղ ևս գերադասելի են:

7. ... Փg4:e2

Այս փոխանակությունը հարկադրված է, քանի որ 7. ... Փe6-ին կհաջորդեր 8. Փf3, և սևերը բարդությունների առջև կկանգնեին:

8. Ձg1:e2 d5:c4

Կենտրոնը հանձնելը նույնպես ճարահատյալ է՝ 8. ... e6-ին կհետևեր 9. cd ed 10. Թb3՝ շահելով d5-ի փինվորը:

9. d4-d5 Ձc6-e5

10. 0-0 ...

Սևերը դեռևս փինվորի առավելություն են պահպանում, սակայն վարգացումով խիստ հետ են ընկել:

10. ... h7-h6

Արդեն դժվար է խորհուրդ տալը: Եթե 10. ... e6, ապա 11. Փ:f6 gf 12. Թa4+ Թd7 13. Ձb5 Նc8 14. de fe 15. Նad1, և սպիտակները գերազանց դիրք կստանային, իսկ 10. ... g6-ին կարող էր հետևել 11. d6! ed (11. ... Փg7 12. de!) 12. Փ:f6 Թ:f6 13. Ձd5 Թd8 14. Թa4+՝ վճռորոշ սպառնալիքներով:

11. Փg5-f4 Ձe5-g6

12. Թd1-a4+ Թd8-d7

13. Թa4:c4 Նa8-c8

14. Թc4-b3 ...

Սպիտակները հետ վերցրեցին փինվորը՝ պահպանելով դիրքի բոլոր առավելությունները:

14. ... e7-e5

Չէր փրկում նաև 14. ... Ձ:f4 15. Ձ:f4 g5-ը, որին կհաջորդեր 16. Ձe6! fe 17. de Թc6 18. Նac1!, և սպիտակները պետք է հաղթեին:

15. d5:e6 Թd7:e6

16. Թb3:b7 Փf8-c5 (դ.45)

45 

Թվում է, թե փինվորի կորուստը սևերին ձեռքբերում է բոլոր սպառնալիքներից. չէ՞ որ փոխատեղումից հետո արքան պաշտպանված կլինի: Սակայն փոխատեղում կատարել նրանք չեն հասցնում: Սպիտակները վճռական հարված են նախապատրաստել, որից հետո նյութական կորուստներն անխուսափելի են:

17. Ձe2-d4! Փc5:d4

17. ... Թd7 18. Նfe1+ Աf8 19.

Թ:d7 Ձ:d7 20. Փe3-ը սևերին պարտության էր հանգեցնում: Զգտելով ինչ-որ կերպ խճճել խաղը՝ սևերը որոշում են թագուհին փոխարինել: Սակայն, դա էլ վիճակը չի թեթևացնում:

18. Նa1-e1   0-0

18.... Փc5 19. Փ:e5 0-0 20. Փ:f6 Թ:f6 21. Թ:a7 տարբերակում սպիտակները երկրորդ փինվորը կշահեին:

19. Նe1:e6   f7:e6
20. Փf4-d6   Նf8-d8
21. Փd6-c7   Նd8-f8
22. Ձc3-b5   Փd4-e5
23. Փc7:e5   Ձg6:e5
24. Թb7:a7   ...

Մնացյալը պարզ է:

24.   ...   Ձf6-d5
25. Թa7-d4   Ձe5-g6
26. h2-h4   Ձg6-f4
27. Թd4-e4

Սևերը հանձնվեցին:

Կ.Գրիգորյան - Կլիմավիչյուս
Նամակագրությամբ՝
1983-1984թ.թ.

1. c2-c4   c7-c6
2. d2-d4   d7-d5
3. Ձb1-c3   d5:c4
4. Ձc3:e4   Փc8-f5
5. Ձe4-g3   Փf5-g6
6. h2-h4   h7-h6
7. h4-h5   Փg6-h7
8. Ձg1-f3   Ձb8-d7
9. Փf1-d3   Փh7:d3
10. Թd1:d3   Ձg8-f6
11. Փc1-d2   ...

Թորե-Կարպով պարտիայում (Մոսկվա, 1981թ.) սպիտակները 11. Փf4 շարունակեցին, որին հաջորդեց 11. ... e6 12. 0-0-0 Փe7 13. Աb1 a5 14. Ձe4 Ձ:e4 15. Թ:e4 Ձf6 16. Թe2 a4 17. Ձe5 Թd5՝ երկուստեք հնարավորություններով:

11.   ...   Թd8-c7
12. 0-0-0   e7-e6
13. Թd3-e2   c6-c5

Այս քայլը, ինչպես միջազգային վարպետ Կ.Գրիգորյանն է նշել, Ձf3-e5-ի դեմ է ուղղված:

14. Նh1-h4   Նa8-c8
15. c2-c3   ...

Միխալչիշին-Կասպարով պարտիայում (Դաուգավպիլս, 1978թ.) 15. Ձf5 cd 16. Ձ3:d4 Թc4 17. Թ:c4-ից հետո մրցակիցները ոչ-ոքիի համաձայնվեցին: Երկուստեք ռազմավարությամբ բարդ խաղի էր հանգեցնում 15. Փf4-ը. օրինակ՝ 15. ... Թa5 16. d5 Թ:a2 17. c4:

15.   ...   Փf8-e7
16. d4:c5   Թc7:c5

Եթե 16. ... Ձ:c5, ապա 17. Նd4 (կրկնապատկելով նավակները), իսկ 16. ... Փ:c5-ը սպիտակ նավակին տխաճ հանդիպակայությունից կազատեր:

17. Աc1-b1   Ձf6-d5
18. Նh4-d4   Ձd7-f6
19. Ձf3-e5   0-0
20. f2-f4   Թc5-b6

Սևերի ուշադրությունից վրիպում է մրցակցի թագուհու և ձիու վերադասավորությունը: Ճիշտ կլիներ 20. ... b5-ը:

21. Թe2-f3   Նc8-c7
22. Ձg3-e2   Փe7-c5
23. Նd4-d3   Ձf6-d7

Այլապես՝ g2-g4-g5 առաջխաղացմամբ սպիտակներն անկասելի գրոհ կձեռնարկեին:

24. Փd2-c1   Ձd7:e5
25. f4:e5   f7-f6 (դ.46)

46 

26. e5:f6   Նf8:f6
27. Թf3-e4   ...

Սպիտակների դիրքը գերադասելի է: Նրանց ֆիգուրները կենտրոնացված են: Սևերի ճամբարում թույլ են g6 դաշտը և e6-ի փինվորը:

27.   ...   Նf6-f5
28. Ձe2-f4   ...

Ձիերի փոխանակությունից հետո սպիտակների նավակը մրցակցի ճամբարն է անարգել ներխուժում: Թվում է, թե ավելի եռանդուն էր 28. g4-ը, բայց սևերը կհասցնեին պաշտպանվել՝ 28. ... Ձf6 29. Թa4 Նd5 30. Ձf4 Ն:d3 31. Ն:d3 Թc6! 32. Նd8+ Աf7, կամ 29. Նd8+ Փf8 30. Թa4 Նa5 31. Թc2 Նd5՝ հավասար խաղով:

28.   ...   Ձd5:f4
29. Փc1:f4   Նc7-f7
30. Նd3-d8+   Փc5-f8

Եթե 30. ... Նf8, ապա 31. Ն:f8+ Ն:f8 32. Նd7 Նf7! 33. Ն:f7 Ա:f7 34. Թg6+ Աf8 35. Փe5՝ սպիտակների զգալի առավելությամբ:

31. Փf4-e3   Թb6-a6

Ավելի համառ էր 31. ... Թc6-ը:

32. g2-g4   Նf5-f1
33. c3-c4   e6-e5
34. a2-a3   Թa6-f6
35. Նd1:f1   Թf6:f1+
36. Աb1-a2   Նf7-c7

Չէր օգնում 36. ... Թe2-ը՝ 37 Թd5 Թ:e3 38. Ն:f8+ Ա:f8 39. Թd8x:

37. Թc4-d5+   Աg8-h7
38. Փe3:a7   b7-b5
39. c4:b5

Սևերը հանձնվեցին:

## ՍԻՑԻԼԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4   c7-c5 (դ.47)

47 

Սկզբնախաղը հիշատակվում է դեռևս Լ.Լուսինեայի շախմատային ուղեցույցում (XVդ. վերջը) և Ջ.Գրեկոյի տրակտատում (1819-22թ.թ.): Վերջինս էլ այն անվանեց՝ *Սիցիլիական պաշտպանություն*:

Այս սկզբնախաղը, որն անցյալ դարում սևերի համար ոչ նպաս-

տավոր էր համարվում, ուստի չափազանց հազվադեպ էր հանդիպում, ներկայումս առավել հաճախ կիրառվողներից մեկն է դարձել:

*Սիցիլիական պաշտպանության* մրցակիցներից ճշգրիտ ու եռանդուն խաղ է պահանջում հենց խաղասկզբից և սուր, բովանդակալից, հետաքրքիր պայքար է խոստանում:

Այս սկզբնախաղում սպիտակներն արքայական թևում են ակտիվ գործողություններ ծավալում, իսկ սևերը հակախաղը թագուհու թևում են փնտրում:

## Ա.ՓԱԿ ՀԱՄԱԿԱՐԳ

2. Զb1-c3 ...

Սպիտակները, d2-d4 առաջխաղացումից հրաժարվելով, փորձում են արքայական թևում գինվորային գրոհ կազմակերպել, սևերն էլ, իրենց հերթին, ցանկանում են d4 դաշտին տիրանալ և թագուհու թևում առավելության հասնել:

2. ... Զb8-c6
3. g2-g3 g7-g6
4. Փf1-g2 Փf8-g7
5. d2-d3 d7-d6
6. Փc1-e3 e7-e6
7. f2-f4 ...

Հնում այստեղ, հիմնականում, 7. Զge2, 8. Թd2 էին շարունակում: Այժմ նախապատվությունը տրվում է 7. f4-ին՝ այս դեպքում ձին առավել ակտիվ դիրքում զարգացնելու հնարավորություն է ստեղծվում:

7. ... Զg8-e7
8. Զg1-f3 0-0
9. 0-0 Զc6-d4

Սպիտակները պատրաստվում են արքայական թևում գրոհելու, իսկ սևերը, Նb8, b7-b5-ից հետո, թագուհու թևում հակախաղ կփնտրեն:

## Բ. ՍԽԵՎԵՆԻՆԳԵՆՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համակարգն իր անվանումն ստացավ այն պատճառով, որ առաջին անգամ կիրառվեց հոլանդական Սխևենինգեն քաղաքում (1923թ.) անցկացված միջազգային խոշոր մրցաշարում:

2. Զg1-f3 e7-e6
3. d2-d4 . c5:d4
4. Զf3:d4 Զg8-f6
5. Զb1-c3 ...

Լավ չէր 5. e5-ը՝ 5. ... Թa5+, և 6. ... Թ:e5:

5. ... d7-d6
6. Փf1-e2 ...

Փիղը e2 դաշտում զարգացնելը բնորոշ է այս համակարգին: Խաղի հետագա ծրագրի ընտրությունից կախված՝ այն կարելի է d3 տեղափոխել, եթե մտադիր ենք արքայական թևում գրոհ ձեռնարկել, կամ f3, եթե որոշել ենք կենտրոնի վրա ճնշում գործադրելով բավարարվել:

6. ... Զb8-c6
7. Փc1-e3 Փf8-e7
8. 0-0 0-0
9. f2-f4 Փc8-d7

Ժամանակ չծախսելով a7-a6 կամ Թd8-c7 քայլի վրա՝ սևերը ձգտում են c6-ում փիղը հնարավորին չափ արագ տեղադրելու, որտեղից այն սպիտակների կենտրոնական գինվորը կգրոհի:

10. Թd1-e1 Զc6:d4



11. Փe3:d4 Փd7-c6
12. Թe1-g3 g7-g6!

Արքայական թևում առաջացող թուլությունները սևերին չեն վախեցնում, քանի որ նրանք հասցնում են հակախաղ ձեռնարկել: 13. Թf3-ին կամ 13. Փf3-ին կհաջորդի 13. ... b5, և սպիտակները կրկին պետք է e4 գինվորի պաշտպանության մասին հոգան:

## Գ. ՌԱՈՒԶԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս համակարգը, որը *սիցիլիական պաշտպանության* ամենաբարդ տարբերակներից է, հայտնի տեսաբան Վ.Ռաուզերն է մշակել:

Փոխատեղումը թագուհու թևում կատարելով՝ սպիտակները d գծով ճնշումը զուգակցում են արքայական թևում ձեռնարկվող գրոհի հետ:

2. Զg1-f3 Զb8-c6
3. d2-d4 c5:d4
4. Զf3:d4 Զg8-f6
5. Զb1-c3 d7-d6
6. Փc1-g5 e7-e6
7. Թd1-d2 Փf8-e7

7. ... h6-ին կհաջորդեր 8. Փ:f6, և սևերը ստիպված կլինեին խաղալ 8. ... gf (8. ... Թ:f6՝ 9. Զdb5 Թd8 10. 0-0-0, և չի հասկացվում, թե ինչպե՞ս կարելի է պաշտպանել d6-ի գինվորը):

Հնարավոր էր 7. ... a6 8. 0-0-0 Փd7, որից հետո սևերը սովորաբար երկար փոխատեղում են կատարում:

8. 0-0-0 0-0

Երկուստեք հնարավորություններով, սուր դիրք ստացվեց: Առավել հաճախ հանդիպում է 9. f4 Զ:d4 10. Թ:d4 h6 11. Փh4 (11. Փ:f6 Փ:f6 12. Թ:d6 Թa5, և գինվորի դիմաց սևերը հակախաղ են ստանում) 11. ... Թa5 12. Փc4 e5 13. fe de 14. Թd3 շարունակությունը:

## Դ. ՎԻՇԱՊԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ

2. Զg1-f3 d7-d6
3. d2-d4 c5:d4
4. Զf3:d4 Զg8-f6 .
5. Զb1-c3 g7-g6
6. Փc1-e3 Փf8-g7.

Սխալ էր 6. ... Զg4-ը՝ 7. Փb5+ Փd7 8. Թ:g4:

7. Փf1-e2 ...

*Վիշապի տարբերակի* դասական շարունակությունն է: Ներկայումս առավել տարածված է 7. f3 քայլը: Փոխատեղումը հակառակ թևերում կատարելով՝ կողմերից յուրաքանչյուրը մրցակցի արքայի դեմ գրոհ է ձեռնարկում: Հիմնական տարբերակը՝ 7. ... 0-0 8. Փc4 Զc6 9. Փb3 Թa5 10. Թd2 Փd7 11. 0-0-0 Նf8-c8: Գործնականում ապացուցվել է, որ միայն այսպե՛ս սևերը կարող են եռանդուն հակախաղի հնարավորություն ստանալ:

7. ... 0-0
8. 0-0 Զb8-c6
9. Զd4-b3 ...

Եթե 9. f4?, ապա 9. ... Թb6!՝ կաշկանդելով d4-ի ձին, գրոհելով b2-ի գինվորը և սպառնալով 9. ... Զ:e4:

9. ... Փc8-e6
10. f2-f4 ...

Դիտարկվող համակարգի հիմնական դիրքն առաջացավ:

Սև զինվորների (d6, e7, f7, g6, h7) դասավորությունը, կարծես, վիշապի կոնակ է հիշեցնում:

Սպիտակները պատրաստվում են արքայի դեմ ուղղած գրոհի թափն ուժեղացնել: Սևերը կարող են 10. ... Թc8 խաղալ և f4-f5 առաջխաղացումը խոչընդոտել կամ 10. ... a7-a5 քայլով թագուհու թևում հակախաղ սկսել:

Գելլեր - Կասպարով
Մոսկվա, 1981թ.

1. e2-e4 c7-c5
2. Ձg1-f3 e7-e6
3. d2-d4 c5:d4
4. Ձf3:d4 Ձb8-c6
5. Ձb1-c3 d7-d6
6. Փf1-e2 Ձg8-f6
7. 0-0 Փf8-e7
8. Փc1-e3 0-0
9. f2-f4 ...

Այստեղ սևերը շեղվում են մեզ արդեն հայտնի ճանապարհից.

9. ... e6-e5!

Այս քայլը, որն առաջարկել են Բ.Սպասսկին և Ի.Բոնդարևսկին, սևերին արագ կարգացման հնարավորությունն է ընձեռում: Թեև d5 կետը թուլանում է, սակայն սևերը կենտրոնում գործողություններ են ծավալում՝ ստանալով հարմար e5 հենակետը, իսկ e5:f4 փոխանակության դեպքում d6 և e4 զինվորների թուլությունները միմյանց հավասարակշռում են:

10. Ձd4-b3 ...

Սպիտակների համար անհեռանկարային էին 10. Ձf5 Փ:f5 11. ef ef 12. Ն:f4 d5! 13. Աh1 Նe8, և 10. fe de 11. Ձf5 Փ:f5 12. Ն:f5 Թa5! 13. Աh1 Նad8 14. Թf1 (ավելի լավ չէր 14. Թg1 g6 15. Նff1 Ձd4-ը՝ Սթին-Տալ, 1974թ.) 14. ... Ձd4! 15. Փ:d4 Ն:d4 շարունակությունները:

10. ... e5:f4
11. Փe3:f4 ...

Կարելի էր և 11. Ն:f4 Փe6 12. Ձd4 Ձ:d4 13. Փ:d4 Ձd7 14. Աh1 Փg5 15. Նf1 Ձe5, և խաղը երկուստեք սուր բնույթ կստանար:

11. ... Փc8-e6

Նախապատրաստելով d5 առաջխաղացումը:

12. Աg1-h1 d6-d5
13. e4-e5 Ձf6-d7

Մոտավորապես նույնը կստացվեր և 13. ... Ձe4-ից հետո՝ 14. Փd3 f5 15. ef Փ:f6! 16. Ձ:e4 de 17. Ձc5 ed (հետաքրքիր էր 17. ... Փd5!?-ը) 18. Ձ:e6 dc 19. Թ:c2 Ձd4՝ հավասար հնարավորություններով (Ցեշկովսկի-Տուկմակով, 1981թ.):

14. Ձc3:d5 Ձd7:e5
15. c2-c4 Փe7-g5
16. Ձb3-c5 ...

Առաջին հայացքից ուժեղ այս քայլն իրականում սևերին է առավելություն տալիս: Ճիշտ կլիներ 16. Թc1! Փ:f4 17. Ձ:f4-ը:

16. ... Փg5:f4
17. Նf1:f4 (դ.48) ...

48





17. ... b7-b6!
18. Ձc5-e4 ...

18. Ձ:e6 fe 19. Ն:f8+ Թ:f8-ից հետո արդեն սպիտակներն ստիպված կլինեին դիրքը հավասարեցնելու մասին հոգալ, քանի որ e6 զինվորին անհանգստացնել նրանք չէին կարողանա, իսկ սև ձիերը կիշխեին կենտրոնը:

18. ... b6-b5!
19. b2-b3 ...

19. cb?՝ 19. ... Փ:d5 20. bc Ձg6՝ նյութական ձեռքբերումներով:

19. ... b5:c4
20. Փe2:c4 Աg8-h8!
21. Թd1-h5? ...

Սպիտակները, կենտրոնում դիրքն ամրացնելու փոխարեն՝ 21. h3 f5 22. Ձec3, արքայի դեմ չհիմնավորված գրոհ են ձեռնարկում:

21. ... Փe6:d5
22. Փc4:d5 ...

Եթե 22. Նd1, ապա 22. ... g6! 23. Թh6 (23. Թe2 Փ:c4) 23. ... Փ:e4 24. Ն:d8 Նf:d8 25. h3 f5 26. Նh4 Նd7:

22. ... Թd8:d5
23. Նf4-h4 h7-h6
24. Նa1-d1 Թd5-a5!
25. b3-b4 ...

Առաջին հորիզոնականի ոչ բավարար պաշտպանվածությունն սպիտակներին թույլ չի տալիս գրոհին միացնելու նաև երկրորդ նավակը (25. Նd6): Չէր անցնում և 25. Թg5-ը՝ 25. ... f6! 26. Ն:h6+ gh 27. Թ:h6+ Աg8 28. Ձ:f6+ Ն:f6 29. Թ:f6 Թc7:

25. ... Թa5:b4
26. Ձe4-f6 Թb4-e7
27. Նd1-f1 Նf8-d8!

Սպիտակները հանձնվեցին. 28. Թg5-ին կհաջորդեր 28: ... Թ:f6!:

Մինասյան - Վիտոլինշ
Ֆրունզե, 1989թ.

1. e2-e4 c7-c5
2. Ձg1-f3 d7-d6
3. d2-d4 c5:d4
4. Ձf3:d4 Ձg8-f6
5. Ձb1-c3 a7-a6

*Սիցիլիական պաշտպանության* այս տարբերակը գրոսմայստեր Նայդորֆի անունով է կոչվում: Այն բարդ խաղ է խոստանում:

6. Փf1-c4 ...

Հնարավոր էր և 6. Փg5:

6. ... e7-e6
7. Փc4-b3 Ձb8-d7
8. f2-f4 Ձd7-c5
9. 0-0 ...

Սովորաբար 9. e5!?, կամ 9. f5 են խաղում:

9. ... Փf8-e7

9. ... Ձc:e4 10. Ձ:e4 Ձ:e4-ին կհաջորդեր 11. f5՝ զինվորի դիմաց նախաձեռնություն ստանձնելով:

10. e4-e5 d6:e5
11. f4:e5 Ձf6-d7
12. Թd1-h5! ...

12. Փf4-ին հնարավոր էր 12. ... 0-0 13. Թg4 Ձf6!!, և չէր կարելի 14. ef 14. ... Թ:d4+-ի պատճառով:

12. ... g7-g6

12. ... 0-0-ն սպիտակներին գրոհը կարգացնելու հնարավորություն կընձեռեր (Նf3, և Նh3):

13. Թh5-e2 Թd8-c7?

Սա արդեն ռազմավարության առումով սխալ է՝ անհրաժեշտ

էր 13. ... Փg5-ի միջոցով փոխանակել սևադաշտ փղերը՝ 14. Փ:g5 Թ:g5 15. Նae1 0-0 16. Նf3՝ չնայած որ այս դեպքում ևս սպիտակները դիրքային առավելություն կպահպանեին:

14. Փc1-h6 Փe7-f8 (դ.49)

Սխալ էր 14. ... Թ:e5-ը՝ 15. Թ:e5 Ձ:e5 16. Փg7:

49


Սպիտակները դիրքային մեծ առավելության են հասել ու կարգացումով բավականին առաջ անցել: Սևերի ճամբարում թույլ են սև դաշտերը: Նրանց դիրքն արդեն կարելի է շատ ծանր համարել:

15. Ձc3-d5! Թc7-d8

Ձիու զոհաբերությունն ընդունել չէր կարելի՝ 15. ... ed 16. e6 Ձe5 (կամ 16. ... fe 17. Ձ:e6 Թe5 18. Թ:e5 Ձ:e5 19. Ձ:f8՝ հաղթանակով) 17. ef+ Աd7 18. Փf4 Փd6 19. Փ:d5, ապա՝ Նae1, և բազմաթիվ սպառնալիքներից բավարար պաշտպանություն չէր ակնկալվի:

16. Թe2-f2 f7-f5

Դժվար է սևերին ավելի լավ խորհուրդ տալը: Օրինակ՝ 16. ... Ձ:e5-ից հետո դիրքն է՛լ ավելի կբացվեր:

17. e5:f6 Փf8:h6
18. Թf2-h4! ...

Սպառնում է 19. f7+ Աf8 20. Թ:d8+, կամ 20. Թ:h6x:

18. ... Ձd7-e5
19. Թh4:h6 Ձe5-f7

Անհուսալի էր նաև 19. ... Ձ:b3 20. f7+ Ձ:f7 21. Թg7 Նf8 22. Ձf6+ Աe7 23. Ձ:b3-ը:

20. Թh6-e3 ...

Մարտավարական գործողությունների շնորհիվ սպիտակները փնվոր շահեցին՝ դրանով իսկ չթուլացնելով գրոհի թափը:

20. ... Թd8-d6

20. ... Ձ:b3-ը (հուսալով 21. ab Թ:d5-ը) չէր օգնում՝ 21. Ձ:e6!-ի պատճառով:

21. Նa1-d1 ...

Սպիտակները գրոհին «թարմ» ուժեր միացնելու առիթը բաց չեն թողնում:

21. ... Փc8-d7
22. Ձd4:e6!

Սևերը հանձնվեցին. 22. ... Փ:e6 23. Ձf4 Թe5 24. Թ:e5 Ձ:e5 25. Ձ:e6 Ձ:e6 26. Փ:e6-ը ավելի քան համոզիչ էր:

Մնացականյան - Գաժեկ
Չեխոսլովակիա, 1979թ.

1. e2-e4 c7-c5
2. Ձg1-f3 d7-d6
3. d2-d4 c5:d4
4. Ձf3:d4 Ձg8-f6
5. Ձb1-c3 g7-g6
6. Փc1-e3 Փf8-g7
7. f2-f3 0-0
8. Թd1-d2 Ձb8-c6
9. Փf1-c4 ...

Կարևոր քայլ է: Սպիտակները 9. ... d6-d5 առաջխաղացումն են կանխում:



9. ... Փc8-d7
10. h2-h4 ...

Ավելի հաճախ այստեղ երկար փոխատեղում են կատարում, սակայն Է.Մնացականյանը մտադիր է առանց ժամանակ կորցնելու արքայի դեմ գրոհ կազմակերպել:

10. ... Նa8-c8

Այս քայլը նույնպես հնարավոր է, սակայն վերջին տարիներին շատ ավելի ուժեղ է համարվում 10. ... Թa5, և ապա՝ Նfc8 խուսանավումը, որի նպատակը f8 դաշտն արքայի համար ազատելն է և c գծով հակախաղ ձեռնարկելը:

11. Փc4-b3 h7-h5
12. 0-0-0 Ձc6-e5
13. Փe3-g5 ...

Երկուստեք սուր պայքարի էր հանգեցնում 13. g4!?-ը. օրինակ՝ 13. ... Ձc4 14. Փ:c4 Ն:c4 15. gh Ձ:h5 16. Նdg1 e6:

13. ... Նc8-c5
14. f3-f4 Ձe5-c4!
15. Թd2-d3 b7-b5
16. e4-e5! Ձf6-g4 (դ.50)

Չէր կարելի 16. ... de՝ 17. Ձd:b5!-ի պատճառով:

50


Լարվածությունն իր գագաթնակետին հասավ: Սպառնացող ճանկառքին ուշադրություն չդարձնելով՝ սպիտակները զարգացնում են գրոհը:

17. e5:d6 Ձg4-f2
18. Թd3-f3 Ձf2:h1
19. d6:e7 Թd8-c8
20. e7:f8Թ+ Թc8:f8
21. f4-f5! ...

Սևերը ուշացրել են հակագրոհը, և նրանց միայն պաշտպանվելն է մնում:

21. ... Փd7:f5
22. Փb3:c4 b5:c4

Եթե 22. ... Ն:c4?, ապա 23. Ձ:f5:

23. Թf3-f1! Ձh1-g3
24. Թf1-e1! Թf8-b8
25. Ձd4-c6 Թb8-c7?
26. Թe1-e8+ Աg8-h7
27. Ձc6-e7 ...

Սպառնում է Թg8x:
Պարտիայում հետևեց ևս.

27. ... Ձg3-e2+
28. Ձc3:e2 Փg7:b2+
29. Աc1-b1 Թc7:e7
30. Փg5:e7

Սևերը հանձնվեցին:

## ԱԼՅՈԽԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4 Ձg8-f6 (դ.51)

51


1. ... Ձf6 քայլը հիշատակվում է դեռևս Ռ.Ալգայերի «Շախմատ խաղի դասագրքում» (1811թ.): Սկզբնախաղի հիմնադրույթները մշակել է Մ.Կլիֆինը, իսկ առաջին անգամ գործնականում կիրառել է Ա.Ալյոխինը՝ Է.Շտեյնի հետ պարտիայում (Բուդապեշտ, 1921թ.): Այստեղից էլ անվանումը՝ *Ալյոխինի պաշտպանություն*:

Սևերը մրցակցին կենտրոնական զինվորները բավականին առաջ շարժելու հնարավորություն են ընձեռում, որից հետո՝ փոխանակությունների միջոցով «քայքում» են մրցակցի ուժեղ թվացող զինվորային բռունցքը: Ճիշտ է՝ այս դեպքում պետք է հաշվի առնել, որ սպիտակները կարող են տարածքային առավելություն ստանալ:

2. e4-e5 Ձf6-d5
3. d2-d4 d7-d6
4. Ձg1-f3 ...

Կարելի էր նաև 4. c4 Ձb6 5. f4 de 6. fe (*չորս զինվորի տարբերակ՝ տե՛ս Գելլեր-Կորչնոյ պարտիան*):

Եթե սպիտակները բարդությունների չեն ձգտում, ապա կարող են ընտրել 4. c4 Ձb6 5. ed ed 6. Ձc3 շարունակությունը:

4. ... Փc8-g4
5. Փf1-e2 e7-e6
6. 0-0 Ձb8-c6

Գրոհելով e5-ի զինվորը՝ սևերը հարկադրում են մրցակցին d6 դաշտում փոխանակություն կատարել:

7. e5:d6 c7:d6
8. c2-c4 Ձd5-b6
9. b2-b3 Փf8-e7
10. Ձb1-c3 0-0
11. Փc1-e3 ...

*Ալյոխինի պաշտպանության* հիմնական տարբերակն է: Սպիտակներն ազատ խաղ են ստանում, սակայն սևերի դիրքը բավականին ամուր է:

Գելլեր - Կորչնոյ
Լենինգրադ, 1960թ.

1. e2-e4 Ձg8-f6
2. e4-e5 Ձf6-d5
3. d2-d4 d7-d6
4. c2-c4 Ձd5-b6
5. f2-f4 ...

*Ալյոխինի պաշտպանության* գիտակները հավաստիացնում են, որ, եթե հնարավոր է հերքել սկզբնախաղը, ապա հենց ա՛յս տարբերակում պետք է փորձել այդ անել:

5. ... Փc8-f5
6. Ձb1-c3 d6:e5
7. f4:e5 e7-e6
8. Ձg1-f3 ...

Սա ավելի լավ է, քան՝ 8. Փe3 Փb4 9. Ձf3 c5-ը:

8. ... Փf8-e7

Այստեղ հիմնական շարունակությունն է 8. ... Ձc6-ը, որի նպատակը d4 կետում ճնշում գործադրելն է: Երբեմն սևերը, շարունակելով 8. ... Փb4, դրդում են մրցակցին 9. a3 խաղալու՝ թուլացնելով զինվորային շղթան, և ապա՝ փիղը e7 վերադարձնում:

Պարտիայում կատարված քայլը նույնպես հաջող է: Արքայական թևի կարգավորումն ավարտելով՝ սևերը f7-f6 ճեղքումն են նախապատրաստում:

9. Փf1-e2 0-0



10. 0-0 f7-f6
11. Փc1-f4 ...

11. ef Փ:f6 12. Փe3 Ձc6 12. Թd2-ն այս տարբերակի հիմնական գրքերից մեկին կհանգեցներ: Պարտիայում կատարված քայլից հետո սևերն սկսում են կենտրոնի պաշարումը:

11. ... Ձb8-c6
12. e5:f6 Փe7:f6
13. d4-d5 Ձc6-a5
14. Ձf3-e5 Փf6:e5?!

Հետաքրքիր էր 14. ... Թe7-ը:

15. Փf4:e5 Ձa5:c4
16. Փe2:c4 Ձb6:c4
17. Փe5:g7 Ձc4-e3 (դ.52)

52


18. Թd1-e2 ...

18. Թd4!-ը սևերին կստիպեր բավականին բարդ խնդիրներ լուծելու: Իսկ այժմ բարդությունները հօգուտ սևերի են ծավալվում:

18. ... Ձe3:f1
19. Փg7:f8 Ձf1:h2!
20. Փf8-c5 Ձh2-g4
21. d5:e6 Թd8-h4
22. e6-e7 Թh4-h2+
23. Աg1-f1 Թh2-f4+

Սպիտակները պետք է վճիռ կայացնեն՝ արքայի համար թաքստոց ընտրելու հարցում. 24. Աe1! Թg3+ 25. Աd2 Թf4+ 26. Աd1 Ձf6 27. g3! (եթե 27. Ձd5, ապա 27. ... Թa4+ 28. b3 Թd7) 27. ... Թg4, և խաղի հավանական ելքը ոչ-ոքին լիներ:

24. Աf1-g1 Նa8-e8
25. Թe2-f3 ...

25. Ձd5 Թh2+ 26. Աf1 c6-ը, կամ 25. Նd1 b6 26. Նd8 Աf7 27. Թb5 Ն:c7-ը սպիտակներին հավասարություն նույնպես չէին խոստանում:

25. ... Թf4-h2+
26. Աg1-f1 Թh2-h5!
27. Թf3-d5+ Աg8-g7
28. Թd5-d4+ Աg7-g6

Շախերն սպառվեցին: Գրոհելու հերթը սևերինն է:

29. Ձc3-e2 Թh5-h1+
30. Ձe2-g1 b7-b6!
31. Թd5-d8 Ձg4-f6
32. Փc5-a3 Փf5-e4
33. Թd8-d2 c7-c5
34. b2-b4 c5-c4
35. b4-b5 Փc4-d3+

Սպիտակները հանձնվեցին:

## ՊԻՐՑԻ-ՈՒՖԻՄՑԵՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. e2-e4 d7-d6 (դ.53)

53


Զարգացման այս համակարգը, որը, միմյանցից անկախ, հարավսլավացի գրոսմայստեր Վ.Պիրցն ու ռուս վարպետ Ա.Ուֆիմցևն են մշակել, սևերի պատասխան քայլից դատելով՝ կիսաբաց սկզբնախաղ է, սակայն շատ գրքեր *Հին հնդկական պաշտպանություն* են հիշեցնում (*տե՛ս Հին հնդկական պաշտպանություն*):

2. d2-d4 Ձg8-f6
3. Ձb1-c3 g7-g6
4. Ձg1-f3 ...

Ներկայումս 4. f4-ն է հաճախակի հանդիպում, որով e4-e5 առաջխաղացումն է նախապատրաստվում: Ահա՛ հիմնական տարբերակը՝ 4. ... Փg7 5. Ձf3 0-0 6. e5 Ձfd7 7. h4 (ձգտելով բացել սև արքայի դիրքը) 7. ... c5 8. e6 fe 9. h5 gh 10. dc Ձ:c5 11. Ն:h5 Ձbd7 12. Փd3 Ձf6 13. Նh4 Փd7 14. Փe3 Ձ:d3+ 15. Թ:d3 Թe8, և զոհաբերած զինվորի դիմաց սպիտակները նախաձեռնություն են պահպանում:

4. ... Փf8-g7
5. Փc1-g5 0-0

Ավելի ճկուն էր 5. ... c6-ը՝ սպասելով՝ մինչև մրցակիցը որոշակի դարձնի իր ծրագիրը:

6. Թd1-d2 c7-c6

Սպիտակներն ազատ խաղ և գրոհ կազմակերպելու լավ հեռանկարներ ունեն:

Ֆիշեր - Բեննկո
Նյու-Յորք, 1964թ.

1. e2-e4 g7-g6
2. d2-d4 Փf8-g7
3. Ձb1-c3. d7-d6
4. f2-f4 Ձg8-f6
5. Ձg1-f3 0-0
6. Փf1-d3 Փc8-g4
7. h2-h3 Փg4:f3
8. Թd1:f3 Ձb8-c6
9. Փc1-e3 e7-e5
10. d4:e5 d6:e5
11. f4-f5 g6:f5

Ավելի համառ էր 11. ... Ձd4 12. Թf2 Ձd7-ը, սակայն այս դեպքում ևս, շարունակելով 13. g4 և 14. 0-0-0, սպիտակները գրոհը շարունակելու հնարավորությունները կպահպանեին:

12. Թf3:f5 Ձc6-d4
13. Թf5-f2 Ձf6-e8
14. 0-0 Ձe8-d6
15. Թf2-g3 Աg8-h8

15. ... f5-ից հետո վերջնախաղն սպիտակների օգտին էր: Մասնավորապես՝ 16. Փh6 Թf6 17. Փ:g7 Թ:g7 18. Թ:g7+ Ա:g7 19. ef Ձ4:f5 20. Նae1:

16. Թg3-g4 c7-c6:

Պասիվ քայլ է: Ավելի հաջող էր 16. ... c5-ը:

17. Թg4-h5 Թd8-e8? (դ.54)

Սա արդեն սխալ է: Սևերը, հավանաբար, մրցակցի հաջորդ քայլը չէին նկատել և հույս ունեին 18. Փ:d4 ed 19. e5 f5!-ից հետո հակախաղ ստանալ: Պաշտպանության միակ միջոցը 17. ... Ձe6-ն էր, թեև այդ դեպքում ևս սևերի դիրքը բավարար գնահատել չէր կարելի:

54





18. Փe3:d4! e5:d4
19. Նf1-f6!! ...

Հոյակապ է խաղացված: 19. ... Փ:f6-ին, կամ 19. ... h6-ին կվճռեր 20. e5!-ը:

19. ... Աh8-g8
20. e4-e5 h7-h6
21. Ձc3-e2!

Ամենապարզն է: Սպառնում է 22. Ն:d6, իսկ 21. ... Ձb5-ին՝ 22. Թf5:

Սևերը հանձնվեցին:

Գալդունց - Օխոտնիկ
Հունգարիա, 1990թ.

1. e2-e4 d7-d6
2. d2-d4 Ձg8-f6
3. Ձb1-c3 c7-c6

Հազվադեպ հանդիպող քայլ է:

4. g2-g3 e7-e6

Այս և հաջորդ քայլերով սևերը ձգտում են մրցակցի սպիտակադաշտ փղի շարժունակությունը սահմանափակելու: Եթե միանգամից 4. ... d5, ապա 5. e5 Ձfd7 6. e6! fe 7. f4, և սպիտակները նախաձեռնությունը կպահպանեին:

5. Փf1-g2 d6-d5
6. e4-e5 Ձf6-d7
7. f2-f4 c6-c5
8. Ձg1-f3 Ձb8-c6
9. Փc1-e3 c5:d4

9. ...Թb6-ին կհաջորդեր 10.Թd2! Թ:b2 11. Նb1 Թa3 12. Ձb5 Թ:a2 13. 0-0՝ զոհաբերած երկու զինվորի դիմաց նախաձեռնությամբ:

10. Ձf3:d4 Ձd7-b6
11. Փg2-f1 ...

Հաշվի առնելով, որ ձին b6-ում անհաջող դիրք է զբաղեցնում, սպիտակները որոշում են փիղն ակտիվացնել՝ d3 դաշտը տեղափոխելով: Կարելի էր և 13. b3 Փb4 14. Թd3:

11. ... Փc8-d7
12. Փf1-d3 a7-a6

12. ... Ձc4 13. Փ:c4 dc 14. 0-0 (բայց ո՛չ 14. Ձdb5?՝ 14. ... Ձb4! 15. a3 Ձd5 16. Ձ:d5 Փ:b5) 14. ... Փc7 15. Ձdb5 տարբերակում առավելությունն սպիտակներինն էր:

13. Թd1-e2 Նa8-c8
14. Նa1-d1 Թd8-c7
15. Ձd4-f3 Ձc6-b4
16. 0-0 Ձb6-a4
17. Ձc3:a4 Փd7:a4
18. Նd1-c1! ...

Սպիտակները կարգացումով բավականին առաջ են անցել և մտադիր են d3-ում փոխանակությունից հետո գրավել c գիծը:

18. ... g7-g6?

Ձգտելով չեզոքացնելու f4-f5 առաջխաղացումը՝ սևերը ոչ միայն վերջնականապես թուլացնում են դիրքը, այլև թանկագին ժամանակ են վատնում: Հարկավոր էր 18. ... Փc5 խաղալ:

19. a2-a3! Ձb4:d3

19. ... Ձc6-ին կհաջորդեր 20. b3! Փb5 21. Փ:b5 ab 22. b4!, և b5-ի զինվորը պաշտպանելն անհնար կլիներ:

20. c2:d3 Թc7-d7
21. Նc1:c8+ Թd7:c8
22. Նf1-c1 Թc8-d7
23. Փe3-b6 Փa4-c6
24. Ձf3-d4 Թd7-c8

Սպառնում էր 25. Թc2՝ զինվոր շահելով: Սևերը d7 դաշտն արքայի համար են ազատում, որպեսզի՝ վերջինս կարողանա c6 կետը պաշտպանել:

25. Թe2-c2 Աe8-d7
26. b2-b4 Փf8-e7
27. Թc2-c3 Փe7-d8

28. Փb6:d8 Նh8:d8
29. Թc3-c5 Թc8-a8

29. ... Թc7-ին կհաջորդեր 30. a4:

30. g3-g4 ...

Ի՛նչ խոսք՝ 30. Ձ:c6 bc 31. Թd6+ Աe8 32. Թ:c6+ Թ:c6 33. Ն:c6 տարբերակն սպիտակներին շահած նավակային վերջնախաղ կապահովեր, սակայն նրանք ավելի եռանդուն շարունակություն են ընտրում:

30. ... h7-h6 (դ.55)

55



31. Աg1-f2! ...

Արքան g ուղղաձիգից վաղօրոք հեռացվում է: 31. f5-ին կարող էր հաջորդել 31. ... gf 32. gf Նg8+ 33. Աf2 Թf8!, և մրցակիցը հակախաղի հնարավորություն կստանար:

31. ... Փc6-a4
32. f4-f5 Թa8-b8
33. f5-f6 Նd8-e8
34. Թc5-b6! Նe8-d8

Չէր կարելի 34. ... Նc8՝ 35. Ն:c8 Ա:c8 36. Ձ:e6! fe 37. Թ:e6+ Աc7 38. Թd6+ Աc8 39. Թ:b8+ Ա:b8 40. f7:

35. b4-b5 Աd7-e8
36. Ձd4:c6 Նd8-c8
37. Ձc6-c7+ Աe8-f8
38. e5-e6 Փa4:b5
39. e6:f7 Փb5-c6
40. Թb6-c5+

Սևերը հանձնվեցին:

# ՓԱԿ ՍԿԶԲՆԱԽԱՂԵՐ

## ԹԱԳՈՒՀՈՒ ԳԱՄԲԻՏ

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 (դ.56) ...

56



Այս սկզբնախաղում առաջին իսկ քայլերից կենտրոնը տիրելու համար պայքար է ծավալվում: Սևերի քայլի ընտրությունից կախված (այսինքն՝ կընդունե՞ն արդյոք նրանք կոխաբերությունը, թե՞ այլ կերպ կխաղան) սկզբնախաղն *ընդունված* կամ *մերժված* գամբիտի է հանգում:

## ԹԱԳՈՒՀՈՒ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳԱՄԲԻՏ

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 d5:c4 (դ.57)



57



Սևերը զինվորը վերցնում են ոչ թե այն շահելու առումով, այլ՝ ռազմավարական նկատառումներից ելնելով: Ժամանակավորապես կենտրոնը զիջելով, բայց և արագ զարգացումն ավարտելով՝ նրանք մտադիր են այնուհետև գրոհել կենտրոնը:

Սպիտակները հեշտությամբ զինվորը կարող են հետ բերել՝ շարունակելով.

3. Ձg1-f3 ...

Եթե միանգամից 3. e3 կամ 3.e4, ապա 3. ... e5!-ից հետո սևերն ազատ խաղի հնարավորություն կստանային:

3. ... Ձg8-f6

3. ... b5-ի միջոցով զինվորը պահպանելու փորձը նպատակահարմար չէր. շարունակելով 4. a4 c6 5. e3 a6 6. b3! cb 7. ab cb 8. Փ:b5+՝ սպիտակները զինվորն այնուամենայնիվ հետ կբերեին և դիրքային բացահայտ առավելություն կպահպանեին:

4. e2-e3 e7-e6
5. Փf1:c4 c7-c5
6. 0-0 ...

Սպիտակները փոխատեղումը չպետք է ուշացնեն, որպեսզի առանց հապաղելու 'արքայական նավակը կենտրոնի համար մղվող պայքարում ներգրավեն:

6. ... a7-a6

Այս քայլով սևերն իրենց հետագա ծրագիրն են ընդգծում՝ կապված b7-b5 առաջխաղացման և սպիտակադաշտ փիղը զարգացնելու հետ:

Հնարավոր էր նաև Վ.Սմոլնիցի առաջարկած 6. ... Ձc6-ը, որը 7. Թe2 cd 8. Նd1 Փe7 9. ed 0-0 10. Ձc3 Ձb4-ից հետո սևերին ճնշված դիրք, բայց հուսալի խաղ է խոստանում:

Եթե սևերը մերժում են գամբիտը, ապա ստիպված են d5-ի զինվորը պաշտպանելու: Դա հնարավոր է ինչպես 2. ... e6-ի, այնպես էլ՝ 2. ... c6-ի միջոցով, քանի որ, ինչպես արդեն առիթ ենք ունեցել համոզվելու, հաջող չէ 2. ... Ձf6-ը՝ 3. cd-ի պատճառով:

## ՕՐԹՈԴՈՔՍԱԼ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 e7-e6
3. Ձb1-c3 Ձg8-f6 (դ.58)

58



Այս կատակ անվանումը հնարել է Զ. Տարաշը՝ այն նպատակով, որ պաշտպանության այս համակարգը հնարավոր լինի տարբերել *Թագուհու գամբիտի* այլ տարբերակներից:

Սևերի խաղում հիմնական թերությունը c8-ի փղի զարգացման հետ առնչվող դժվարությունն է համարվում:

4. c4:d5 e6:d5

Բացի d5-ում կատարված փոխանակությունից՝ հաճախ կիրառվում է 4. Փg5 Փe7 5. e3 0-0 6. Ձf3 Ձbd7 7. Նc1 c6-ը, որտեղ սպիտակների խաղը, թերևս, ավելի ազատ է: 8. Փd3-ից հետո սևերը սովորաբար 8. ... dc 9. Փ:c4 Ձd5 10. Փ:e7 Թ:e7 11. 0-0 Ձ:c3 12. Ն:c3 e5 շարունակությունն են ընտրում՝ պարզեցնելով դիրքը և վերականգնելով հավասարակշռությունը կենտրոնում: Հետաքրքիր դիրքային խաղի էր հանգեցնում և 4. Փf4-ը (*տե՛ս Պետրոսյան - Բիխովսկի պարտիան*):

5. Փc1-g5 Փf8-e7
6. e2-e3 c7-c6
7. Փf1-d3 0-0
8. Թd1-c2 Ձb8-d7
9. Ձg1-f3 Նf8-e8
10. 0-0 Ձd7-f8
11. Նa1-b1 ...

Այնուհետև, շարունակելով b2-b4, և Նf1-c1, սպիտակներն ակտիվ խաղի են ձգտում թագուհու թևում: Իսկ սևերը, ձին տեղադրելով e4-ում, պետք է փորձեն արքայական թևում հակագրոհի անցնել:

## ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 c7-c6 (դ.59)

59


Սկզբնախաղն այս մշակել են ռուս և չեխ շախմատիստները: Այստեղից էլ անվանումը՝ *Սլավոնական պաշտպանություն*: Տեսության հիմնաքարը դրվել է 1840-ական թվականներին՝ հիմնականում Կ.Յանիշի ջանքերով:

3. Ձg1-f3 ...

Հնարավոր է և 3. cd (*փոխանակման տարբերակ*), որը համաչափ դիրքի կհանգեցներ. հակախաղ ստանալը սևերին բավականին դժվար կլիներ:

3. ... Ձg8-f6
4. Ձb1-c3 d5:c4

Այս հիմնական տարբերակում, զիջելով կենտրոնը, սևերն այնուհետև ֆիգուրներով ճնշման են այն ենթարկում:

4. ... e6 5. cd ed 6. Փg5 շարունակությունը խաղն արդեն մեկ ծանոթ հունով կտաներ:

Հաջող չէր 4. ... Փf5-ը՝ 5. cd cd 6. Թb3, և փիղն ստիպված կլիներ c8 վերադառնալու (6. ... b6-ը կթուլացներ դիրքը):



5. a2-a4 Փc8-f5
6. e2-e3 e7-e6
7. Փf1:c4 Փf8-b4
8. 0-0 0-0
9. Թd1-e2 ...

Սպիտակներն ավելի ազատ խաղ ստացան, սակայն սևերի դիրքն ամուր է:

Լպուտյան - Կայդանով
Իրկուտսկ, 1984

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 d5:c4
3. Ձg1-f3 a7-a6
4. e2-e4!? ...

Հնարավոր էր և 4. a4, որից հետո խաղը կարող էր ընթանալ այսպես՝ 4. ... Ձf6 5. e3 Փg4 6. Փ:c4 e6 7. Ձbd2 Ձc6 8. 0-0 Փe7 9. Փe2 0-0 10. Ձc4 Ձb4՝ հավասար հնարավորություններով (Վահանյան - Կիմ, 1969թ.):

4. e3 Փg4 5. h3 Փh5 6. g4 Փg6 7. Ձe5 Ձd7 8. Ձ:c4 b5 9. Ձa5 c5 10. Փd2 Ձgf6 շարունակությունն սպիտակներին ոչ մեծ առավելություն էր խոստանում:

4. ... b7-b5
5. a2-a4 Փc8-b7
6. a4:b5 ...

Առաջին հայացքից՝ բարդ խաղի էր հանգեցնում 6. Ձc3 b4 7. Փ:c4 e6 (7. ... bc?՝ 8. Թb3) 8. d5 bc 9. Թb3 ed 10. Թ:b7 dc, և ապա՝ 11. Թ:a8 cb 12. Փ:b2 Փb4+ 13. Աf1 c3 շարունակությունը: Սակայն հնարավորությունները այստեղ հավասար կլինեին:

6. ... a6:b5

Լավ չէր 6. ... Փ:e4?-ը՝ 7. Փ:c4:

7. Նa1:a8 Փb7:a8
8. Ձb1-c3! e7-e6

8. ... b4-ին կհաջորդեր 9. Թa4+:

9. Ձc3:b5 Փa8:e4
10. Փf1:c4 Փe4:f3?

Սևերը զարգացումով բավականին հետ են մնացել, ուստի զարգացած ֆիգուրի (որը նաև թագուհու թևի թույլ դաշտերն էր հսկում) փոխանակությունը նպատակահարմար չէր: Ճիշտ էր արքայական թևի զարգացումն սկսելը:

Հաջող չէր նաև 10. ... c6-ը՝ 11. Ձe5!? cb 12. Փ:b5+ Աe7 13. Թa4 (սպառնում է 14. Թa7+) 13. ... Փg6 (13. ... Ձf6՝ 14. Թa3+, կամ 13. ... Թc7՝ 14. Փg5+!) 14. Թa7+ Աf6 15. Թ:b8: Սպիտակները հետ կբերեին ֆիգուրը՝ պահպանելով նյութական ու դիրքային առավելությունը:

11. Թd1:f3 c7-c6 (դ.60)

60


12. 0-0! Թd8-b6

Չէր օգնում 12. ... cb-ն՝ 13. Փ:b5+ Ձd7 14. Փf4-ից հետո՝ Նf1-a1-a8 սպառնալիքից բավարար պաշտպանություն չկար:

13. Ձb5-c3 Թb6:d4

Ուժերը կարգավորելու փոխարեն՝ սևերը շարունակում են «կրակից շագանակներ հանել»:

14. Թf3-g3! Ձb8-d7

14. ... Փd6 15. Փe3! Փ:g3 (15. ... Թe5՝ 16. f4 Թf5 17. Թ:g7 Թf6 18. Փd4!) 16. Փ:d4 e5 17. Փa7 տարբերակում սևերը ֆիգուր կկորցնեին:

15. Նf1-d1! Թd4-e5

Չէր կարելի 15. ... Թ:c4՝ 16. Թc7 Ձgf6 17. Թc8+ Աe7 18. Փg5!-ը մատի կհանգեցներ:

16. Փc1-f4 Թe5-a5
17. Փf4-c7 Թa5-a7
18. Ձc3-e4 Ձg8-f6

Վերջապես՝ արքայական թևի ձին տեղից շարժվեց, բայց արդեն ուշ է:

19. Ձe4-d6+ Փf8:d6
20. Թg3:d6 g7-g6

Միակ պաշտպանությունն է 21. Փ:e6! fe 22. Թ:e6+ Աf8 23. Փd6x սպառնալիքից:

21. b2-b4 Թa7-a4
22. Նd1-e1 Ձf6-d5
23. Փc4:d5 c6:d5
24. h2-h4 d5-d4
25. Փc7-a5 Թa4-b3
26. Նe1-c1

Սևերը հանձնվեցին. 27. Նc8+ սպառնալիքն անկասելի էր:

Տ. Պետրոսյան - Բիխովսկի
Մոսկվա, 1968թ.

1. c2-c4 e7-e6
2. d2-d4 d7-d5
3. Ձb1-c3 Փf8-e7
4. Փc1-f4 Ձg8-f6
5. e2-e3 0-0
6. Նa1-c1 c7-c5

Ավելի հուսալի էր 6. ... c6-ը:

7. d4:c5 Ձb8-c6
8. Ձg1-f3 Փe7:c5
9. a2-a3 d5-d4

Սևերը հակախաղ ծավալելու հնարամիտ լուծում են գտնում: Այժմ չի անցնում 10. Ձa4-ի՝ 10. ... Թa5+ 11. b4 Ձ:b4!:

10. e3:d4 Ձc6:d4
11. Ձf3-e5! b7-b6
12. Փf1-d3 Փc8-b7
13. 0-0 h7-h6
14. Նf1-e1 Ձd4-c6

Ձին կենտրոնում ակտիվ դիրք էր զբաղեցնում, ուստի նրա նահանջը տրամաբանական չէր:

15. Նc1-c2 ...

Իհարկե, ո՛չ 15. b4?, որին կհաջորդեր 15. ... Փ:f2+! 16. Ա:f2 Թd4+ 17. Աg3 g5!՝ հետ բերելով ֆիգուրը:

15. ... Թd8-c8
16. Ձe5-g4! Փc5-e7
17. Ձg4:f6+ Փe7:f6
18. Ձc3-e4 Փf6-e7
19. Թd1-h5 Նf8-d8

Սևերից ճշգրիտ խաղ է պահանջվում, սակայն նրանք սխալ են թույլ տալիս՝ արքայական թևի պաշտպանությունից հեռացնելով նավակը: Ճիշտ էր 19. ... Ձd4-ը:

20. Նc2-c3 f7-f5
21. Ձe4-g3 Փe7-f6 (դ.61)

61



Ուշադրություն չդարձնելով, որ նավակը գրոհված է, Տ.Պետրոսյանը նաև ձին է կոհաբերում:



22. Ձg3:f5!! Փf6:c3

Վատ էր 22. ... ef-ը՝ 23. Փ:f5 Նd7 24. Փe6+ Աh8 25. Փ:h6!, և պաշտպանվելն անհնար կլիներ:

23. Ձf5:h6+! g7:h6
24. Թh5-g6+ Փc3-g7

Իհարկե, ո՛չ 24. ... Աf8?՝ 25. Փ:h6+ Աe7 26. bc՝ սպառնալով 27. Փg5+: Իսկ պարտիայում կատարած քայլից հետո սևերին նոր անախորժություններ են սպասում:

25. Փf4:h6 Նd8-d7
26. Թg6-h7+ Աg8-f8
27. Նe1:e6! Նd7-e7
28. Նe6-f6+ Աf8-e8
29. Թh7-g8+

Սևերը հանձնվեցին:

Ալյոխին - Էյվե
Ամստերդամ, 1938թ.

1. d2-d4 d7-d5
2. c2-c4 c7-c6
3. Ձg1-f3 Ձg8-f6
4. c4:d5 ...

Այս տարբերակը դիրքային պայքարի է հանգեցնում, սակայն Ալյոխինին հաջողվում է սրել խաղը և բարդ ու ինքնատիպ դիրք ստեղծել:

4. ... c6:d5
5. Ձb1-c3 Ձb8-c6
6. Փc1-f4 Փc8-f5
7. e2-e3 a7-a6?

Պասիվ քայլ է, և սպիտակներն անմիջապես օգտվում են առիթից:

8. Ձf3-e5! Նa8-c8
9. g2-g4! (դ.62) ...

62



9. ... Փf5-d7

Նահանջելու փաստը սևերի ոչ ճիշտ ծրագիր ընտրելու ամենաակնառու ապացույցն է: Ավելի թույլ էին 9. ... Ձ:e5 10. gf Ձc4 11. Թa4+ Թd7 12. Թ:d7+ Ա:d7 13. Ձa4, կամ 9. ... Փg6 10. h4 Ձ:e5 11. de Ձe4 12. Թa4+՝ հետագա Ձ:d5-ով, շարունակությունները:

10. Փf1-g2 e7-e6
11. 0-0 h7-h6
12. Փf4-g3 h6-h5?

Ժամանակի կորուստ է: Բնական կլիներ 12. ... Փe7-ը՝ հետագա փոխատեղումով, չնայած այդ դեպքում ևս սպիտակների դիրքը գերադասելի էր: Սևերը մտադիր են արքայական թևում հակախաղ սկսել՝ հուսալով 13. g5 h4! 14. Փf4 Ձh5-ին, կամ 14. gf hg 15. fg3 gf 16. Ձ:d7 Ա:d7-ին, սակայն սպիտակները քայլերի ավելի ճիշտ հաջորդականություն են գտնում:

13. Ձe5:d7 Ձf6:d7

Սևերն ստիպված են զինվոր կոհաբերելու՝ 13. ... Թ:d7 14. g5 Ձg8 15. e4 de 16. d5 տարբերակում սպիտակներն անկասելի գրոհ կստանային:

14. g4:h5 Ձd7-f6
15. Փg2-f3 Փf8-b4

16. Նa1-c1 Աe8-f8
17. a2-a3 Փb4:c3
18. Նc1:c3 Ձc6-e7

Սևերը փոխանակությունների միջոցով ցանկանում են դիրքը պարզեցնել և խաղը ոչ-ոքիի հանգեցնել: Սակայն սպիտակները, օգտագործելով ակտիվ փղերն ու օգտվելով այն հանգամանքից, որ սև նավակները ժամանակավորապես «խաղից դուրս» են մնացել, արագ հասնում են առավելության:

19. Թd1-b3! Նc8:c3

Այլապես՝ սպիտակները կկրկնապատկեին նավակները:

20. b2:c3 Թd8-d7
21. Թb3-b6 Ձe7-c8

Եթե 21. ... Ձ:h5, ապա 22. Փ:h5 Ն:h5 23. Նb1:

22. Թb6-c5+ Աf8-g8
23. Նf1-b1 b7-b5

23. ... Ձ:h5-ին կհաջորդեր 24. c4!՝ ջախջախելով մրցակցի զինվորային կենտրոնը:

24. h5-h6! ...

Դիրքային կոմբինացիաների շղթայի սկիզբն է, որի նպատակը եզրափակիչ գրոհի համար գծեր բացելն է:

24. ... g7:h6

Սխալ էր 24. ... Ն:h6-ը՝ 25. a4 Ձa7 26. Թb6:

25. Փg3-e5 Աg8-g7

Իհարկե, ծանր է արքայի նման քայլով սեփական ձին կաշկանդման ենթարկելը, սակայն այլ ելք չկար:

26. a3-a4! b5:a4
27. c3-c4! Ձc8-e7

Չէր կարելի 27. ... dc՝ 28. Փ:f6+:

28. c4:d5 Ձe7:d5

Կամ 28. ... ed 29. Նb6 Ձg8 30. Թ:d5՝ հեշտ հաղթանակով:

29. Աg1-h1 ...

Վատ էր 29. Փ:d5 ed 30. Նb6?-ը՝ 30. ... Թg4+-ի պատճառով:

29. ... Նh8-c8
30. Նb1-g1+ Աg7-h7
31. Թc5-a3! ...

Թագուհու այս հանդարտ խուսանավումը փաստորեն վճռում է պայքարի ելքը. մասնավորապես՝ 32. Թd3+ սպառնալիքից բավարար պաշտպանություն չկա: Այսպես՝ 31. ... Ձe8-ին 32. Թf8 կհաջորդեր, իսկ 31. ... Թd8-ին՝ 32. Թd3+ Աh8 33. Փ:d5 Թ:d5+ (կամ 33. ... ed 34. Թf5 Նc6 35. Թh5) 34. e4:

31. ... Նc8-g8
32. e3-e4 Նg8:g1+
33. Աh1:g1 Թd7-b5
34. e4:d5 Թb5-b1+
35. Աg1-g2 Թb1-g6+
36. Աg2-f1 Թg6-b1+
37. Աf1-g2 Թb1-g6+
38. Փe5-g3 Ձf6:d5
39. Փf3:d5 e6:d5
40 Թa3:a4 h6-h5
41. h2-h4

Սևերը հանձնվեցին:

## ԹԱԳՈՒՀՈՒ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԽԱՂ

Այս սկզբնախաղը՝ զարգացման այն համակարգերն է ընդգրկում, որոնք սկսվում են d4 քայլով, բայց c2-c4 չի խաղացվում:

Ահա՛ դրանցից մի քանիսը.



## ՎԵՐԵՍՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳ

1. d2-d4 d7-d5
2. Ձb1-c3 Ձg8-f6
3. Փc1-g5 Փc8-f5 (դ.63)

63


Այս համակարգում, որը մանրամասն հետազոտել, ապա՝ հաջողությամբ կիրառել է Գ.Վերեսովը, սպիտակները զինվորային ուժեղ կենտրոնի ստեղծման են ձգտում, սակայն դա միայն դիրքի որոշ թուլացման և ժամանակի (քայլերի) կորստյան գնով է կատարվում:

## ՑՈՒԿԵՐՏՈՐԹԻ ՀԱՄԱԿԱՐԳ

1. d2-d4 d7-d5
2. Ձg1-f3 Ձg8-f6
3. e2-e3 e7-e6
4. Փf1-d3 c7-c5
5. b2-b3 (դ.64) ...

64


Վերջին քայլի նպատակը փղի (Փb2) աջակցությամբ ձիով e5 կետը նվաճելն է: Սևերին հաճախ հաջողվում է հավասարեցնել խաղը:

## ՔՈԼԵԻ ՀԱՄԱԿԱՐԳ

1. d2-d4 d7-d5
2. Ձg1-f3 Ձg8-f6
3. e2-e3 e7-e6
4. Փf1-d3 c7-c5
5. c2-c3 Ձb8-c6
6. Ձb1-d2 (դ.65) ...

65


Այս դիրքին կարելի էր և քայլերի այլ հաջորդականությամբ (սա չի հակասում Քոլեի մտահղացմանը) հասնել: Սպիտակները ձգտում են, որքան հնարավոր է արագ, արքայական թևի զարգացումն ավարտելու և, e4 քայլով բացելով կենտրոնը, արքայական թևում ֆիգուրներով գրոհ կազմակերպելու: Հետագայում այս համակարգը կատարելագործեց. դրան նոր երանգավորում տվեց և գործնականում ինքնավստահ կիրառեց Տ.Պետրոսյանը (*տե՛ս Պետրոսյան - Լյուբլինսկի պարտիան*):

## ԲԼԵՔՄԱՐԻ ԳԱՄԲԻՏ

1. d2-d4 d7-d5
2. e2-e4 (դ.66) ...

66


Այսպես կոչված *Բլեքմարի գամբիտն* է. խաղը կարող է հետևյալ ընթացքն ստանալ.

2. ... d5:e4
3. Ձb1-c3 Ձg8-f6
4. f2-f3 ...

Հնարավոր էր և 4. Փg5:

4. ... e4:f3
5. Ձg1:f3 g7-g6

Սևերի համար վտանգավոր չէր նաև 5. ... Փf5 6. Ձe5 e6 7. g4-ը՝ 7. ... Ձe4!-ի պատճառով:

6. Փf1-c4 Փf8-g7

Զոհաբերած զինվորի դիմաց սպիտակները փոխհատուցում չստացան:

Պետրոսյան - Լյուբլինսկի
Մոսկվա, 1949թ.

1. d2-d4 Ձg8-f6
2. Ձg1-f3 e7-e6
3. Փc1-g5 ...

Այս քայլը բազմիցս հաջողությամբ կիրառել է Տ.Պետրոսյանը: Քայլի իմաստը պարզ կդառնա քիչ հետո:

3. ... c7-c5
4. e2-e3 Փf8-e7
5. Ձb1-d2 d7-d5
6. c2-c3 Ձb8-d7
7. Փf1-d3 0-0

Անճշտություն է (ինչպես Պետրոսյանն է նշել), որը սպիտակներին ձիով e5 դաշտը ներխուժելու և եռանդուն խաղ ծավալելու հնարավորություն է ընձեռում: Ճիշտ կլիներ 7. ... Թc7-ը:

8. Ձf3-e5! (դ.67) ...

67


Եթե ձին e5-ում հաստատելը չհաջողվեր, ապա ամբողջ համակարգն սպիտակներին ոչինչ չէր խոստանա: Այժմ բացահայտվում է 7. ... Թc7 քայլի իմաստը՝ ձին e5 դաշտն անկարող կլիներ ներխուժել, իսկ փիղը ներգրավելը՝ 8. Փf4, ոչինչ չէր տա՝ 8. ... Փd6-ի պատճառով:

8. ... Ձd7:e5
9. d4:e5 Ձf6-d7
10. Փg5-f4! ...

10. Փ:e7 Թ:e7 11. f4-ից, կամ 11. Ձf3-ից հետո սևերը 11. ... f6 քայլով անմիջապես կսկսեին գրոհին սպիտակների զինվորային սեպի դեմ:

10. ... f7-f5

10. ... f6-ին կհաջորդեր 11. Թh5՝ հարկադրելով 11. ... f5 (11. ... g6-ին՝ 12. Փ:g6! hg 13. Թ:g6+ Աh8 14. h4 fe 15. Թh5+ Աg8 16. Փh6 Նf6 17. Նh3):

11. h2-h4! ...

Փիղը f4 դաշտում իրեն կարող է ապահով զգալ, և g2-g4 առաջխաղացումը երկար սպասեցնել չի տա:

11. ... c5-c4

h4-ի զինվորը վերցնել չէր կարելի՝ 12. Թh5-ի պատճառով:

12. Փd3-c2 b7-b5

Ճիշտ կլիներ միանգամից 12. ... Ձc5 խաղալ, որ հարկ եղած դեպքում Ձc5-e4 քայլով սպիտակադաշտ փղի անկյունագիծը փակվեր:

13. Ձd2-f3 Ձd7-c5
14. g2-g4 b5-b4
15. g4:f5 ...

«Շտապողականություն էր: Ինձ բացարձակապես դուր չեկավ 15. bc Ձd3+ 16. Փ:d3 Փ:b4+ 17. Աf1 cd 18. Թ:d3 fg, կամ 18. ... a5 շարունակությունը՝ սպիտակների գրոհից հետք անգամ չէր մնում:

Ուժեղ էր 15. Ձd4-ը: Սակայն մտածեցի, որ փութացված տարբերակն ինձ ուղղակի հաղթանակ կբերի», - Տ.Պետրոսյան (*որոշ կրճատումներով*):

15. ... e6:f5
16. Ձf3-g5 g7-g6?

Սևերն արգելում են թագուհուն h5 դաշտը ներխուժել՝ չնկատելով պարզորոշ սպառնալիքը:

16. ... h6-ից հետո ոչինչ չէր խոստանում 17. Թh5 Ձd3+ 18. Փ:d3 cd 19. Թg6 hg 20. hg Թe8 21. Թh7+ Աf7 22. Նh6 Նg8-ը: 17. Թh5-ին հնարավոր էր և 17. ... Թe8, որից հետո սպիտակները միայն որոշ դիրքային առավելություն կպահպանեին:

17. h4-h5! ...

Այժմ արդեն h ուղղաձիգն է բացվում, քանի որ 17. ... Փ:g5-ին կհաջորդեր 18. Փ:g5 Թ:g5 19. Թ:d5+ Փe6 20. Թ:c5, և սպիտակների առավելությունը կասկած չէր հարուցի:

17. ... Ձc5-d3+
18. Փc2:d3 c4:d3
19. h5:g6 h7:g6

19. ... Փ:g5-ը ոչ բարդ ծուղակ էր՝ 20. Թh5 h6!, բայց, 20. Ն:h7!-ից հետո, նույնպես պարտության էր հանգեցնում:

20. Թd1:d3 b4:c3
21. b2:c3 Փe7:g5
22. Փf4:g5 Թd8-a5
23. Փg5-f6 Նf8-e8
24. Թd3-d4 Աg8-f7
25. e5-e6+ Նe8:e6
26. Փf6-d8

Սևերը հանձնվեցին:

## ՀՆԴԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԽԱՂԵՐ

1. d2-d4 քայլին պարտադիր չէ 1. ... d7-d5 պատասխանել: Սևերը կարող են համաչափությունից շեղվել և շարունակել 1. ... Ձg8-f6:

Այս քայլով ոչ միայն ձին է զարգացվում, այլև խոչընդոտվում է սպիտակների e2-e4 առաջխաղացումը:

Կախված նրանից, թե հետագայում մրցակիցները խաղը զարգացնելու ի՞նչ ծրագրեր կընտրեն, առաջանում են սկզբ-

նախադային տարբեր կառուցվածքներ, որոնք բոլորն էլ մեկ ընդհանուր անուն ունեն՝ *Հնդկական սկզբնախաղեր*: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

## ՆԻՄՑՈՎԻՉԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 Ձg8-f6<br>
2. c2-c4 e7-e6<br>
3. Ձb1-c3 Փf8-b4 (դ.68)

68


Սևերը ցանկանում են e4 դաշտը հսկողության տակ պահել: Այդ նպատակով կաշկանդվում է c3-ի ձին:

4. e2-e3 0-0<br>
5. Փf1-d3 d7-d5<br>
6. Ձg1-f3 c7-c5<br>
7. 0-0 Ձb8-c6

Հնարավոր էր նաև 7. ... Ձbd7 8. a3 dc 9. Փ:c4 cd 10. ed Փ:c3 11. bc Թc7 12. Թe2 b6: Սևերը հասցրին ավարտել զարգացումը:

8. a2-a3 Փb4:c3<br>
9. b2:c3 d5:c4<br>
10. Փd3:c4 Թd8-c7

Սևերը պատրաստվում են e6-e5 խաղալ և բացել c8-ի փղի ճանապարհը: Կողմերի հնարավորությունները մոտավորապես հավասար են:

Շաբոյան - Մեջագեր<br>
Դրեզդեն, 1989թ.

1. d2-d4 Ձg8-f6<br>
2. Ձg1-f3 e7-e6<br>
3. c2-c4 Փf8-b4+<br>
4. Ձb1-c3 c7-c5<br>
5. d4:c5!? ...

Սովորաբար 5. g3 են խաղում, որին կարող էր հաջորդել 5. ... cd 6. Ձ:d4 Ձe4 (կարելի է և 6. ... 0-0, 6. ... Թc7 կամ 6. ... Ձc6 շարունակել) 7. Թd3 Թa5 8. Ձb3 Ձ:c3 9. Փd2 (9. Ձ:a5?՝ Ձe4+ 10. Փd2 Փ:d2+, և 11. ... Ձ:f2+) 9. ... Ձe4 10. Թ:e4 Փ:d2+ 11. Ձ:d2 0-0 12. Փg2 Ձc6՝ հավասար հնարավորություններով:

5. ... Ձb8-a6<br>
6. g2-g3 Ձa6:c5<br>
7. Փf1-g2 Ձc5-e4<br>
8. 0-0 ...

Զինվորի զոհաբերության առաջարկ:

8. ... Ձe4:c3<br>
9. b2:c3 Փb4-e7

9. ... Փ:c3 10. Նb1 Թa5 11. Թb3, 12. Փa3-ից հետո սպիտակները զինվորի դիմաց ավելի քան բավարար փոխհատուցում կստանային:

10. Ձf3-d4 0-0<br>
11. Նa1-b1 Թd8-a5<br>
12. Փc1-f4!? ...

Նյութական կորուստների առջև կանգ չառնելով՝ սպիտակները ձգտում են որքան հնարավոր է արագ ստանձնելու նախաձեռնությունը: Բացի այդ՝ սպիտակները ծուղակ էին նախապատրաստել՝ 12. ... Թ:c3-ին կհաջորդեր 13. Ձb5 Թ:c4 14. Ձc7 Նb8 15. Ձ:e6՝ որակ շահելով:

12. ... e6-e5?!



Ավելի ճիշտ էր 12. ... d5-ը՝ փորձելով զարգացնել թագուհու թևը:

13. Նb1-b5 Թa5:a2

13. ... Թ:c3-ը նույնպես անբավարար էր՝ 14. Ն:e5 Փd6 15. Նe3 Թb4 16. Ձc2՝ շահելով փիղը:

14. Նb5:e5 Փe7-d8

Հաջող չէր 14. ... Փd6-ը, քանի որ 15. Ձf5! Փ:e5 16. Փ:e5-ից հետո f6 և g7 կետերը պաշտպանելն անհնար կլիներ:

15. Թd1-d3 Փd8-c7<br>
16. Ձd4-f5! Թa2-a6 (դ.69)

69


16. ... Փ:e5-ին նորից կհետևեր նշված տարբերակը:

Սպիտակների բոլոր ֆիգուրները պատրաստ են գրոհի:

17. Ձf5:g7! Փc7:e5

Անհապաղ պարտության էր հանգեցնում 17. ... Ա:g7-ը՝ 18. Նg5+ Աh8 19. Փ:c7, կամ 18. ... Աh6 19. Նg6++:

Սակայն պարտիայում կատարած քայլից հետո էլ սևերի դիրքը հեռու է բավարար լինելուց:

18. Փf4:e5 Աg8:g7<br>
19. Թd3-f5! ...

Սպառնում է 20. Թg5+:

19. ... h7-h6<br>
20. Թf5-g4+ Աg7-h8

Չէր կարելի 20. ... Աh7՝ 21. Փe4+ Աh8 22. Թf5:

21. Թg4-f4 Աh8-g7<br>
22. Նf1-d1 Նf8-e8

Չէր փրկում և 22. ... d5-ը՝ 23. Ն:d5 և 24. Նd6-ի պատճառով:

23. Նd1-d6 Թa6:d6

Անհուսալի էր և 23. ... Թa1+-ը՝ 24. Փf1 Ն:e5 25. Թ:f6+:

24. Փe5:d6 a7-a5<br>
25. e2-e4 Նe8-e6<br>
26. c4-c5! a5-a4<br>
27. e4-e5 Ձf6-e8<br>
28. Փg2-d5 a4-a3<br>
29. Փd5-a2 Նa8-a6<br>
30. Թf4-g4+ Նe6-g6<br>
31. Թg4-d4 ...

Սպառնում է 32. e6+:

31. ... Աg7-g8<br>
32. Թd4-d5 Նg6-g7<br>
33. f2-f4 ...

Խաղի ելքը վճռված է: Սևերն անկարող են կասեցնել զինվորի առաջընթացը դեպի f6 դաշտը:

32. ... Նa6-c6<br>
34. f4-f5 b7-b6<br>
35. f5-f6 Նg7-h7<br>
36. Թd5-e4 Փc8-b7

Վերջապես՝ փիղը տեղից շարժվեց, սակայն այն սևերին արդեն օգնել չի կարող: 36. ... Աh8 37. Փb1-ից հետո մատն անխուսափելի էր:

37. Թe4-g6+ Աg8-h8<br>
38. Փa2:f7

Սևերը հանձնվեցին:

## ԳՐՅՈՒՆՖԵԼԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 Ձg8-f6<br>
2. c2-c4 g7-g6

3. Ձb1-c3    d7-d5 (դ.70)

70


Համեմատաբար նոր սկզբնախաղ է:

Սևերը մրցակցին զինվորային կենտրոն ստանալու հնարավորություն են ընձեռում, բայց այնուհետև ֆիգուրներով ու զինվորներով գրոհում են այն: Սովորաբար շատ լարված պայքար է ծավալվում, ինչը կողմերից ճշգրիտ խաղ է պահանջում:

Մենք այս պաշտպանության միայն հիմնական տարբերակին կանդրադառնանք:

4. c4:d5    Ձf6:d5
5. e2-e4    Ձd5:c3

5. ... Ձb6-ին հնարավոր էր 6. h3! (թույլ չտալով f3-ում կարգավորվող ձիու հնարավոր կաշկանդումը) 6. ... Փg7 7. Ձf3 0-0 8. Փe2 Ձc6 9. Փe3՝ պահպանելով դիրքերը կենտրոնում:

6. b2:c3    c7-c5

6. ... Փg7-ը միայն քայլերի հաջորդականության փոփոխության կհանգեր:

7. Փf1-c4    Փf8-g7
8. Ձg1-e2    ...

Ձին այստեղ հարմար դիրք է զբաղեցնում: 9. Ձf3 Փg4 10. Փe3 Թa5-ից հետո սևերը c3 և d4 զինվորների վրա ուժեղ ճնշում կգործադրեին:

8. ...    c5:d4
9. c3:d4    Ձb8-c6
10. Փc1-e3    0-0

10. ... Թa5+-ին կհաջորդեր 11. Փd2 Թh5 12. d5!, և անհաջող կլիներ 12. ... Փ:a1-ը՝ 13. Թ:a1 Ձc5 14. f4՝ հաղթանակով:

11. 0-0    ...

Սպիտակներին հաջողվեց զինվորային կենտրոնն ամրացնել, և նրանք բավական ազատ խաղ ստացան: 11. ... Ձa5 12. Փd3 b6, այնուհետև՝ փիղը b7-ում կարգավորելուց հետո սևերը e7-e6 են խաղում՝ թույլ չտալով d զինվորին առաջ շարժվելու:

Շտեյն - Կարպով
Մոսկվա, 1972թ.

1. c2-c4    c7-c5
2. Ձg1-f3    Ձg8-f6
3. Ձb1-c3    d7-d5
4. c4:d5    Ձf6:d5
5. d2-d4    Ձd5:c3
6. b2:c3    g7-g6
7. e2-e4    Փf8-g7

Քայլերի հաջորդականության փոփոխությամբ ստացվեց մեկ ծանոթ տարբերակը: Սպիտակադաշտ փիղը սովորաբար c4-ում է կարգավորվում, սակայն այդ դեպքում ձին պետք է e2-ում տեղադրվի:

8. Փf1-b5+    Ձb8-d7

Քեծդեն - Ալյոխին (Ֆոլքսթոն, 1933թ.) պարտիայում, շարունակելով 8. ... Փd7 9. Փ:d7+ Թ:d7 10. 0-0 cd 11. cd Ձc6 12. Փe3 0-0 (ավելի թույլ էր 12. ... Նd8-ը՝ 13. d5!-ի պատճառով) 13. Նc1 Նfc8



14. Թd2 b6, սևերն առանց դժվարության հավասարեցրին խաղը:

Ձին d7-ում կարգավորելով՝ Ա. Կարպովը հրաժարվում է պարզեցումներից, բայց դա սպիտակներին ազատում է d4 զինվորի մասին մտահոգությունից:

Հնարավոր էր և 8. ... Ձc6 9. 0-0 cd 10. cd 0-0 11. Փe3 Փg4 12. Փ:c6 bc 13. Նc1 Փ:f3 14. gf Թd7 (Ալբուրտ-Տուկմակով, 1977թ.)՝ հավասար հնարավորություններով:

9. 0-0    0-0
10. a2-a4    ...

Սպիտակներն a2-g8 անկյունագծում փղի համար հարմար հանգրվան են ստեղծում:

10. ...    a7-a6
11. Փb5-c4    Թd8-c7
12. Թd1-e2    b7-b6

Վտանգ չէր ներկայացնում և 12. ... Ձb6 13. Փb3 Փg4 շարունակությունը, քանի որ 14. Փe3, 15. h3-ի միջոցով կամրապնդեր կենտրոնը՝ այն դեպքում, երբ սև ձին b6 դաշտում իրեն այնքան էլ հարմար չէր զգա:

13. e4-e5    e7-e6

Կարելի էր չշտապել: Ուշադրության էր արժանի 13. ... Փb7 (կամ 13. ... cd 14. cd Փb7) 14. e6 Փ:f3!-ը՝ հարմար խաղով, իսկ 14. Ձg5-ին կարող էր հաջորդել 14. ... cd! 15. cd Թc6 16. d5 Թc7, կամ 15. Ձ:f7 Ն:f7 16. Փ:f7+ Ա:f7 17. e6+ Աg8 18. ed Թc6 19. f3 Թ:d7՝ բավարար հակախաղով:

14. Ձf3-g5    Փc8-b7
15. f2-f4    h7-h6 (դ.71)

71


Սպիտակներին հաջողվեց կենտրոնում զինվորային սեպ ստեղծել. որպես արդյունք՝ g7-ի փիղը խաղից դուրս է հայտնվել, d7-ի ձին նույնպես պասիվ է:

Իրենց վերջին քայլով սևերը ցանկանում են խաղը սրել:

16. Ձg5:e6!?    ...

Ձիու նահանջը f3 եռանդուն չէր, իսկ 16. Ձe4-ը սխալ էր՝ 16. ... cd-ի պատճառով (17. cd Փ:e4!՝ ֆիգուր շահելով): Սպիտակները որոշում են ֆիգուր զոհաբերել, ինչը սուր գրոհի հնարավորություն է ընձեռում:

Ուշադրության էր արժանի նաև 16. f5!-ը:

16. ...    f7:e6
17. Փc4:e6+    Աg8-h8
18. Թe2-g4    ...

18. d5-ի դեպքում սևերը կարող էին, իրենց հերթին, ֆիգուրի զոհաբերության գնով՝ 18. ... Ձ:e5 19. fe Ն:f1+!:

18. ...    Նf8-d8!
19. f4-f5    Ձd7-f8
20. f5-f6    ...

Կասկածելի էր 20 Փa2-ը (ձգտելով ակտիվ փիղը պահպանել

փոխանակությունից)՝ 20. ... Փc8 21. e6 gf 22. Թ:f5 c4!:

20. ... Ձf8:e6
21. Թg4:e6 Փg7-f8

Սպիտակների անցունակ վինվորները բավականին ահեղ տեսք ունեն, սակայն նյութական ոչ բավարար փոխհատուցումը և սպիտակադաշտ փղի բացակայությունն ընդգծում են սևերի առավելությունը:

22. Թe6-h3 c5:d4
23. c3:d4? ...

Ոչինչ չէր խոստանում նաև 23. Փ:h6-ը՝ 23. ... Փ:h6! (բայց ո՛չ 23. ... Թh7?, որին անմիջապես կհաջորդեր 24. Փg7+!՝ հաղթանակով) 24. Թ:h6+ Թh7՝ սևերի առավելությամբ: Ուշադրության էր արժանի Ի.Զայցևի առաջարկած 23. e6! Թ:c3 24. Թ:c3 dc 25. e7-ը՝ պաշտպանության հնարավորություններով:

23. ... Նd8:d4
24. e5-e6 Փf8-c5

Սպիտակների գրոհն ավարտվեց. խաղի ելքը վճռված է:

25. Աg1-h1 ...

25. Փe3 Նd2! 26. Թ:h6+ Թh7 27. Թ:h7+ Ա:h7 28. Փf2 Նf8! 29. e7 Ն:f6 30. e8Թ Նf:f2 31. Ն:f2 Ն:f2 տարբերակում, ինչպես նշել է Մ.Տալը, սևերը նույնպես հաղթում են:

25. ... h6-h5
26. Նa1-a2 Փb7-d5
27. Նa2-d2 Նd4:d2
28. Փc1:d2 Թc7-e5
29. Թh3-d3 Թe5:e6

e6-ի վինվորի կորստով խաղն ավարտվում է:

30. Թd3:g6 Թe6-g4
31. Թg6-h6+ Աh8-g8
32. f6-f7+ Փd5:f7
33. Փd2-c3 Փc5-d4
34. h2-h3 Թg4-g7

Դիրքը պարզվեց, և սևերը պահպանեցին ֆիգուրի առավելությունը:

35. Թh6-c6 Նa8-d8
36. Փc3:d4 Թg7:d4
37. Թc6-b7 Նd8-d7
38. Թb7-c6 Աg8-g7
39. Թc6-c1 Թd4-e5
40. Նf1-e1 Թe5-f6
41. Նe1-f1 Թf6-d4

Սպիտակները հանձնվեցին:

## ՀԻՆ ՀՆԴԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 Ձg8-f6
2. c2-c4 g7-g6
3. Ձb1-c3 Փf8-g7 (դ.72)

72


Հնդկական սկզբնախաղերից ամենատարածվածն է, սուր և բարդ պայքարի է հանգեցնում: Մենք միայն մի քանի հիմնական տարբերակներին կանդրադառնանք:



Ա. Զեմիշի համակարգ

(1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7)

4. e2-e4 d7-d6
5. f2-f3 ...

Գրավելով կենտրոնը՝ սպիտակները ձգտում են այն ամրացնելու: Իրենց հերթին՝ սևերն էլ e7-e5 կամ c7-c5 առաջխաղացմամբ կենտրոնում հակախաղ են նախապատրաստում:

5. ... 0-0
6. Փc1-e3 e7-e5
7. d4-d5 ...

Սպիտակները կարող էին կենտրոնը չփակել՝ 7. Ձge2: Սակայն, պատասխանելով 7. ... c6, այնուհետև հարմար պահին d4-ում փոխանակություն կատարելով՝ սևերը d6-d5 քայլով կգրոհեին կենտրոնը:

7. ... Ձf6-h5
8. Թd1-d2 f7-f5
9. 0-0-0 ...

Տարակողմ փոխատեղումները լարված և անզիջում պայքարի երաշխիք են:

Սպիտակները, f5-ում փոխանակությունից հետո, պատրաստվում են g վինվորն առաջ մղելու՝ g2-g4: Սևերն էլ, իրենց հերթին, կձգտեն գծեր բացել թագուհու թևում:

Բ. Փիղը g2 դաշտում կարգացնելու համակարգ

(1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7)

4. g2-g3 ...

Սպիտակները փիղը կարգացնում են g2 դաշտում, որտեղից այն ճնշում կգործադրի h1-a8 անկյունագծով՝ միաժամանակ պաշտպանելով արքայի դիրքը:

4. ... 0-0
5. Փf1-g2 d7-d6
6. Ձg1-f3 ...

Այս սկզբնախաղային քայլերին հաճախ կարելի է և այլ հաջորդականությամբ հանդիպել:

6. ... Ձb8-d7

Հնարավոր էին նաև 6. ... c6, 6. ... Ձc6 շարունակությունները:

7. 0-0 e7-e5
8. e2-e4 ...

Սպիտակներն ազատ խաղ ունեն, իսկ սևերը, ճնշում գործադրելով c4, d4, e4 կետերի վրա, հարուստ հակախաղի հնարավորություն կստանան:

Գ. Տ. Պետրոսյանի համակարգ

(1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7)

4. e2-e4 d7-d6
5. Փf1-e2 0-0
6. Ձg1-f3 ...

Սպիտակների 5-րդ և 6-րդ քայլերը հակառակ հերթականությամբ են հաճախ կատարվում:

6. ... e7-e5
7. d4-d5 Ձb8-d7
8. Փc1-g5 ...

Կաշկանդելով ձին՝ սպիտակները *Հին հնդկական պաշտպանությանը* հատուկ՝ f7-f5 հակահարվածն են արգելում:

8. ... h7-h6
9. Փg5-h4 g6-g5
10. Փh4-g3 Ձf6-h5
11. h2-h4 ...

Խաղը կարող է այսպիսի ընթացք ստանալ՝ 11. ... Ձ:g3 12. fg gh 13. Ձ:h4 Թg5 14. Փg4!, և եթե 14. ... Ձc5, ապա 15. Փ:c8 Թ:g3+

16. Աf1 Նa:c8 17. Ձf5 Թf4+ 18. Թf3 (Բալաշով-Փենրոուզ, Հաստինգս, 1966-1967թ.թ.), և սպիտակները զինվորի դիմաց բավարար հակախաղ ստացան:

Անաստասյան - Կուզմին
Բլագովեշչենսկ, 1988թ.

1. d2-d4 Ձg8-f6
2. c2-c4 g7-g6
3. Ձb1-c3 Փf8-g7
4. e2-e4 d7-d6
5. Ձg1-f3 0-0
6. h2-h3 ...

6. Փe2-ից հետո հնարավոր էր 6. ... e5 7. 0-0 Ձbd7 8. d5 Ձc5 9. Թc2 a5 10. Փg5 h6 11. Փe3, և այլն:

Կատարված քայլը ամենահաջողը չի համարվում՝ e4-ի զինվորն անբավարար է պաշտպանված, և 6. ... e5 7. d5 Ձbd7 (սուր, երկուստեք հնարավորություններով խաղի կհանգեցներ 7. ... Ձh5 8. Փe3 f5!, կամ 8. g4 Ձf4! շարունակությունը) 8. g4 Ձc5 9. Թc2 a5 10. Փe2 c6!-ից հետո սևերը հարմար խաղ կստանային:

6. ... e7-e5
7. d4-d5 Ձb8-a6

Ինչպես տեսնում ենք՝ մրցակիցները վերը նշված հունով չընթացան:

8. Փc1-e3 Ձf6-h5
9. Ձf3-h2 Թd8-e8

9. ... Ձf4-ին հնարավոր էր 10. g3 Ձ:h3 11. Ձg4 Ձg5 12. Ձh6+ Աh8 13. f4 ef 14. gf Փ:c3+ 15. bc Ձ:e4 16. Թd4+ Թf6 (16. ... Ձf6-ին կհաջորդեր 17. f5 կամ 17. 0-0-0՝ անկասելի գրոհով) 17. Թ:e4 Թ:c3+ 18. Աf2, և չի կարելի 18. ... Թ:a1՝ 19. Փd4+-ի պատճառով (*Ա.Անաստասյանի վերլուծությունը*):

10. Փf1-e2 Ձh5-f4
11. Փe2-f3 f7-f5
12. 0-0 ...

Համաձայն Գ.Կասպարովի վերլուծության՝ 12. h4 Փd7 13. g3 Ձb4!-ից հետո նախաձեռնությունը սևերն էին ստանձնում:

12. ... b7-b6
13. Նf1-e1 ...

Սպառնում է 14. ef gf 15. Փ:f4՝ ֆիգուր շահելով:

13. ... Թe8-f7
14. a2-a3 ...

Սևերն արդեն դժվարություններ են կրում: Եթե սպիտակներին հաջողվի b2-b4 առաջխաղացումն իրականացնել, ապա մրցակիցը կզրկվի հակախաղի որևէ հնարավորությունից:

14. ... Ձa6-c5
15. Փe3:c5 b6:c5
16. b2-b4 c5:b4
17. a3:b4 a7-a6
18. Թd1-c2 Ձf4-h5
19. Ձh2-f1 Ձh5-f6
20. b4-b5 ...

Օգտվելով այն հանգամանքից, որ սևերը կենտրոնում կամ արքայական թևում որևէ լուրջ սպառնալիք չունեն, սպիտակները փորձում են խաղը թագուհու թև տեղափոխել, որտեղ ակնհայտ դիրքային առավելություն ունեն:

20. ... Փg7-h6

Չէր կարելի 20. ... a5՝ 21. Նa4, 22. Նea1-ից հետո սպիտակները ոչ միայն զինվոր կշահեին, այլև բաց a գծին կտիրեին:

21. b5:a6 Նa8:a6
22. Նa1:a6 Փc8:a6
23. e4:f5 ...



Եթե 23. Թa4!?, ապա 23. ... fe 24. Փ:e4 Ձ:e4 25. Ձ:e4 Փc8! (25. ... Նa8՝ 26. Թc6!), և սևերը f ուղղաձիգով հակախաղ կստանային:

23. ... Փa6:c4
24. f5:g6 Թf7:g6
25. Ձc3-e4! ...

Ստիպելով հրաժարվել սպիտակաշտ փղից, քանի որ 25. ... Փ:d5-ին կհաջորդեր 26. Ձ:f6+ Թ:f6 27. Փ:d5+, իսկ փղի նահանջի դեպքում c7-ի զինվորը կկորչեր:

25. ... Փc4:f1
26. Ձe4:f6+ Նf8:f6 (դ.73)

73


27. Փf3-e4! ...

Այս միջանկյալ քայլը ջնջում է սպիտակների առավելությունը՝ ծանր ֆիգուրների առկայությամբ վերջնախաղում տարագույն փղերն ամենևին էլ ոչ-ոքիի ավետաբեր չեն:

27. ... Թg6-f7
28. Նe1:f1 Աg8-h8

28. ... Փe3-ին կհաջորդեր 29. Փ:h7+ Թ:h7 30. Թ:h7+ Ա:h7 31. fe՝ սևերի համար անհուսալի նավակային վերջնախաղով:

29. Նf1-a1 Թf7-d7

Հակախաղի հնարավորությունից զրկված լինելով՝ սևերը հարկադրված են սպասողական քայլեր կատարելու:

30. Նa1-a7 Նf6-f7
31. Թc2-e2 Թd7-e7
32. g2-g3 Թe7-f6
33. Նa7-b7 Փh6-c1
34. Աh1-g2 h7-h6
35. h3-h4 Աh8--g7
36. Նb7-b3 ...

37. Նc3 սպառնալիքը սևերին ստիպում է զինվորն առաջ շարժելու:

36. ... h6-h5
37. Նb3-c3 Փc8-h6

38. Նc2, 39. Թ:h5 ակնհայտ սպառնալիքի իրականացմանը չսպասելով՝ սևերը հանձնվեցին:

## ՆՈՐ ՀՆԴԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 Ձg8-f6
2. c2-c4 e7-e6
3. Ձg1-f3 b7-b6 (դ.74)

74


Սկզբնախաղն այս տարբերակում հանգիստ պայքար է խոստանում:

Հիմնական տարբերակում սպիտակները փիղը g2-ում են կարգայնում:

4. g2-g3 Փc8-b7

5. Փf1-g2 Փf8-e7

5. ... Փb4+-ին կարելի էր պատասխանել 6. Փd2 Փ:d2+ 7. Թ:d2 0-0 8. Ձc3, և հաջող չէր լինի 8. ... Ձe4-ը՝ 9. Թc2 Ձ:c3 10. Ձg5!:

6. 0-0 0-0

7. Ձb1-c3 Ձf6-e4

7. ... d5-ին կհաջորդեր 8. Ձe5՝ տհաճ կաշկանդումով, իսկ 7. ... d6-ին՝ 8. Թc2! Ձbd7 9. e4, և սպիտակները կենտրոնում առավելություն կստանային:

8. Թd1-c2 Ձe4:c3

9. Թc2:c3 ...

9. Ձg5-ով սկսվող կոմբինացիան հերքվում է՝ 9. ... Ձ:e2+! 10. Թ:e2 (կամ 10. Աh1 Փ:g2) 10. ... Փ:g2 11. Ա:g2 Փ:g5՝ հաղթանակով:

9. ... f7-f5

Սևերին հաջողվեց կասեցնել e2-e4 առաջխաղացումը: Կողմերի հնարավորությունները հավասար են:

Ա.Պետրոսյան - Սոկոլով
Ռիգա, 1985թ.

1. d2-d4 Ձg8-f6

2. c2-c4 e7-e6

3. Ձg1-f3 b7-b6

4. a2-a3 ...

Այս քայլը բնորոշում է *Տ. Պետրոսյանի համակարգը*.

Սպիտակները, չեզոքացնելով ձին կաշկանդելու հնարավորությունը (Փb4), կենտրոնում տարածության նվաճման են ձգտում (Ձc3՝ սպառնալով d5): Համակարգը մեծ հաջողությամբ համարյա բոլոր հայ առաջատար շախմատիստներն են խաղարկում: Ճիշտ է՝ վերջին ժամանակներս քայլերի ա՛յլ հաջորդականություն է կիրառվում (4. Ձc3 Փb7 5. a3՝ խուսափելով 4. ... Փa6 շարունակությունից), սակայն այդ դեպքում 4. Ձc3-ին հնարավոր է պատասխանել 4. ... Փb4:

4. ... Փc8-a6

Հնարավոր էր 4. ... Փb7 5. Ձc3 d5 6. cd Ձ:d5 7. Թc2!? Փe7 8. e4 Ձ:c3 9. bc 0-0 10. Փd3 c5 11. 0-0 cd 12. cd Ձc6՝ սպիտակների ոչ մեծ առավելությամբ. Պորտիշ - Քրիստիանսեն, Լոնդոն, 1982թ., կամ 4. ... c5 5. d5 Փa6 6. Թc2 ed 7. cd g6, որը *հին հնդկական պաշտպանության* կառուցվածքին է բնորոշ (վտանգավոր էր զինվորը շահելու փորձը՝ 7. ... Փb7 8. e4 Թe7 9. Փd3 Ձ:d5 10. 0-0 Ձc7 11. Ձc3 Թd8 12. Ձd5, և սպիտակները մեծ առավելություն կստանային):

5. Թd1-c2 Փa6-b7

6. Ձb1-c3 c7-c5

Պարզ է դառնում սևերի չորրորդ քայլի իմաստը՝ սպիտակ թագուհին c2 դաշտը հրապուրելով՝ նրանք d4-d5 առաջխաղացումն են արգելում:

7. e2-e4 ...

Հնարավոր էր նաև 7. dc:

7. ... c5:d4

8. Ձf3:d4 d7-d6

Նախկինում տարածում գտած 8. ... Փc5 9. Ձb3 Ձc6 10. Ձ:c5?! bc 11. Փe3 d6 շարունակությունը մոտավորապես հավասար հնարավորություններով դիրքի կհանգեցներ: Տ.Պետրոսյան-Տալ (Յուրմալա, 1983թ.) պարտիայում սպիտակներին հաջողվեց առավելության հասնել՝ 10. Փg5! h6 11. Փh4 Փe7 (11. ... Ձd4 12. Ձ:d4 Փ:d4 13. Փd3՝ որոշ առավելությամբ) 12. Փe2 0-0 13. Ձd1 Նc8 14. Փg3!:



9. Փc1-g5 ...

Հնարավոր էր նաև հետևյալ ծրագիրը. 9. Փe2, 0-0, Նd1, Աh1՝ հետագա f4-ով:

9. ... a7-a6

10. Նa1-d1 Ձb8-d7

11. f2-f4 Փf8-e7

12. f4-f5 0-0!?

Զինվորը զոհաբերելով՝ սևերը մտադիր են ավելի քան բավարար փոխհատուցում ստանալ: Օրինակ՝ 13. fe Ձc5! 14. Ձf5 (14. ef+ Ն:f7 15. Ձf5 Ձf:e4! 16. Ձ:e7+ Ն:e7 17. Փ:e7 Թ:e7) 14. ... fe 15. Ձ:d6 Փ:d6 16. e5 Թe8՝ այնուհետև թագուհին h5 տեղափոխելով, կամ 16. ... Փ:e5 17. Ն:d8 Նa:d8՝ բոլոր դեպքերում ուժեղ գրոհով:

13. f5:e6 Ձd7-c5

14. Ձd4-f5 f7:e6

15. Ձf5:e7+ Թd8:e7

16. b2-b4 Ձc5-d7

17. Փf1-e2 Ձd7-e5

18. 0-0 Նa8-c8

19. Նd1-d4! h7-h6

20. Փg5-h4 b6-b5?

Գերագնահատելով իրենց հնարավորությունները՝ սևերը փորձում են եռանդուն գործողությունների միջոցով հաղթանակ կորզել: Անհրաժեշտ էր 20. ... Ձc6 խաղալ՝ քայլերի կրկնություն առաջարկելով՝ 21. Նd2 Ձe5 22. Նd4 և այլն:

21. Թc2-d2! b5:c4

22. Նd4:d6 Ձe5-d3 (դ.75)

75



Սևերը հենց ա՛յս դիրքին էին ձգտում, բայց սպիտակների պատասխանը, ըստ երևույթին, նրանց ուշադրությունից վրիպել էր: Ա.Պետրոսյանը զինվորի զոհաբերությամբ նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում:

23. e4-e5! Ձd3:e5

24. Թd2-d4 Ձe5-c6

25. Թd4-c5 Ձc6-d8

26. Թc5-b6 Փb7-c6

27. Նf1-d1 Թe7-b7

28 Թb6:b7 ...

Հաջող էր և 28. Փf2-ը:

28. ... Փc6:b7

29. Նd1-d4 ...

Ժամանակի պակաս զգալով՝ սպիտակներն անճշտություն են թույլ տալիս: 29. Փ:f6 gf 30. Ն1d4-ից հետո նրանք զինվորը հետ կբերեին՝ պահպանելով վերջնախաղում հաղթելու հնարավորություններ:

29. ... g7-g5!

30. Փh4-e1 Ձf6-d5

31. Նd4:c4 Նc8:c4

32. Փe2:c4

Այստեղ, երկուստեք ցայտնո-

տում, մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: 32. ... Ձe3 33. Փd3 Ձ:g2 34. Փg3-ից հետո փինվորի դիմաց սպիտակների ստանձնած նախաձեռնությունն ավելի քան բավարար կլիներ՝ հանձինս երկու ուժեղ փղի և a6 ու e6 փինվորների թուլության: Սակայն առավելությունն իրացնելը դժվար կլիներ՝ սպիտակ արքայի բաց դիրքի պատճառով:

## ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. d2-d4 f7-f5 (դ.76)

76



Առաջին անգամ պաշտպանությունն այս հետազոտել է Վ.Ստեյնիցը՝ իր «Սկզբնախաղային ուղեցույցում»: Հնում այն Ստեյնիցի անունով էլ կոչվել է: Հետագայում սկզբնախաղը կատարելագործեցին հոլանդացի շախմատիստները: Այստեղից էլ անվանումը՝ *Հոլանդական պաշտպանություն*:

Այս սկզբնախաղում, ինչպես և *թագուհու գամբիտում* (1. d4 d5 2. c4 e6) կամ *Նիմցովիչի պաշտպանությունում* (1. d4 Ձf6 2. c4 e6 3. Ձc3 Փb4), սևերը e4 դաշտի վրա հսկողություն են սահմանում:

2. c2-c4 e7-e6

Համեմատաբար ավելի հաճախ է հանդիպում քայլերի հետևյալ հաջորդականությունը՝ 1. d4 e6 2. c4 f5, քանի որ 1. d4 f5-ի դեպքում սպիտակները կարող են փինվոր կոհաբերել՝ 2. e4! (*Սթաունթոնի գամբիտ*): 1. d4 e6 2. e4-ի դեպքում սևերը կարող են 2. ... d5-ի միջոցով խաղը *Ֆրանսիական պաշտպանության* հունով ուղղել:

3. g2-g3 Ձg8-f6
4. Փf1-g2 Փf8-e7
5. Ձg1-f3 0-0
6. 0-0 ...:

Այստեղ կարելի է շարունակել 6. ... d5 և 7. b3 c6-ից հետո բավականին ամուր, բայց փոքրինչ ճնշված դիրք ստանալ (դժվար է c8-ի փիղը կարգավորելը): Այս տարբերակը ստացել է *Սթոնվոլ* կամ *Քարե պատ* անվանումը:

Զարգացման մեկ այլ ճանապարհ է 6. ... d6 7. Ձc3 Թe8 շարունակությունը (*Իլյին-Ժենևսկու տարբերակ*), որում e6-e5 առաջխաղացումն է նախապատրաստվում: Թեև երկու տարբերակում էլ սևերը բավական դժվարությունների են հանդիպում, այդուհանդերձ սկզբնախաղն իր հաստատուն տեղն ունի ժամանակակից ամենաբարձր կարգի մրցաշարերում:



Ա. Պետրոսյան - Վասյուկով
Նովի Սադ, 1988թ.

1. d2-d4 f7-f5
2. Ձg1-f3 Ձg8-f6
3. g2-g3 g7-g6
4. Փf1-g2 Փf8-g7
5. 0-0 0-0
6. c2-c4 d7-d6
7. Ձb1-c3 Թd8-e8

Այս կառուցվածքը *Լենինգրադյան տարբերակ* անվանումն է կրում: Այն *հոլանդական պաշտպանության* ամենաժամանակակից տարբերակն է ու բարդ, բովանդակալից խաղ է խոստանում:

8. d4-d5 Ձb8-a6
9. Փc1-e3!? ...

Քայլերի այս հերթականությունն առաջին անգամ Ա. Պետրոսյան-Պսախիս (Երևան, 1986թ.) պարտիայում էր հանդիպել, որտեղ 9. ... c6 10. Նc1 h6?! 11. c5!-ից հետո սպիտակներն առավելության հասան: Պարտիաներից մեկում, 10. ... Ձg4! 11. Փf4 (11. Փd4?-ին կհաջորդեր 11. ... Փh6՝ սպառնալով 12. ... c5) 11. ... h6 12. h3 Ձf6 13. Փe3-ից հետո, խաղը բարդ դիրքի հանգեց:

9. ... h7-h6!

Թերևս, ամենահաջող քայլն է: Այն խոչընդոտում է սևադաշտ փղերի փոխանակությունը (Թd2, Փh6-ից հետո) և նախապատրաստում g5 առաջխաղացումը, որից հետո թագուհին կարող է h5 դաշտը թափանցել:

10. Նa1-c1 g6-g5
11. Փe3-d4 Թe8-h5
12. Փd4:f6! Փg7:f6
13. Ձf3-d4 ...

Սպիտակներն ուժեղացնում են ճնշումը մրցակցի թույլ (e6 և f5) դաշտերի վրա:

13. ... f5-f4!

Այլապես՝ սպիտակներն իրե՛նք f4 կխաղային՝ արգելակելով հակախաղն արքայական թևում:

14. a2-a3 ...

Եթե սպիտակները ծասցնեն b4 խաղալ, ապա սևերի ձին «խաղից դուրս» կհայտնվի:

14. ... Փf6:d4!
15. Թd1:d4 Ձa6-c5
16. Նc1-e1 Փc8-h3
17. f2-f3 Նf8-f7?

Անճշտություն, որն սպիտակներին առավելության հասնելու հնարավորություն է ընձեռում: Անհրաժեշտ էր նախ փղերը փոխանակել՝ 17. ... Փ:g2 18. Ա:g2, նոր միայն խաղալ 18. ... Նf7՝ պահպանելով հավասարակշռությունը:

18. g3-g4 Թh5-h4
19. Թd4-f2! Թh4:f2+
20. Աg1:f2 Փh3:g2
21. Աf2:g2 Ձc5-b3
22. Ձc3-e4 c7-c5?!

Ճիշտ կլիներ 22. ... Ձd4-ը:

23. h2-h4 Ձb3-d4

23. ... gh 24. Նh1-ը սևերին ոչինչ չէր խոստանում: Թերևս, ավելի համառ էր 23. ... Նg7-ը:

24. h4:g5 ...

Սպիտակները որակի կոհաբերություն են առաջարկում, որն ընդգծում է նրանց առավելությունը:

24. ... Ձd4-c2
25. g5:h6 Նf7-h7
26. g4-g5 Աg8-f7 (դ.77)

77


27. e2-e3 ...

Առավելության իրացման ամենակարճ և, թերևս, ամենաճիշտ ուղին է: 27. Աh3-ին կհետևեր 27. ... Ձe3, ապա` 28. ... Նah8` 29. ... Ն:h6+! սպառնալիքով:

27. ... Նa8-f8

27. ... Ձ:e3+ 28. Ն:e3 fe 29. f4-ից հետո սպիտակները հեշտությամբ կհաղթեին:

28. e3:f4 Ձc2:e1+
29. Նf1:e1 Աf7-g6
30. Ձe4-f2! e7-e5?

Հուսահատ փորձ. չէր փրկում և 30. ... Ն:f4 31. Ձh3 Ն:c4 32. Նe6+ Աf5 33. g6 Ն:h6 34. g7-ը:

31. d5:e6 Նh7-e7
32. Աg2-g3 Աg6-f5
33. Նe1-d1

Սևերը հանձնվեցին. 34. Նd4+-ից հետո զինվորներն անարգել առաջ կշարժվեին:

Համբարձումյան - Գալդունց
Երևան, 1989թ.

1. d2-d4 f7-f5
2. c2-c4 Ձg8-f6
3. g2-g3 g7-g6
4. Փf1-g2 Փf8-g7
5. Ձg1-f3 0-0
6. 0-0 d7-d6
7. b2-b3 ...

Սպիտակները հնարավորություն են պահպանում b1-ի ձին ինչպես d2-ում, այնպես էլ` c3-ում զարգացնելու:

7. ... c7-c5?!

Ավելի համառ էր 7. ... Ձe4 8. Փb2 Ձd7 9. Ձbd2 Ձdf6 շարունակությունը:

8. Փc1-b2 Ձf6-e4
9. Թd1-c2 c5:d4

9. ... Ձd7-ին կհետևեր 10. d5 Ձdf6 11. Ձfd2` առավելությամբ:

10. Ձf3:d4 Թd8-b6?

Սա արդեն կոպիտ սխալ է: b6-ում թագուհին անհաջող դիրք է զբաղեցնում:

11. e2-e3 Ձe4-c5

Հաջող չէր նաև 11. ... Ձc6-ը` 12. Ձ:c6 Թ:c6 13. Փ:g7 Ա:g7 14. Ձc3:

12. Ձb1-c3 e7-e6
13. Նf1-d1 Նf8-d8
14. Նa1-b1 ...

Պատրաստվելով իրականացնել b3-b4 առաջխաղացումը:

14. ... Ձb8-a6?

Սևերը թերագնահատում են մրցակցի ընտրած շարունակությունը: Անհրաժեշտ էր 14. ... Ձc6, թեև 15. Ձ:c6 bc 16. b4! Ձb7 17. Ձa4 Թc7 18. e4-ից հետո էլ սպիտակներն ակնհայտ առավելություն կունենային:

15. a2-a3! Փg7:d4

Այլապես` կհետևեր b3-b4` շահած դիրքով:

16. e3:d4 Թb6:b3
17. Թc2-e2 Ձc5-a4

17. ... Ձc4-ին ուժեղ էր 18. Փ:e4! fe 19. Ձ:e4-ը:



18. Ձc3:a4 Թb3:a4 (դ.78)

78


19. Փg2:b7!

«Հենց ա՛յս քայլը սևերը չէին նկատել: Մրցակիցս հանկարծակիի եկավ և անմիջապես հանձնվեց: Մինչդեռ 19. ... Փ:b7-ից հետո սպիտակներից, հաղթանակի հասնելու համար, ճշգրիտ խաղ էր պահանջվում` 20. Թ:e6+ Աf8 21. d5! (21. Թf6+-ին` 21. ... Աe8 22. d5 Աd7) 21. ... Նd7 (21. ... Թd7 22. Թf6+ Թf7 23. Թh8+ Թg8 24. Փg7+` հաղթանակով) 22. Նe1! Նf7 23. Թ:d6+ Աg8 24. Թe5:» (Ա.Համբարձումյան)

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ՍԿԻԶԲ

1. c2-c4 (դ.79) ...

79


Սկզբնախաղն այս գործնականում առաջին անգամ կիրառել է անգլիացի շախմատիստ Հ.Ստաունթոնը (այստեղից էլ անվանումը)` 1843 թվականին Փ.Սենտ-Ամանի դեմ խաղացված մրցամարտում:

Բավականին ճկուն քայլ է, և դրանով սկսվող պարտիաները մեզ արդեն ծանոթ կառուցվածքների են հաճախ հանգում: Օրինակ` 1. c4 e6 2. Ձc3 d5 3. d4` *թագուհու գամբիտ* է ստացվում: Բացառված չէ, որ 1. c4-ից հետո *Հնդկական* կամ *Գրյունֆելդի պաշտպանություն* ստացվի: Եթե սևերը 1. ... e5 կամ 1. ... c5 են պատասխանում, ապա խաղը նոր երանգներ է ստանում, ինչն էլ հենց *Անգլիական պաշտպանությունն* է բնորոշում:

Ծանոթանանք զարգացման հնարավոր համակարգերից մեկին.

1. ... e7-e5
2. Ձb1-c3 d7-d6
3. g2-g3 ...

3. Ձf3 Ձf6 4. d4 Ձbd7 5. g3 g6-ից հետո` խաղը *Հին հնդկական պաշտպանության* գլխավոր տարբերակի հունով կընթանար:

3. ... Ձb8-c6
4. Փf1-g2 g7-g6
5. d2-d3 Փf8-g7
6. Ձg1-f3 Ձg8-e7
7. 0-0 0-0
8. Նa1-b1 ...

Սպիտակները b զինվորի առաջխաղացումն են նախապատրաստում` մտադրվելով առավելության հասնել թագու-

հու թևում: Սևերը պետք է հակախաղ փնտրեն արքայական թևում՝ f պինվորի առաջխաղացմամբ կամ Փd7, Թc8, Փh3 խուսանավման միջոցով:

Անաստասյան - Շիրով
Ֆրունզե, 1989

1. c2-c4 Ձg8-f6
2. Ձg1-f3 g7-g6
3. g2-g3 Փf8-g7
4. Փf1-g2 0-0
5. 0-0 d7-d5
6. c4:d5 Ձf6:d5
7. Ձb1-c3 c7-c5
8. d2-d3 Ձd5:c3
9. b2:c3 Ձb8-c6

Սպիտակների առավելությունը կհանգեցներ 9. ... Փ:c3 10. Փh6 Փ:a1 11. Թ:a1 f6 12. Փ:f8 Թ:f8 13. d4! շարունակությունը: Հաջող էր և 10. Նb1!-ը:

10. Փc1-e3! Փg7:c3

Եթե 10. ... b6, ապա 11. d4!:

11. Նa1-c1 Թd8-a5
12. Ձf3-d2 Փc8-e6?

Սպառնում էր ինչպես 13. Ձb3 Թb4 14. Փ:c5, այնպես էլ՝ 13. Ձc4 Թb4 14. a3՝ երկու դեպքում էլ շահելով c3-ի փիղը:

Սևերը փորձում են հսկողության տակ վերցնել a2-e6 անկյունագծային դաշտերը՝ բացառելով նշված հնարավորությունները, բայց հարվածն ա՛յլ կողմից է հետևում: Ճիշտ կլիներ 12. ... Փ:d2 13. Ն:c5 Թ:a2 14. Փ:d2-ը, թեև այստեղ էլ սպիտակների առավելությունն ակնհայտ էր: Երկու փիղը փղից ու ձիուց զգալիորեն ուժեղ են, բացի այդ՝ զգայնել կտար սև արքայի հիմնական պաշտպանի՝ սևադաշտ փղի բացակայությունը:

13. Ձd2-e4! Փc3-b2
14. Նc1-c2 Փb2-d4
15. Ձe4:c5 Փd4:e3
16. Ձc5:b7 ...

16. fe-ին կհետևեր 16. ... Ձb4՝ հավասարեցնելով խաղը:

16. ... Թa5-e5
17. Նc2:c6 Փe3-b6
18. e2-e3 Փe6:a2
19. Թd1-a4! Փa2-e6?

Իհարկե, հաջող չէր և 19. ... Փd5-ը՝ 20. Թb5 e6 21. d4 Թf5 22. Փ:d5 Թ:d5 23. Թ:d5 ed 24. Ձd6, և Նf1-b1-b5-d5 սպառնալիքը կասեցնելն անհնար կլիներ: Հակախաղ ստանալու միակ միջոցը 19. ... Թb2!-ն էր:

20. d3-d4 Թe5-h5
21. Ձb7-c5 Փe6-h3
22. Փg2:h3 Թh5:h3
23. Ձc5-d7 Նf8-d8 (դ.80)

80


Չէր կարելի 23. ... Թ:d7՝ 24. Ն:g6+-ի պատճառով:

24. Ձd7-e5! ...

Առավելություն էր ապահովում նաև 24. Ձ:b6 ab 25. Թb3



շարունակությունը՝ շահելով b6-ի պինվորը, քանի որ կոհաբերությունների գնով սպիտակ արքայի դեմ գրոհելու փորձը հաջողությամբ չէր պսակվում՝ 25. ... Նa5 26. Թ:b6 Նh5 27. Թ:d8+ Աg7 28. Նfc1 Թ:h2+ 29. Աf1:

24. ... f7-f6?!
25. Թa4-b3+ Աg8-g7
26. Թb3-f7+ Աg7-h6
27. Ձe5-c4 Թh3-d7
28. Նc6-e6 Նd8-e8
29. Նe6-e4 g6-g5
30. Նe4-e6!

Սևերը հանձնվեցին. 31. Ձe5, և 32. Ձg4 մատային սպառնալիքից բավարար պաշտպանություն չկար:

## ՌԵՏԻԻ ՍԿԶԲՆԱԽԱՂ

1. Ձg1-f3 d7-d5
2. c2-c4 (դ.81) ...

81


Սկզբնախաղն այս հանձարեղ չեխ շախմատիստ Ռիհարդ Ռետիի անունով է կոչվում, ով մշակել և այնուհետև 1923 թվականին մրցաշարում առաջին անգամ կիրառել է այն:

Ինչպես *անգլիականում*, այնպես էլ այստեղ սպիտակների կենտրոնական պինվորների առաջխաղացումը հետաձգվում է. ֆիգուրների կարգավորմամբ՝ կենտրոնական դաշտերի վրա ճնշում է գործադրվում:

2. ... c7-c6

2. ... d4-ին հաջող էր 3. b4 (կամ 3. b3), և 4. Փb2-ը: Հանդիպում է նաև 2. ... e6 շարունակությունը: Թույլ էր 2. ... dc-ն՝ 3. Ձa3-ի պատճառով:

3. b2-b3 Ձg8-f6
4. Փc1-b2 Փc8-f5
5. g2-g3 e7-e6
6. Փf1-g2 Ձb8-d7
7. 0-0 h7-h6!

Այս քայլը տվյալ դեպքում պարտադիր է, որպեսզի 8. Ձh4-ի դեպքում փիղը փոխանակությունից խուսափելու հնարավորություն ստանա (8. ... Փh7):

8. d2-d3 Փf8-e7
9. Ձb1-d2 0-0

Ստացվեց *Ռետիի սկզբնախաղի* հիմնական դիրքը: Սպիտակները կարող են 10. Նc1, կամ 10. Նe1 խաղալ՝ նախապատրաստելով e2-e4 առաջխաղացումը: Սևերի դիրքն ամուր է, և սպիտակներին նախաձեռնություն զարգացնելը հեշտ չէ:

Ռետի - Կապաբլանկա
Նյու-Յորք, 1924թ.

1. Ձg1-f3 Ձg8-f6
2. c2-c4 g7-g6
3. b2-b4 ...

Սկզբնախաղի զարգացման հիմնական շարունակությունը (g2-g3, Փf1-g2 և b2-b3 ծրագրի

հետ առնչվող) ավելի հաջող էր, քանի որ 3. b4-ի դեպքում, օգտվելով թագուհու թևում գոյացած թուլություններից, սևերը հեշտությամբ հակախաղ կստանան:

3. ... Փf8-g7
4. Փc1-b2 0-0
5. g2-g3 b7-b6
6. Փf1-g2 Փc8-b7
7. 0-0 d7-d6

Սևերը *Հին հնդկական կառուցվածքն* ընտրեցին, որը խաղն արագ հավասարեցնելու հնարավորություն է ընձեռում:

8. d2-d3 Ձb8-d7
9. Ձb1-d2 e7-e5
10. Թd1-c2 Նf8-e8
11. Նf1-d1 a7-a5
12. a2-a3 h7-h6
13. Ձd2-f1 c7-c5

Սևերը ծուղակ են նախապատրաստել՝ մրցակցին հրավիրելով զինվոր շահելու. այսպես՝ 14. ba Ն:a5 15. Ձ:e5 Փ:g2 16. Ձ:d7 Փc6! 17. Ձ:f6+ Փ:f6 18. Փ:f6 Թ:f6 19. Թd2 h5!-ից հետո նրանք ուժեղ գրոհի հնարավորություն կստանային: Թերևս, ճիշտ էր 13. ... e4-ը:

14. b4-b5 Ձd7-f8
15. e2-e3 Թd8-c7
16. d3-d4 Փb7-e4!

Նման դիրքերի խաղարկման բնորոշ քայլ: Փիղն այստեղից կարելի է հեռացնել՝ միայն փղի հետ փոխանակման միջոցով:

17. Թc2-c3 ...

Համարձակ է խաղացված, քանի որ թագուհին կաշկանդման պատճառ է դառնում: Կարելի էր 17. Թc1-ով բավարարվել:

17. ... e5:d4
18. e3:d4 Ձf6-d7?

18. ... Ձe6!-ից հետո մոտավորապես հավասար խաղ կստացվեր:

19. Թc3-d2 ...

Անպաշտպան թողնելով c4-ի զինվորը, բայց կաշկանդումից ազատվելով՝ սպիտակները հակառակորդին սևադաշտ փղերի փոխանակություն են հարկադրում:

19. ... c5:d4

Ճիշտ կլիներ 19. ... Նad8-ը՝ անցնելով պասիվ, բայց և համառ պաշտպանության:

20. Փb2:d4 Թc7:c4
21. Փd4:g7 Աg8:g7
22. Թd2-b2+ Աg7-g8
23. Նd1:d6 Թc4-c5
24. Նa1-d1 Նa8-a7
25. Ձf1-e3! ...

Սպիտակները գրոհը հմտորեն են վարում: Սպառնում է 26. Ձg4՝ կրկնակի հարվածով:

25. ... Թc5-h5 (դ.82)

82



26. Ձf3-d4! ...

Այս նուրբ քայլն ավելի ուժեղ է, քան՝ թագուհին շահելը՝ 26. Ն1d5 Փ:d5 27. g4 Փ:f3 28. gh Փ:h5, որից հետո սպիտակները



կարող էին դեռևս համառ դիմադրության հանդիպել:

26. ... Փe4:g2
27. Աg1:g2 Թh5-e5

Սխալ էր 27. ... Ն:e3 28. fe Թ:d1-ը՝ 29. Ձe6!-ի պատճառով: Համեմատաբար հաջող էր 27. ... Ձe5-ը, որին սպիտակները պետք է 28. Թb3 կամ 28. Թe2 պատասխանեին՝ պահպանելով դիրքային առավելությունը:

28. Ձe3-c4 Թe5-c5
29. Ձd4-c6 Նa7-c7
30. Ձc4-e3 ...

Կրկին 31. Ձg4 է սպառնում:

30. ... Ձd7-e5
31. Նd1-d5

Սևերը հանձնվեցին. 31. ...Ձc4 32. Ն:c5 Ձ:b2 33. Նc2 Ձa4 34. Ձd5-ից հետո նրանք նյութական մեծ կորուստներ կկրեին:

## ՁԻՈՒ ԶԻՆՎՈՐԻ ՍԿԻԶԲ ԿԱՄ ՍՈԿՈԼՍԿՈՒ ՍԿԶԲՆԱԽԱՂ

1. b2-b4 (դ.83) ...

83



Սկզբնախաղն առաջին անգամ կիրառություն գտավ XIX դարում: Հետագայում այն կիրառեցին Կ.Շլեխտերը և Ս.Տարտակովերը: Վերջինս սկզբնախաղը տեսականորեն հիմնավորելու փորձ կատարեց և դրան *Օրանգուտանի սկզբնախաղ* անունը տվեց: Հետագայում սկզբնախաղի հիմնակա՛ն տարբերակները մշակել և գործնականում կիրառել է Ա.Սոկոլսկին: Այստեղից էլ անվանումը՝ *Սոկոլսկու սկզբնախաղ*:

b4 քայլն սկզբնախաղային ոչ մի սկզբունք չի խախտում: Պարզապես՝ սպիտակներն առաջին իսկ քայլով թագուհու թևում իրականացվելիք խաղի ծրագիրն են ուրվագծում և հետագայում ֆիգուրների ու զինվորների բոլոր դիրքավորումներն այդ ծրագրին ծառայեցնում:

1. ... d7-d5

Որպես այլընտրանքային տարբերակ՝ հանդիպում է և 1. ... e7-e5-ը, որը 2. Փb2 f6 3. b5 d5 4. e3 Փe6 5. d4 e4 6. Ձbd2 c6 7. a4 Փd6 8. c4 շարունակությունից հետո երկուստեք բարդ ու հետաքրքիր պայքարի է հանգեցնում: Այս տարբերակում ուշադրության է արժանի 3. e4!? համարձակ քայլը (*Սոկոլսկու գամբիտ՝ տե՛ս Սոկոլսկի-Ստրուգաչ պարտիան*):

2. Փc1-b2 Ձg8-f6
3. e2-e3 ...

3. g3, 4. Փg2-ից հետո սպիտակներին դժվար կլիներ c2-c4 առաջխաղացումն իրականացնել:

3. ... Փc8-f5
4. Ձg1-f3 e7-e6

Սպիտակներին առավելություն էր խոստանում 4. ... Ձbd7-ը՝ 5. c4 dc (եթե 5. ... c6, ապա 6. c5!) 6. Փ:c4 e6 7. b5:

5. c2-c4 Ձb8-c6

Վատ էր 5. ... Փ:b4-ը՝ 6. Թa4+ Ձc6 7. Ձd4 Թd6 8. Ձ:c6 bc 9. a3 Փc5 10. d4: 5. ... Ձbd7-ին, կամ 5. ... Փe7-ին կհաջորդեր 6. c5!:

6. a2-a3 d5:c4

Այնպես՝ 7. b5 կհաջորդեր:

7. Փf1:c4 Փf5-d3

7. ... Փd6 8. d4 շարունակությունն սպիտակներին կենտրոնում առավելություն կընձեռեր:

8. Փc4:d3 Թd8:d3

9. Թd1-c2 ...

d3 կետը սևերը չեն կարող պահպանել՝ ինչպես թագուհիների փոխանակության, այնպես էլ՝ թագուհու նահանջի դեպքում: Դա էլ սպիտակներին որոշ առավելություն է խոստանում:

Սոկոլսկի - Ստրուգաչ
Բելառուս, 1958թ.

1. b2-b4 e7-e5
2. Փc1-b2 f7-f6
3. e2-e4 ...

Գամբիտային տարբերակ: Սպիտակները ձգտում են զինվորի զոհաբերության միջոցով սևերի արքայական թևում առաջացած թուլություններից օգտվելու:

3. ... Փf8:b4

Զոհաբերությունն ընդունելը սպիտակներին ուժեղ գրոհ ձեռնարկելու հնարավորություն է ընձեռում:

4. Փf1-c4 Ձb8-c6

Ավելի թույլ էր 4. ... Ձe7-ը՝ 5. Թh5+ g6 (5. ...Ձg6-ին կարող էր հետևել 6. f4 ef 7. Ձh3 Թe7 8. e5 fe 9. Ձg5՝ վտանգավոր սպառնալիքներով) 6. Թh4 Ձec6 7. f4 Փe7 8. f5!՝ գրոհով:

5. f2-f4 e5:f4?!

Ավելի ապահով էր 5. ... d6-ը, որից հետո հարկ կլիներ ընտրություն կատարել 6. f5-ի և 6. c3-ի միջև:

6. Ձg1-h3 Ձg8-e7

7. Ձh3:f4 Ձc6-a5? (դ.84)

84



Ծանր դիրքում սևերը սխալ են թույլ տալիս. սակայն պարզ չէ, թե հնարավո՞ր էր արդյոք 8. Թh5+ սպառնալիքից պաշտպանվել:

8. Փb2:f6! Նh8-f8

8. ...gf-ին կհաջորդեր 9. Թh5+ Ձg6 10. Ձ:g6՝ հաղթանակով, իսկ 8. ... Ձ:c4-ին հնարավոր էր ինչպես 9. Փ:g7, այնպես էլ՝ 9. Թh5+:

9. Ձf4-h5! Ձa5:c4

Չէր կարելի 9. ...gf՝ 10. Ձg7x, իսկ 9. ... Ն:f6-ին կհաջորդեր 10. Ձ:f6+ gf 11. Թh5+ Ձg6 12. Փg8! Թe7 13. a3 Փc5 14. Փ:h7 Թ:e4+ 15. Աd1:

10. Ձh5:g7+ Աe8-f7

11. 0-0 Աf7-g8



12. Թd1-h5! ...

Ամենից դիպուկն է: Թույլ էր 12. Թg4-ը՝ 12. ... Ն:f6 13. Ն:f6 Ձe5 14. Թg3 Ձ7g6-ի պատճառով, իսկ 12. Ձh5-ին սևերը 12. ... Աe8 կպատասխանեին:

Սպառնում է 13. Թg5:

12. ... Նf8:f6

13. Նf1:f6 Ձe7-g6

14. Նf6:g6! h7:g6

15. Թh5:g6 Աg8-h8

Եթե 15. ... Ձe5, ապա 16. Թg3 Թf6 17. Ձh5+ Թg6 18. Թ:e5 d6 19. Թg3!՝ սպիտակները երկու զինվորի առավելություն կստանային:

16. Ձg7-e8!

Ավելի ուժեղ է, քան 16. Ձh5-ը՝ 16. ... Թg8!-ի, և 16. Ձf5-ը՝ 16. ... Թf8-ի պատճառով:

16. ... Թd8-e7

16. ... Փc5+-ը նույնպես փրկություն չէր՝ 17. Աh1 Փd4 18. Թh5+ (հաջող էր և 18. c3-ը) 18. ... Աg8 19. Թd5+, և սևերը նորից կպարտվեին:

17. Ձe8-f6

Սևերը հանձնվեցին:





## ՀԵՐԹԸ ՔՈ՛ՆՆ Է ...

Սիրելի՛ բարեկամ: Դու արդեն սկսնակ չես, և ես ուզում եմ քեզ մեր մանկապատանեկան շախմատին ծանոթացնել:

1960 թվականին Երևանում բացվեց շախմատի առաջին մանկապատանեկան մարզադպրոցը, որի խմբակները սովորելու եկան քո հասակակիցները:

Շուտով նմանօրինակ դպրոցներ հիմնադրվեցին հանրապետության այլ քաղաքներում, շրջաններում, գյուղերում ու ավաններում:



ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթական համալիրի շախմատի նորաստեղծ դպրոցը: Դասը վարում է ձեռնարկի հեղինակը:

Մանկապատանեկան շախմատի զարգացման գործում մեծ ավանդ են ներդրել հանրապետության վաստակավոր մարզիչներ Ա.Հակոբյանը, Ս.Այվազյանը, Հ.Մոկացյանը, Ա. Քալանթարը և շատ ու շատ այլ մարզիչներ: Նրանց քրտնաջան ու ինքնամոռաց աշխատանքի շնորհիվ՝ համաշխարհային պատանեկան շախմատում հայկական դպրոցի սաները միշտ պատվավոր տեղ են ունեցել:

...Ամեն տարի մարզադպրոցների սաները մրցաշարերում վիճարկում են ուժեղագույնի կոչումը: Բարձր տեղեր գրավողներն իրավունք են նվաճում՝ մասնակցելու գյուղական, ավանային, շրջանային ու քաղաքային մրցումներին, որոնց արդյունքներով էլ որոշվում են այն տղաներն ու աղջիկները, ովքեր հանրապետության պատանեկան առաջնություններում իրենց ուժերը փորձե-

յու հնարավորություն են ստանում:

Մեր տղաներն ու աղջիկները բազմիցս հանդես են եկել նաև միջազգային ստուգատեսներում, որոնցից մի քանիսի մասին քեզ կպատմեմ:

1986 թվականին երևանցի դպրոցական Վլադիմիր Հակոբյանը Արգենտինայի Ռիո-Գալյեգոս քաղաքում անցկացված՝ մինչև 16 տարեկան պատանիների՝ աշխարհի առաջնության հաղթողը դարձավ:

Մրցաշարին մասնակցում էին 28 երկրների 32 շախմատիստներ: 11 հանդիպումներում վաստակելով 8,5 միավոր (6 հաղթանակ, 5 ոչ-ոքի)՝ Վ.Հակոբյանը վստահորեն նվաճեց չեմպիոնի կոչումը:



Երևանի շախմատի տունը

Ահա՛ մի դրվագ այդ առաջնությունում խաղացված պարտիաններից մեկից (դ.85): Տե՛ս, թե Վլադիմիրը ինչպե՛ս է օգտվում այն հանգամանքից, որ սպիտակների փիղը ժամանակավորապես «խաղից դուրս» վիճակում է հայտնվել:

Կոնտիչ - Հակոբյան
Հարավսլավիա Հայաստան

85



32. ... Զg8 33. Նc3 Աf6 34. Նf3 Զh6 35. Նe4 Նg8 36. Փa4 g4 37. hg Ն:g4 38. Նfe3 Նdg8 39. Ն:g4 Ն:g4 40. Փb3 Նg3, սպիտակները հանձնվեցին:

1989 թվականին Պուերտո-Ռիկոյի Գուայնիլյա քաղաքում Վ.Հա-



կոբյանը կրկնեց իր հաջողությունը՝ այս անգամ արդեն մինչև 18 տարեկան պատանիների՝ աշխարհի առաջնությունում: 17-ամյա պատանին, վաստակելով 9,5 միավոր 11 հնարավորից, աշխարհի կրկնակի չեմպիոն դարձավ:

Ահա՛ այդ առաջնությունում խաղացված պարտիաններից մեկը, որը մեկնաբանում է ինքը՝ Վ.Հակոբյանը:

Հակոբյան - Դենչև
Հայաստան - Բուլղարիա
Իսպանական պարտիա

1. e4 e5 2. Զf3 Զc6 3. Փb5 Զf6 4. 0-0 Զ:e4 5. Նe1 Զd6 6. Զ:e5 Փe7 7. Փd3 0-0 8. Զc3:

Միայն ոչ-ոքի էր հանգեցնում 8. Թh5 g6 9. Զ:g6 fg 10. Փ:g6 hg 11. Թ:g6+ Աh8 շարունակությունը:

8. ... Զ:e5 9. Ն:e5 Փf6 10. Նe3 Նe8:

Սպառնում էր 11. Փ:h7+!:

11. Զd5 Փd4?:

Կատարած քայլից հետո սևերը ծանր դիրք են ստանում: Ճիշտ կլիներ 11. ... Փg5-ը:

12. Ն:e8+ Զ:e8 13. Թg4! Փc5:

Եթե 13. ... Փf6, ապա 14. Թe4! g6 15. Թ:e8+! Թ:e8 16. Զ:f6+՝ ֆիգուր շահելով:

14. b4! Փf8 (դ.86):

Անհրաժեշտ է պաշտպանել g7 կետը: 14. ... Փd6-ին հնարավոր էր 15. Փb2, ապա՝ 16. Նe1՝ սպառնալով 17. Ն:e8+, և 18. Թ:g7x:

86



15. Թe4! f5

Սևերն ստիպված են փինվորը տալու, քանի որ h7 կետը պաշտպանելու մեկ այլ եղանակը՝ 15. ... g6, հնարավոր չէր՝ 16. Թ:e8!-ի պատճառով:

16. Թ:f5 g6 17. Թe4 Զd6 18. Թf4 Փg7 19. Նb1 b6 20. Փb2 Փ:b2 21. Ն:b2 Փb7 22. Թe5 Զf7 23. Զf6+ Աh8:

Անհուսալի էր և 23. ... Աg7 24. Ձh5++ Աh6 25. Թg7+ Ա:h5 26. Թ:h7+-ը:
24. Թc3:
Սպառնում է 25. Ձh5+:
24. ... d6 25. f4 Թf8 26. Թ:c7 Թg7 27. Թ:b7:
Սևերը հանձնվեցին:

Հետագա տարիներին Վ.Հակոբյանը մի շարք խոշոր մրցաշարերի մրցանակակիրն ու հաղթողը դարձավ: Այդ ընթացքում նա արժանացավ միջազգային գրոսմայստերի պատվավոր կոչմանը:

1991 թվականին ռումինական Մամայա քաղաքում անցկացված՝ մինչև 20 տարեկան պատանիների աշխարհի առաջնությունում նա յուրօրինակ ռեկորդ սահմանեց՝ երրորդ անգամ նվաճելով պատանեկան առաջնությունների ոսկին:

Հակոբյանը 13 հնարավորից վաստակեց 10,5 միավոր: Նույնպիսի արդյունքի հասավ նաև Ռուսաստանի ներկայացուցիչ Մ.Ուլիբինը, սակայն լրացուցիչ ցուցանիշներով չեմպիոնի կոչումը Վլադիմիրին շնորհվեց: Իդեպ, նրանց անձնական հանդիպումն ավարտվել էր Հակոբյանի հաղթանակով:

Հակոբյան - Ուլիբին

Հոլանդական պաշտպանություն

(*մեկնաբանում է Վ.Հակոբյանը*)

1. d4 e6 2. c4 f5 3. g3 Ձf6 4. Փg2 c6 5. Ձf3 d5 6. 0-0 Փd6 7. b3 Թe7 8. a4 a5 9. Փa3 Փ:a3 10. Ձ:a3 b6 11. Ձe5 0-0 12. Թc2:

Տվյալ դիրքում այս քայլն առաջին անգամն է կիրառվում:

12. ... Փb7 13. Նfc1:

Սպիտակներն սպառնում են c4-c5 առաջխաղացմամբ ակնհայտ առավելության հասնել:

13. cd-ին սևերը կարող էին ինչպես 13. ... cd պատասխանել, այնպես էլ՝ մրցակցին հրավիրել փինվոր շահելու՝ 13. ... ed 14. Թ:f5, ինչն Ուլիբինին հարմար խաղ կընձեռեր՝ 14. ... Ձfd7 15. Թh5 g6 16. Թh4 Թ:h4 17. gh Նf4!:

13. ... Ձa6:

Հետաքրքիր էր 13. ... Ձbd7-ը՝ 14. cd Ձ:e5 15. dc? Ձ:c6 16. Փ:c6 Նac8, և սևերը ֆիգուր կշահեին, իսկ ահա 15. de5 Ձ:d5 16. Ձc4-ից հետո. ձին d6 դաշտը կներխուժեր: 13. ... Ձfd7-ին՝ 14. Ձd3 կհետևեր:

14. cd cd:

Թվում է, թե հարկավոր էր խաղալ 14. ... Ձb4՝ գրոհելով թագուհին ու ժամանակ շահելով, և նոր միայն՝ cd, բայց սևերը նկատեցին 15. d6! Թ:d6 16. Թb2, ապա՝ 17. Ձac4 շարունակությունը, որից հետո հավասարեցման մասին երազել անգամ չէր լինի:

15. Ձb5 Նfc8 16. Թd2 Ձb4 17. h3! Ձc4:



Հնարավոր է՝ ամենահաջող պատասխանը 17. ... Թd8-ն էր 18. Փ:e4 de 19. Ն:c8+ Ն:c8 20. Նc1 Ն:c1+ 21. Թ:c1 Ձd5 22. e3 g5?!

Սևերը փորձում են արքայական թևում ակտիվություն ցուցաբերել, բայց դա անուղղելի թուլություն է առաջացնում: Սպասողական 22. ... Թd8-ն ավելի հաջող կլիներ՝ 23. Թa3 Ձb4!, և ներխուժման դաշտեր չկան:

23. Թd1!:

Կասեցնել 24. Թh5-ը հնարավոր չէր՝ 23. ... Թe8 24. Ձd6!:

23. ... Փa6 24. Թh5 Փ:b5 25. ab Աg7 (դ.87):

87



16. Աh2!:

Արքայի դիրքը g1-ում այնքան էլ հուսալի չէր. մասնավորապես՝ 26. Ձc6 Թf6 27. Թe8 f4! 28. ef gf 29. Ձd8 fg 30. Ձ:e6+ Աh6 31. fg e3 32. Ձf4? Ձ:f4 33. Թ:e3 Թ:d4!! 34. Թ:d4 Ձe2+, իսկ 32. Թf8+ Թ:f8 33. Ձ:f8-ը ոչ-ոքիի էր հանգեցնում:

26. ... Ձc7 27. Ձc6 Թf6 28. Թe2 Ձd5 29. Ձe5 Թe7:

Թվում է, թե իսկը ժամանակն էր՝ 29. ... f4 ճեղքումն իրականացնելու, բայց դա վճռական սխալ կլիներ՝ 30. gf gf 31. Թg4+-ին սևերը պարտավոր չէին նահանջել 31. ... Աh6՝ 32. Թg8!-ի պատճառով, այլ՝ «կպահեին» դիրքը՝ խաղալով 31. ... Աh8, բայց սպիտակներն էլ իրենց տրամադրության տակ ուժեղ շարունակություն ունեին՝ 30. ef gf 31. Թ:e4 fg+ 32. Ա:g3!:

30. Աg2 Թd8 31. Թh5 Թe7 32. Աf1 Թf6 33. Աe1 Թe7:

Սպիտակների 26-րդ քայլից առաջ և այժմ ստեղծված դիրքի տարբերությունն այն է, որ սպիտակ արքան g1-ի փոխարեն e1-ում է գտնվում, այսինքն՝ այդ ընթացքում, փաստորեն, խաղացվել է Աg1-f1-e1՝ պահպանելով քայլի հերթը: Դա ինքնին վճռական գործողությունների անցնելու միտք է հուշում:

34. Ձc6 Թf6 35. Թe8 f4:

36. Ձd8 սպառնալիքն այլընտրանքի հնարավորություն չէր թողնում:

36. ef gf 37. g4:

Անհրաժեշտ էր զգույշ գործել: Բավական էր մի փոքրիկ անճշտություն, և առավելությունից հետք անգամ չէր մնա՝ 37. Ձd8 fg 38. Զ:e6+ Աh6 39. fg e3 40. Թf8+ Թ:f8 41. Զ:f8 Ձc3 42. Ձd7 Զ:b5 43. d5 Աg7 44. Աe2 Ձd4+ 45. Ա:e3 Զ:b3 46. Զ:b6 Աf6, ոչ-ոքի: «Ցանկության» դեպքում կարելի էր նույնիսկ պարտվել՝ 40. Ձf4 Զ:f4 41. Թ:e3 Թe6!:

37. ... e3 38. Ձe5 ef+ 39. Ա:f2 Թh4+ 40. Աe2 Ձc3+?:

Վերջին քայլը կատարելիս, ժամանակի խիստ պակաս զգալով, սևերը չեն կարողանում կողմնորոշվել ու ճիշտ ծրագիր ընտրել՝ 40. ... f3+!, մասնավորապես՝ 41. Աd3? Թf6!, և նախաձեռնությունը սևերին կանցներ, իսկ 41. Զ:f3 Թ:h3 42. Թd7+ Աf8 43. Թd6+ Աg7 44. Թe5+ Աf8-ը սպիտակներին ոչ-ոքիից ավելին չէր խոստանում:

41. Աd3 Թ:h3+:

Եթե 41. ... Թg3+, ապա 42. Աc4, և շախերը կսպառվեին, իսկ սև արքան թագուհի+ձի հզոր մարտկոցի դեմ մեն-մենակ կհայտնվեր:

42. Աc2!:

Այժմ, երբ սև թագուհին h3-ում է, 42. Աc4-ը միայն ոչ-ոքիի էր հանգեցնում՝ 42. ... Թf1+ 43. Ա:c3 Թe1+! 44. Աd3 Թe3+ 45. Աc2 Թe2+՝ հավերժական շախով:

42. ... Ձd5:

42. ... Ձe4-ը նույնպես անհուսալի էր՝ 43. Թf7+ Աh6 44. Թ:f4+:

43. Թf7+ Աh6 44. Թ:e6+ Աg5 45. Թ:d5:

Սևերը հանձնվեցին:

Մեր պատանեկան շախմատի տարեգրությունում նոր էջ բացվեց և 1992 թվականը:

Գերմանական Դույսբուրգ քաղաքում անցկացված՝ պատանիների ու աղջիկների աշխարհի առաջնությունում հայ աղջնակը՝ 13-ամյա Էլինա Դանիելյանը նվաճեց մինչև 14 տարեկան աղջիկների չեմպիոնուհու կոչումը: Սա միջազգային մրցասպարեզում հայ կանանց մինչ այդ նվաճած ամենախոշոր հաղթանակն էր:

Թե որքա՛ն լավ էր խաղում Էլինան, կարող եք դատել՝ վերլուծելով հետևյալ պարտիաները:

Է. Դանիելյան - Հուսեյնովա

Հայաստան Ադրբեջան

Հին հնդկական պաշտպանություն

1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7 4. e4 d6 5. f3 0-0 6. Փe3 e5 7. d5 Ձa6 8. Թd2 Նe8 9. a3 Ձh5 10. Փd3 Ձf4 11. 0-0-0 Զ:d3+ 12. Թ:d3 Ձc5 13. Թc2 f5 14. b4 Ձa6 15. Ձge2 Թe7 16. Աb2 Փd7 17. Ձc1 h6 18. Ձb3



Աh7 19. Թd3 Նed8 20. c5 Փc8 21. Թe2 Նf8 22. Նac1 Ձb8 23. Ձb5 Ձa6 24. Ձa5 dc 25. bc b6 26. Ձc6 Թf7 27. cb ab 28. Նc3 Փd7 29. Նhc1 Թe8 30. Թc4 Նf6 31. Ձba7 Փc8 32. Զ:c8 Թ:c8 33. Զ:e5 b5 34. Թb3 fe 35. f4 b4 36. ab Զ:b4 37. Ն:c7 Ձd3+ 38. Աb1 Թa6 (դ.88):

88



39. Ն:g7+! Ա:g7 40. Նc7+ Աh8 41. Փd4 Նb6 42. Զ:g6++ Աg8 43. Նg7x:

Է.Դանիելյան - Լենդվայ

Հայաստան - Հունգարիա

Թագուհու զինվորների սկզբնախաղ

1. d4 c5 2. c3 e6 3. Ձf3 d5 4. Փf4 Ձc6 5. e3 Փd6 6. Փg3 Ձf6 7. Փd3 c4 8. Փc2 b5 9. 0-0 0-0 10. Ձbd2 Փb7 11. Թe2 Փ:g3 12. hg Ձe7 13. g4 a5 14. g5 Ձd7 15. Ձe5 Ձg6 16. f4 Ձd:e5 17. de Թb6 18. Փ:g6 hg 19. Ձf3 b4 20. Ձd4 Նfc8 21. g4 Աf8 22. f5 Աe7 23. Թf2 ef 24. gf Նh8 25. Թf4 Նh5 26. e6 f6 27. gf+ gf 28. fg Նg5+ 29. Աf2 Ն:g6 30. cb Նag8 31. Նg1 Ն:g1 32. Ն:g1 Ն:g1 33. Ա:g1 ab 34. Թg3 c3 35. Թg7+ Աd6 36. Թf8+ Աe5 37. e7 Փc6 38. Զ:c6+ Թ:c6 39. e8Թ+ Թ:e8 40. Թ:e8+:

Սևերը հանձնվեցին:

Մինչև 18 տարեկան պատանիների մրցաշարում հաջող հանդես եկավ մեր երկրորդ ներկայացուցիչը՝ Հովհաննես Դանիելյանը: Նա գրավեց երկրորդ տեղը և արծաթե պարգևի արժանացավ:

Մայվալդ - Հ.Դանիելյան

Գերմանիա -Հայաստան

Ֆրանսիական պաշտպանություն

1. e4 e6 2. d4 d5 3. e5 c5 4. c3 Ձc6 5. Ձf3 Փd7 6. a3 c4 7. Փe2 Ձge7 8. Փf4 Ձg6 9. Փg3 Փe7 10. h4 0-0 11. h5 Ձh8 12. h6 g6 13. Ձbd2 f6 14. ef Փ:f6 15. Ձf1 Ձf7 16. Ձe3 Փe7-17. Թc2 Ձd6 18. Ձd2 Փe8 19. Փg4 Ձf5 20. Փ:f5 ef 21. f4 Փf7 22. Աf2 Ձb8 23. Ձf3 Ձd7 24. Փh4

Փ:h4+ 25. Ն:h4 Ձf6 26. g3 Ձe4+ 27. Աg2 a5 28. Նhh1 Նa6 29. Նae1 Նb6 30. Նe2 g5 31. Ձ:g5 Ձ:g5 32. fg Փg6:

Սպիտակները հանձնվեցին:

Նույն տարի Էլինան ու Հովհաննեսն ուժերը փորձեցին նաև մինչև 20 տարեկանների մրցաշարերում, որոնք անցկացվեցին Արգենտինայում:

Այդ մրցաշարերում, որոնք բավականին ուժեղ կազմ ունեին, մեր շախմատիստները նույնպես հաջող ելույթներ ունեցան: Էլինան աղջիկների մրցաշարում կիսեց 6-11-րդ տեղերը, իսկ Հովհաննեսին միայն գործակիցների պակասը զրկեց բրոնզե մեդալից:

Ահա՛ երկու պարտիա այդ առաջնություններից.

Հ.Դանիելյան - Էգեր
Հայաստան Չիլի
Հին հնդկական պաշտպանություն

1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7 4. e4 d6 5. Փe2 0-0 6. Ձf3 e5 7. 0-0 Ձc6 8. d5 Ձe7 9. Ձd2 a5 10. Նb1 Ձd7 11. a3 f5 12. b4 Աh8 13. Թc2 Ձg8 14. Փb2 Ձgf6 15. Նbd1 b6 16. ef gf 17. Ձb5 e4 18. f4 ef 19. Ձ:f3 Ձe4 20. Փ:g7+ Ա:g7 21. Փd3 Ձdf6 22. Ձfd4 Աg6 (դ.89):

89



23. Ձ:f5 Փ:f5 24. Ն:f5 Ա:f5 25. Ձd4+ Աg6 26. Ձc6 Թe7 27. Փ:e4+ Աf7 28. Փ:h7:

Սևերը հանձնվեցին:

Սմրաթս - Է.Դանիելյան
Կարո-Կանի պաշտպանություն

1. e4 c6 2. Ձc3 d5 3. Ձf3 Փg4 4. h3 Փ:f3 5. Թ:f3 e6 6. a3 Ձd7 7. d3 Փd6 8. g3 Ձgf6 9. Փg2 Թc7 10. Փg2 a5 11. 0-0 0-0 12. Թe2 de 13. de e5 14. Նad1 Ձc5 15. Փc1 Ձe6 16. Թd3 Նad8 17. Ձe2 Նd7 18. Թb3



Նfd8 19. c3 c5 20. Փe3 Թc6 21. Թc2 c4 22. Ձc1 Փc5 23. Փ:c5 Ձ:c5 24. Ն:d7 Թ:d7 25. Թc2 b5 26. f4 ef 27. gf Թd2 28. Թ:d2 Ն:d2 29. e5 Ձfc4 30. Նe1 Ձg3 31. Փc6 Ն:b2 32. Նd1 h5 33. Նd8+ Աh7 34. Նd5 Ձe6 35. Ն:b5 (դ.90):

90



35. ... Նc2 36. Նb1 Ն:c1+ 37. Ն:c1 Ձe2+ 38. Աf2 Ձ:c1 39. Փd5 Ձd3+

Սպիտակները հանձնվեցին:

Խոստումնալից պատանիների շարքում իր ուրույն տեղն ունի նաև Տիգրան Նալբանդյանը:

Նալբանդյան - Սթուրուա
Դրուսկինո, 1987թ.
Հին հնդկական պաշտպանություն

1. g3 g6 2. Ձf3 Փg7 3. Փg2 Ձf6 4. 0-0 0-0 5. d4 d6 6. c4 Ձbd7 7. Ձc3 e5 8. h3 Նe8 9. e4 ed 10. Ձ:d4 a6 11. Փe3 Նb8 12. a4 Ձc5 13. Թc2 a5 14. Նad1 Թe7 15. Փg5 c6 16. f4 Թf8 17. f5 Ձfd7 18. f6 Փh8 19. Թd2 Նe5 20. Ձf5 Փ:f6 21. Ձh6+ Աg7 22. Ն:f6 Ձ:f6 23. Ձf5+ Փ:f5 24. Փh6+ Աg8 25. Փ:f8 Ն:f8 26. ef

Սևերը հանձնվեցին

Հաջորդ պատանին, ում կուզենայի քեզ ներկայացնել, Վիգեն Միրումյանն է.

1988 թվականին Լատվիական Ռիգա քաղաքում անցկացվեց Խորհրդային Միության մանկապատանեկան մարզադպրոցների թիմային առաջնությունը: Մրցումների փակման հանդիսավոր արարողության ժամանակ 10-ամյա Վիգենին հանձնվեց աշխարհի նախկին չեմպիոն Մ.Տալի՝ լավագույն պարտիայի համար սահմանված մրցանակը:

Ահա՛ այդ գեղեցիկ պարտիան.

Միրումյան - Լաստին
Հայաստան Ռուսաստանյան դաշնություն
Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 Ձc6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 e5 6. Ձdb5 d6 7. Փg5 a6 8.

Ձa3 b5 9. Ձd5 Թa5+ 10. Փd2 Թd8 11. Փg5 Թa5+ 12. Փd2 Թd8 13. c4 Ձ:e4 14. cb Փe6 15. Ձc3 Ձ:c3 16. Փ:c3 ab 17. Փ:b5 Նc8 18. Նc1 Փd7 19. Ձc4 Թc7 20. Թa4 Նb8 21. 0-0 Ն:b5 22. Թ:b5 Ձd4 23. Թa6 Ձe2+ 24. Աh1 Ձ:c1 25. Ն:c1 Փe7 26. Փa5 Թb8 27. Ձb6 Փd8 (դ.91):

91



28. Նc8! Փ:c8 29. Թb5+ Փd7 30. Թ:d7+ Աf8 31. Ձc8 g6 32. Փ:d8 Աg7 33. b3 Թb4 34. h3 Թe1+ 35. Աh2 Թd2 36. Փh4 Թd4 37. Փg3 h5 38. Ձ:d6 h4 39. Թ:f7+ Աh6 40. Ձf5+ gf 41. Թf6+ Աh7 42. Թ:f5+ Աg8 43. Փ:e5:

Սևերը հանձնվեցին:

1992 թվականին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում անցկացված միջազգային մրցաշարում Վիգենը հաղթեց երեք գրոսմայստերների՝ Բ.Գուրգենիձեին, Ն.Իոսելիանիին և աշխարհի նախկին չեմպիոնուհի Ն.Գափրինդաշվիլուն:

Գափրինդաշվիլի - Միրումյան

Գրյունֆելդի պաշտպանություն

1. d4 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 d5 4. cd Ձ:d5 5. e4 Ձ:c3 6. bc Փg7 7. Ձf3 c5 8. Փe2 0-0 9. Նb1 cd 10. cd Թa5+ 11. Թd2 Ձc6 12. Թ:a5 Ձ:a5 13. 0-0 e6 14. Փd2 b6 15. Նfc1 Նd8 16. Փ:a5 ba 17. e5 Փf8 18. Փd3 Փd7 19. Նb7 Փe8 20. Նcc7 Նdb8 21. Ն:a7 Ն:a7 22. Ն:a7 a4 23. Ձg5 Նd8 24. Ձe4 Աg7 25. Ձf6 Փc6 26. Նc7 Ն:d4 27. Փe2 Նd2 28. Փf1 Փd5 29. Նd7 Փc5 30. Ձe4 Նc2 31. Ձ:c5 Ն:c5 32. f4 Նc1 33. Աf2 Նc2+ 34. Աe3 Ն:a2 35. g4 Նa3+ 36. Աd4 Նf3 37. Փb5 Ն:f4+ 38. Աc5 a3 39. Նa7 a2 40. g5 Նg4 41. Փe8 Նf4:

Սպիտակները հանձնվեցին:

Վ.Միրումյանի հետ մարզիչները մեծ հույսեր են կապել:

Չմոռանամ ասել, որ աշխարհի առաջնություններ անց են կացվում նաև 10, 12, 14 տարեկան շախմատիստների միջև:

Անդրանիկ Մատիկոզյանը 1989 թվականին Մոսկվայում կայացած՝ մինչև 10 տարեկան պատանիների ընտրական մրցումներում գրավեց 1-ին տեղը, իսկ 1991 թվականին՝ մինչև 12 տարեկանների մրցաշարում, նա երրորդն էր:



Այս տղայից նույնպես մարզիչները մեծ սպասելիքներ ունեն:

Մատիկոզյան - Ռիչագով

Մոսկվա, 1991թ.

Ֆրանսիական պաշտպանություն

1. e4 e6 2. d4 d5 3. Ձc3 Փb4 4. e5 Թd7 5. Փd2 b6 6. h4 Փa6 7. Փ:a6 Ձ:a6 8. h5 h6 9. Թg4 Փf8 10. f4 Ձe7 11. 0-0-0 0-0-0 12. Թe2 Աb7 13. g4 g6 14. Ձf3 Փg7 15. Ձh4 Թc6 16. Թf2 Նhf8 17. Նdf1 b5 18. f5 gf 19. gf ef 20. Նhg1 Փh8 21. Ձ:f5 Ձ:f5 22. Թ:f5 b4 23. Ձb1 Թb6 24. Նg4 Նde8 25. Թh7 Թe6 26. Նg3 f6 27. Փ:h6 Նf7 28. Թg6 Նfe7 29. ef Թe2 30. Թd3 Թ:h5 31. Թb5+ Աa8 32. Թc6+ Աb8 33. fe:

Սևերը հանձնվեցին:

Կարեն Ասրյան: Արդեն յոթ տարեկան հասակում նա 1-ին կարգային էր, ինը տարեկանում՝ վարպետության թեկնածու: Դա կատարվեց 1990 թվականին Լենինգրադում կայացած՝ մինչև 10 տարեկան պատանիների ընտրական մրցումներում, որտեղ Կարենն 1-ին տեղը գրավեց:

Ահա՛ այդ մրցաշարում նրա խաղացած պարտիաներից մեկը.

Ասրյան - Կրակոպս

Հայաստան Լիտվա

Լենինգրադ, 1990թ.

Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 Ձc6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 d6 6. Փe2 e5 7. Ձf3 h6 8. 0-0 Փe6 9. Նe1 Փe7 10. h3 0-0 11. Փf1 Նc8 12. Ձd5 Նc8 13. c4 Ձa5 14. b3 Ձ:d5 15. ed Փd7 16. Փa3 b6 17. Նc1 Ձb7 18. Փd3 f5 19. Փb1 Փf6 20. Աh1 g6 21. Նg1 Աh7 22. Ձh2 Նg8 23. g4 Թe7 24. gf gf 25. Թh5 Նg5 26. Ն:g5 Փ:g5 27. Նg1 Աh8 28. h4 Փe8 29. Թf3 Փ:h4 30. Թ:f5 Փd7 31. Թh5 Փg5 32. Ձf3 Փe8 33. Թh2 Փf4 34. Թ:f4 ef 35. Փb2+ Թe5 36. Ձ:e5:

Սևերը հանձնվեցին

Իհարկե, մեր երկրի բոլոր շնորհալի պատանի շախմատիստներին ներկայացնելը դժվար է: Ցանկության դեպքում, սիրելի՛ բարեկամ, դո՛ւ էլ կարող ես նրանց նմանվել և, համոզված եմ, նրանցից էլ լավ կխաղաս, քանզի կյանքը կանգ չի առնում, և բնության մեջ հինը նորին միշտ տեղի է տալիս:

Հերթը քո՛նն է...

# ԷՋԵՐ ՇԱԽՄԱՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել շախմատը: Թեպետ այս հարցերն սպառիչ պատասխաններ չեն ստացել, այնուհանդերձ՝ շախմատը մեր մոլորակի հնագույն խաղերից է: Վկայությունն են 1972 թվականին հնագետների գտած՝ երկրորդ դարին պատկանող փղոսկրյա երկու մանրաքանդակները, որոնք շախմատային ֆիգուրներ են հիշեցնում: Պատմաբաններն էլ, իրենց հերթին, համաձայնում են, որ շախմատի ակունքները Հնդկաստանից են ելնում (մոտավորապես տասնհինգ դար առաջ), և որ հնավուր անցյալում խաղը *ճատուրանգա* էր կոչվում (caturanga), ինչը սանսկրիտով «քառակազմ» էր նշանակում (catur՝ չորս և anga՝ մաս, մարմին): Ինդիա, հին Հնդկաստանում *ճատուրանգա* էր կոչվում այն զորքը, որը բաղկացած էր մարտական անվակառքերից (*ռաթխա*), փղերից (*խաստի*), հեծելազորից (*աշվա*) և քայլող մարտիկներից (*պադատի*): Խաղն էլ քառակազմ զորքերի ճակատամարտ էր մարմնավորում: Մարտնչող բանակները դասավորվում էին վաթսունչորս վանդականի, քառակուսի խաղատախտակի չորս անկյուններում (*աշտապադներ*): Խաղի մասնակիցները *չորսն* էին: Դիմացի անկյուններն զբաղեցնող զույգերը հաճախ դաշնակից էին համարվում: Խաղն աշխույժ բնույթ ուներ: Ֆիգուրների քայլերը որոշում էին՝ զառեր նետելով: Հաղթանակը շնորհվում էր այն զորքին, որը լիովին կոչնչացներ հակառակորդի (հակառակորդների) բանակը, այդ թվում և՝ արքաներին:



Նավակ՝ պատրաստված ոսկրից. XII դար. Լուվր, Փարիզ



Փիղ՝ պատրաստված ոսկրից. XII դար. Քաղաքային պատկերասրահ, Մայնի Ֆրանկֆուրտ



Ճատուրանգա

Հետագայում (VII-VIII դարեր) շախմատի նախահայր *ճատուրանգան* Միջին Ասիայով և Իրանով Արաբական խալիֆատներ ներթափանցեց: Հավանաբար, հենց այստեղ էլ այն *շատրանջ* վերանվանվեց: Թեպետ զառերի օգտագործումը խաղում արդեն բացակայում էր, իսկ խաղաքարերի սկզբնական դիրքավորումը նմանվել էր այսօրվա շախմատին, այնուհանդերձ՝ խաղի կանոնները ներկայիս շախմատի կանոններից դեռևս խիստ տարբերվում էին: Թագուհին միայն անկյունագծով, այն էլ՝ ընդամենը մեկ դաշտ էր տեղաշարժվում: Անկյունագծով էր շարժվում նաև փիղը, սակայն՝ ցատկելով մեկ դաշտի վրայով: Զինվորներն առաջին քայլով երկու դաշտ առաջ շարժվելու իրավունք չունեին: Փոխատեղում չկար: Մի խոսքով՝ այսօրվա ֆիգուրների նման էին քայլում միայն նավակը, ձին ու արքան: Եվ, քանի որ խաղաքարերի մեծ մասի շարժունակությունը խիստ սահմանափակ էր (իդեպ, ամենաուժեղ ֆիգուրը նավակն էր), խաղը դանդաղ ու տաղտկալի էր ընթանում: Թերևս, խաղը որոշ չափով աշխուժացնում էին *թաբիաները*՝ նախօրոք առաջարկվող սկզբնական դիրքերը, որոնցից և սկսվում էր խաղը, ընդսմին մրցակիցները հարկադրված չէին ամեն անգամ պայքարն սկզբնական դիրքից սկսելու:

Մեզ են հասել արաբական շախմատի շատ նմուշներ (պարտիաներ) և նույնիսկ՝ խնդիրներ:

Ահա՛ դրանցից մեկը: Այն առնչվում է մի լեգենդի հետ, որը կարծես «Հազար ու մի գիշերների» հեքիաթներն է հիշեցնում:

Մի հարուստ մահմեդական, ով անչափ սիրում էր շատրանջը, մի անգամ, գրազով խաղալիս, տանուլ է տալիս իր ամբողջ ունեցվածքը և, պայքարի բովից «շիկացած», գրավ է դնում իր ամենաթանկ գանձը՝ Դիլարամ կնոջը: Սակայն, ինչպես և նախորդները, այս պարտիան ևս նրան ոչ մի լավ բան չէր խոստանում: Ի վերջո ստացվում է դիագրամ 92-ում պատկերված դիրքը, որտեղ սպիտակ արքային բոլոր կողմերից մատ է սպառնում: Սակայն ... քայլի հերթն սպիտակներինն է:

92



Դիրք՝ շատրանջից

«Զոհի՛ր *ռուխերդ* (նավակները) և փրկի՛ր կնոջդ», - ամուսնուն է հուշում խաղի ընթացքին ուշադիր հետևող Դիլարամը: Մահմե-

դականը լսում է կնոջ խորհուրդը (թերևս, առաջին ուժեղ կին շախմատիստին, ում մասին ակնարկում է պատմությունը).

1. Նh8+ Ա:h8 2. Փf5+ (այսպես էր քայլում փիղը՝ շատրանջի օրենքներով) 2. ... Նh2 3. Ն:h2+ Աg8 4. Նh8+ Ա:h8 5. g7+ Աg8 6. Զh6x:

Ինչպես տեսնում ես՝ հին արաբներն էլ լավ հասկանում էին շախմատի գեղեցկությունը ...

Պարզ է, որ այս իմաստուն խաղը չէր կարող շրջանցել հայոց աշխարհը: Հայաստանը Հնդկաստանից և Իրանից Եվրոպա տանող բանուկ ճանապարհների վրա էր գտնվում, և այդ ու արաբական երկրների հետ բազմակողմանի կապեր ուներ: Հայտնի է նաև, որ մեր ժողովուրդը հնուց ի վեր տոնախմբությունների ժամանակ բազմապան մրցույթներ ու խաղեր էր կազմակերպում, արդ՝ հնարավոր չէ, որ շախմատը նրան ծանոթ չլիներ:

Ըստ գիտնականների՝ *շատրանջը* մեր երկրում ճանաչում է ստացել ոչ ուշ, քան՝ IX դարում: Այստեղ այն *ճատրակ* կամ *ճատրկուց* է կոչվել: Հայ մեծ գիտնական Հ.Օրբելու վկայությամբ՝ Ապարանի շրջանի Շենավան (նախկին Բլխեր) գյուղում ծերունիները մինչև վերջերս ինքնաշեն շախմատով էին խաղում, որի խաղաքարերը միջնադարյաններն էին հիշեցնում, իսկ կանոնները ներկայումս մեզ հայտնիներից տարբերվում էին: Ըստ ավանդույթի՝ նշված խաղաքարերը սերնդից սերունդ էին փոխանցվում...

Պատմաբանները գտնում են, որ շախմատը Եվրոպա, առաջին հերթին՝ Իսպանիա և Իտալիա է մուտք գործել X-XI դարերում և այստեղ էական փոփոխություններ կրել: Իսկ Վերածննդի դարաշրջանում երևան եկան շախմատային առաջին աշխատությունները: Նշենք իսպանացիներ Լուսենայի «Տրակտատները» (1549թ.), Լոպեսի «Հնարամտությունը շախմատում» (1561թ.), պորտուգալացի Դամիանոյի «Տրակտատները» (1512թ.), իսկ իտալացի Գրեկոյի ձեռագրերը տպագրվեցին միայն նրա մահից հետո՝ 1656 թվականին:

...XVIII դարում շախմատային խաղի կենտրոնը Ֆրանսիան դարձավ: Այս շրջանի ուժեղագույն շախմատիստը Ֆրանսուա Անդրե Դանիկան Ֆիլիդորն էր (1726-1795թ.թ.): Լինելով երգահան, ֆրանսիական երգիծական օպերայի հիմնադիր՝ նա հավասարը չուներ և շախմատային խաղատախտակի առջև: Նրա ստեղծագործությունները շախմատային տեսություն են հարստացրել, իսկ դասական աշխատությունը «Շախմատային խաղի վերլուծություն» գիրքն էր, որով շախմատի սիրահար՝ շատ սերունդներ են սովորել: Այս աշխատությունում դիրքային խաղի հիմունքներն էին պարզաբանվում և, որպես ելակետ, «զինվորները խաղի հոգին են» թեզն էր առաջ քաշվում:

Ֆիլիդորի մահից հետո ուժեղագույն շախմատիստի համբավն



արդեն մեկ այլ ֆրանսիացու՝ Շարլ Մահե դը Լաբուրդոնեինն էր (1797, այլ աղբյուրներից՝ 1795-1804թ.թ.): Նրա ստեղծագործություններում կոմբինացիոն խաղը ներդաշնակում էր դիրքայինին: Լաբուրդոնեն էր, ով լույս ընծայեց աշխարհում առաջին՝ «Պալամեդես» շախմատային ամսագիրը (1836-1839թ.թ.):

Այս շրջանում շախմատն արդեն մեծ հեղինակություն էր վայելում նաև անվանի մարդկանց շրջանում: Օրինակ՝ 1809 թվականին Նապոլեոնը «Թուրքի» դեմ խաղաց: Դա մեխանիկական շախմատիստ էր, որը նախագծել ու իրականացրել էր հունգարացի գյուտարար Վ.Քեմփելենը: Սեղանի առջև չալմայով մի «մարդ» էր նստած և մեխանիկական ձեռքով, մեծ վարպետությամբ շարժում էր խաղաքարերը: Ցանկացողները կարող էին համոզվել, որ մեքենայի ներսում մեխանիզմներից բացի ոչինչ չկա:

Կայսրը մեկը մյուսի ետևից մի քանի անկարելի քայլ կատարեց:



Վ.Քեմփելենի մեխանիկական շախմատային մեքենան

Երկու անգամ մեքենան ուղղեց նրան, իսկ երրորդին, չդիմանալով, խաղաքարերը «սրբեց» խաղատախտակից:

Քեմպելենի մեքենային այլ նմանակներ հաջորդեցին, որոնք բոլորն էլ մեծ հաջողությամբ էին խաղում:

Ո՞րն էր այդ մեխանիզմների գաղտնիքը, որոնք կարելի է այսօրվա համակարգիչների նախահայրը համարել:

Պարզվեց, որ դատարկության պատրանքը հայելային համակարգի միջոցով էր ստեղծվում, մինչդեռ մեքենայի ներսում ուժեղ շախմատիստ էր նստում: Նա էլ շարժում էր «թուրքի» ձեռքը:

Այդ դերում հանդես են եկել այնպիսի ճանաչված վարպետներ, ինչպիսիք էին Յ.Ալգայերը, Ի.Գունսբերգը, Ու.Լյուիսը և ուրիշներ: Իդեպ, «մեխանիկական շախմատիստի» գաղտնիքն առաջինը բացահայտեց ամերիկացի հանրահայտ գրող և բանաստեղծ Էդգար Ալան Պոն:

XIX դարի կեսերին շախմատային վերելքը նշանավորվեց Գերմանիայի անունով: Գերմանացի ուժեղ վարպետների շարքում հատկապես առանձնանում էր կոմբինացիոն ոճի ներկայացուցիչ Ադոլֆ Անդերսենը (1818-1879թ.թ.): Նա էր հենց դարձավ Լոնդոնում կայացած՝ առաջին (1851թ.) և երկրորդ (1862թ.) միջազգային մրցաշարերի հաղթողը: Նրա խաղացած պարտիաները Լ.Կիզերիցկու և Ժ.Դյուֆրենի դեմ շախմատային արվեստի գանձարան են մտել ու հայտնի են «Անմահ» և «Մշտադալար» անուններով: 1858 թվականին Անդերսենն իր դիրքերը զիջեց ամերիկացի հանճարեղ շախմատիստ Փոլ Չարլզ Մորֆիին (1837-1884թ.թ.): Այս շախմատիստը մրցամարտերում պարտության գրեթե չի ճաշակել՝ հաղթելով ամերիկացի ու եվրոպացի համարյա բոլոր ուժեղ վարպետներին: Մրցակիցների նկատմամբ նրա բացահայտ առավելությունը պայմանավորված էր շախմատային խաղի սկզբունքների նոր մոտեցմամբ՝ դիրքային և կոմբինացիոն խաղի զուգակցմամբ: Ֆիգուրների արագ զարգացում, կենտրոնի գրավում և առավելության հասնելու դեպքում գծերի բացում՝ ահա՛ Մորֆիի ռազմավարական հիմնական սկզբունքները:

Եվրոպական տասնամյա փայլուն շրջագայությունից հետո Փոլ Մորֆին անվերադարձ հեռացավ շախմատից:

1866 թվականին շախմատային երկնակամարում փայլեց Վիլհելմ Ստեյնիցի (1836-1900թ.թ.) աստղը: Լոնդոնում անցկացված մրցախաղում նա հաղթեց Անդերսենին: Իսկ քսան տարի անց կայացավ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար առաջին պաշտոնական մրցախաղը: Հաղթող էր համարվելու նա, ով տասը հաղթանակ տաներ: Ստեյնիցի ախոյանն էր Անդերսենի աշակերտ Յ.Ցուկերտորտը: Չնայած մեկնարկն Ստեյնիցի համար անհաջող էր՝ այնուամենայնիվ, նա կարողացավ լարել բոլոր ուժերը, մեծ կամք դրսևորել և հաղթել՝ տանելով 10 հաղթանակ, կրելով 5 պարտություն և 5 խաղ ավարտելով ոչ-ոքի (+10, -5, =5): Այսպիսով՝ Վ.Ստեյնիցը շախմատի՝ աշխարհի առաջին պաշտոնական չեմպիոնը հռչակվեց: Ստեյնիցի մշակած՝ դիրքային խաղի ուսմունքը շախմատային արվեստի զարգացման գործում մեծ դեր է ունեցել և ժամանակի փորձությունը պատվով հաղթահարել: Ստեյնիցի կյանքը շախմատային ճշմարտությանը ինքնամոռաց ծառայելու վառ օրինակ էր:

Նա գրում էր. «Շախմատը հոգով թույլերի համար չէ, այն ամբողջությամբ է կլանում: Որպեսզի հնարավոր դառնա այս խաղի գաղտնիքները թափանցելը, մարդը պարտավոր է իրեն ստրկության դատապարտել: Շախմատը բարդ է՝ աշխատանք, լուրջ խորհել է պահանջում, և միայն զայթակղիչ վերլուծությունն ինձ կարող է բավարարել»:

XIX դարի վերջին շախմատային թատերաբեմ մի նոր տաղանդավոր շախմատիստ բարձրացավ՝ Էմանուիլ Լասկերը (1868-



Վիլհելմ Ստեյնից՝
աշխարհի I չեմպիոն

*«Շախմատը հոգով թույլերի համար չէ: Այն անվերապահորեն մարդուն ամբողջությամբ է պահանջում ...»:*



Էմանուիլ Լասկեր՝
աշխարհի II չեմպիոն

*«...Խաղատախտակի վրա մեռնում են սուտն ու կեղծավորությունը: Շախմատային կոմբինացիայի գեղեցկությունը հենց նրանումն է, որ այն մի՛շտ է իրավացի»:*



Խոսե-Ռաուլ Կապաբլանկա՝
աշխարհի III չեմպիոն

*«Շախմատ խաղալ սովորելը հեշտ է, դժվարը՝ լավ խաղալ սովորելն է»:*



Ալեքսանդր Ալյոխին՝
աշխարհի IV չեմպիոն

*«Ինձ համար շախմատը ոչ թե խաղ է, այլ՝ արվեստ... Այն առաջին հերթին անկողմնակալ լինել է սովորեցնում: Շախմատում կարելի է մեծ վարպետ դառնալ՝ միայն սեփական սխալներն ու թերությունները ըմբռնելու դեպքում: Ճիշտ այնպես՝ ինչպես կյանքում»:*

1941թ.թ.): 1894 թվականին ԱՄՆ-ում աշխարհի առաջնության հերթական մրցախաղն անցկացվեց, և 12:7 (+10, -5, =4) հաշվով հաղթեց Լասկերը: Հանձնելով տասնիններորդ պարտիան՝ Ստեյնիցը, ի լուր աշխարհի, նոր չեմպիոնի ծնունդը հայտարարեց:

Ստեյնիցի աշակերտը լինելով՝ նոր չեմպիոնը ավելի հեռու էր գնացել: Խաղի հիմնական ծանրությունը նա միջնախաղ և հատկապես՝ վերջնախաղ էր տեղափոխում, որտեղ իրեն շատ լավ էր զգում՝ շնորհիվ բարձր տեխնիկայի: Նա ուշի-ուշով ուսումնասիրում էր ապագա մրցակիցներին, փորձում հասկանալ նրանց խաղի ուժեղ ու թույլ կողմերը: Լասկերի գործունեության ոլորտը բազմազան էր: Փիլիսոփայությունից դոկտորական թեզ պաշտպանելով՝ նա իր փայլուն մրցելույթները հաջողությամբ զուգակցում էր մաթեմատիկայի, փիլիսոփայության, գրականության ասպարեզում վարվող ուսումնասիրությունների հետ:

Շախմատի պատմության մեջ փայլուն հետք թողեց և երրորդ չեմպիոնը՝ կուբացի Խոսե-Ռաուլ Կապաբլանկա-ի-Գրաուպերան (1888-1942թ.թ.): 1921 թվականին 9:5 (+4, -0, =10) հաշվով հաղթելով Լասկերին՝ նա չեմպիոնի տիտղոսին տիրացավ: Կապաբլանկայի խաղն աչքի էր ընկնում թեթևությամբ, մտքի արագությամբ, կատարելության հասնող տեխնիկայով:

1927 թվականին Բուենոս-Այրեսում կայացած՝ Կապաբլանկա-Ալյոխին մրցախաղում ռուս



Մաքս Էյվե՝
աշխարհի V չեմպիոն

*«Շախմատը երկու բանակի պատերազմ է. այդ է պատճառը, որ դրան կարելի է վերագրել այն բոլոր օրենքները, որոնք երկու հակառակորդի միջև տեղի ունեցող պատերազմին են հատուկ»:*



Միխայիլ Բոտվիննիկ՝
աշխարհի VI չեմպիոն

*«Էտյուդների լուծումը հատակ մտածողություն և ճշգրիտ հաշվարկել է սովորեցնում»:*



շախմատիստը հաղթանակ տարավ՝ 18,5:15,5 (+6, -3, =25): Մրցախաղն անցկացվում էր մինչև կողմերից մեկի վեց հաղթանակը: Այսպիսով՝ Ալեքսանդր Ալյոխինը (1892-1947թ.թ.) չորրորդն էր, ով աշխարհի չեմպիոնի բարձր կոչմանն արժանացավ:

1935 թվականին հոլանդացի շախմատիստ Մաքս Էյվեի հետ մրցախաղում Ալյոխինը պարտություն կրեց՝ 14,5:15,5 (-8, +9, =13), և մաթեմատիկայի դոկտոր, շախմատային հանրաճանաչ տեսաբան Մաքսիմիլիան (Մաքս) Էյվեն (1910-1981թ.թ.) աշխարհի հինգերորդ չեմպիոնը դարձավ: Բայց նրա թագավորելը երկար չտևեց: 1937 թվականին կայացած ռևանշ-մրցախաղում Ալյոխինն ավելի քան համոզիչ հաղթանակ տոնեց՝ 15,5:9,5 (+10, -4, =11)՝ վերադարձնելով չեմպիոնի դափնին:

1946 թվականին շախմատային աշխարհն Ալյոխին-Բոտվիննիկ մենամարտին էր անհամբեր սպասում, սակայն Ալյոխինը հանկարծամահ եղավ: Շախմատի պատմության մեջ առաջին անգամ չեմպիոնը գահը թափուր մնաց:

1947 թվականին շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) կոնգրեսը վճռեց, նոր չեմպիոնին որոշելու համար մրցախաղ-մրրցաշար կազմակերպել, որին մասնակցելու իրավունք ստացան Մ.Էյվեն, խորհրդային գրոսմայստերներ Մ.Բոտվիննիկը, Վ.Սմիսլովը, Պ.Կերեսը, ամերիկացիներ Ս.Ռեշևսկին ու Ռ.Ֆայնը: Սակայն վերջինս հրաժարվեց, և 1948



Վասիլի Սմիսլով՝
աշխարհի VII չեմպիոն

*«Չնայած տեսության բուռն զարգացմանը՝ դեռ բազմաթիվ գաղտնիքներ կան: Որպեսզի հնարավոր դառնա՝ մի փոքր առաջ քայլել, առաջին հերթին անհրաժեշտ է հասկանալ, թե նախորդներն ի՛նչ սահմանի են հասել»:*



Միխայիլ Տալ՝
աշխարհի VIII չեմպիոն

*«Շախմատն իմ աշխարհն է: Ո՛չ տունը, ո՛չ ամրոցը, ուր կյանքի տագնապներից եմ թաքնվում, այլ՝ հենց աշխարհը: Աշխարհ, ուր ապրում եմ լիարժեք կյանքով, ուր ինձ եմ դրսևորում»:*

թվականին հինգ շրջանով անցկացված մրցախաղ-մրցաշարը հաղթանակ շնորհեց Մ.Բոտվիննիկին:

Շախմատի միջազգային ֆեդերացիայի որոշմամբ, այդ պահից սկսած, աշխարհի չեմպիոնը պարտավոր էր երեք տարին մեկ, բազմաթիվ պարտիայից բաղկացած մրցախաղում, պաշտպանել իր կոչումը հավակնորդի դեմ, ում ի հայտ էին բերելու ընտրական մրցաշարերը՝ փոխգոտիական, միջգոտիական և հավակնորդների:

Եվ այսպես՝ Միխայիլ Բոտվիննիկը (ծնվ. 1911թ.) աշխարհի վեցերորդ չեմպիոնը հռչակվեց: Նոր չեմպիոնին հատուկ էր շախմատի հանդեպ ցուցաբերած գիտական մոտեցումը: Սկզբնախաղային համակարգերի, միջնախաղային ու վերջնախաղային գիրքերի վերլուծություններում նա հավասարը չուներ: Բոտվիննիկը մի շարք գրքերի ու հոդվածների հեղինակ է, որոնք հարստացրին շախմատային գրականության գանձարանը: Շախմատից բացի՝ նա նաև մեծ ծավալի գիտական աշխատանք է կատարում. տեխնիկական գիտությունների դոկտոր է:

Վասիլի Սմիսլովը (ծնվ. 1921թ.) աչքի էր ընկնում դիրքերը գնահատելու հազվադեպ տաղանդով: Նրա խաղացված շատ պարտիաներ և հատկապես՝ վերջնախաղերը դասագրքային նյութ են դարձել:

1957 թվականին նա 12,5:9,5 (+6, -3, =13) հաշվով հաղթեց Բոտվիննիկին ու աշխարհի յոթերորդ չեմպիոնը դարձավ: Մեկ տարի անց, օգտվելով ռևանշ-մրցախաղի իրավունքից, Բոտվիննիկը գերազանցության հասավ՝ 12,5:10,5 (+7, -5, =11) հաշվով:



Տիգրան Պետրոսյան՝
աշխարհի IX չեմպիոն

*«Ձեզանից շախմատիստներ ոչ բոլորը կդառնան, բայց ոչ ոք չի ափսոսա այն ժամանակը, որը շախմատին է տրամադրել, քանի որ այն կօգնի ձեզ ցանկացած մասնագիտության մեջ»:*



Բորիս Սպասսկի՝
աշխարհի X չեմպիոն

*«Շախմատում անհրաժեշտ է մարտիկ լինել: Շախմատն ինքն է որոշանշի գործողությունների դրդում. Շախմատը ռազմավարական խաղ է»:*



1957 թվականից սկսած՝ անկրկնելի խաղ էր ցուցադրում Միխայիլ Տալը (1936-1992թ.թ.): 1960 թվականին աշխարհի առաջնության մրցախաղում նա Մ.Բոտվիննիկի նկատմամբ արժանի հաղթանակ տարավ՝ 12,5:8,5 (+6, -2, =13) հաշվով, և աշխարհի ութերորդ չեմպիոնը հռչակվեց: Մ.Տալը սուր, կոմբինացիոն ոճի շախմատիստ էր: *Գրոհ արքայի դեմ* ահա՛ նրա հավատամքը: Տալի փայլուն, հարձակողական խաղը հիացմունք էր պարգևում, և դա՛ էր պատճառը, որ նա այդքան շատ երկրպագուներ ուներ...

Սակայն մեկ տարի անց Բոտվիննիկը հաղթեց ռևանշ-մրցախաղում և վերադարձրեց շախմատային թագը՝ 13:8 (+10, -5, =6):

1962 թվականին հեռավոր Կյուրասաո կղզում տեղի ունեցավ հավակնորդների հերթական մրցախաղ-մրցաշարը: Դժվարին մրցաշարն առանց պարտության անցկացնելով՝ առաջին տեղը և Բոտվիննիկի հետ հանդիպելու իրավունքը նվաճեց Տիգրան Պետրոսյանը (1929-1984թ.թ.):

Մրցախաղը կայացավ 1963 թվականին, Մոսկվայում:

Ի՞նչ էր կատարվում այդ օրերին, և ո՛չ միայն Երևանում: Ամբողջ հայ ժողովուրդը ուշի-ուշով հետևում էր շախմատային երկու մեծությունների կատարած ամեն մի քայլին, հրճվում ու ափսոսում իր կուռքի ամեն մի հաջողությունից կամ անհաջողությու-



Ռոբերտ Ֆիշեր՝
աշխարհի XI չեմպիոն

*«Շախմատիստներ կան, ովքեր միայն ոչ-ոքիի հասնելու համար են խաղում: Այնինչ շախմատային խաղը պետք է հարձակողական լինի: Անհրաժեշտ է հաղթանակի ուղի փնտրել, իսկ եթե չձգտել դրան, ապա ի՞նչ իմաստ ունի խաղատախտակի առջև նստելը»:*



Անատոլի Կարպով՝
աշխարհի XII չեմպիոն

*«Շախմատը, եթե ցանկություն կա՝ դրանում առաջընթաց ունենալու, լայն գիտելիքներ ու մեծ ինքնազոհություն է պահանջում»:*

նից:

Երևանի հրապարակներում ցուցադրական մեծ խաղատախտակներ էին տեղադրել: Խաղերի օրերին դրանց մոտ հավաքավոր մարդիկ էին հավաքվում և անհամբերությամբ սպասում հերթական պարտիայի սկսվելուն: Նրանցից շատերը նույնիսկ քայլերը չգիտեին, սակայն բոլորի ձգտումը նույնն էր՝ ինչ-որ ձևով սատար կանգնել բոլորի սիրեցյալ Տիգրանի հաղթանակին:

Բարեմաղթանքները, քաջալերումները, նույնիսկ հայկական խոհանոցի ճաշատեսակներն այդ օրերին հեղեղում էին Տ.Պետրոսյանի մոսկովյան բնակարանը: Երևանյան բակերում նարդին շախմատին տեղը զիջեց: Խանութներում շախմատ չմնաց...

Դժվարին մենամարտում 12,5:9,5 (+5, -2, =15) հաշվով հաղթելով ահեղ մրցակցին՝ Տիգրան Պետրոսյանը նվաճեց շախմատային թագը՝ դառնալով Կաիսա շախմատային դիցուհու իններորդ ընտրյալը...

Տ.Պետրոսյանը ռազմավարական խոր մտահղացումների, դիրքային նուրբ տեղաշարժերի խոշորագույն վարպետ էր համարվում: Սակայն անհրաժեշտության դեպքում կոմբինացիոն խաղից նա չէր հրաժարվում և նման ոճով բազմաթիվ գեղեցիկ հաղթանակներ էր տարել:

Ահա՛ թե այդ առումով ինչ է ասել ինքը՝ Տ.Պետրոսյանը, - «Ես երբեք կոմբինացիոն տեսողություն նիցս չեմ դժգոհել: Ես ընդհանրապես համարում եմ, թեև շատերին դա տարօրինակ կթվա, որ





Գարրի Կասպարով՝ աշխարհի XII չեմպիոն

*«Շախմատը շատ գաղտնիքներ ունի: Ի երջանկություն: Դա է պատճառը, որ չենք կարողանում միանշանակ պատասխանել, թե ի՞նչ է դա. գիտությո՞ւն, սպո՞րտ, արվե՞ստ»:*

շախմատում ամեն ինչ մարտավարության վրա է հիմնված: Եթե ռազմավարությունը մարմարի կտոր է, ապա մարտավարությունը՝ այն կտրիչը, որով վարպետն է գործում՝ շախմատային արվեստի ստեղծագործություններ կերտելով: Գուցե հենց մարտավարական վարպետությունն էլ ինձ հեռու է պահում բազմաթիվ կոմբինացիաներից, որովհետև մրցակիցներիս առարկություններն եմ գտնում»:

«Պետրոսյանը մեր բոլոր գրոսմայստերներից առավել ինքնատիպ ու յուրօրինակ տաղանդի տեր է: ...Նա այնքան խորաթափանց է դասավորում իր խաղաքարերը, որ բոլոր հարձակումները դրանց վրա դառնում են առավելագույնս դժվարացված: Դա շատ նուրբ և հայվագյուտ խաղաոճ է, որին համակերպվելը դժվար է: Ես չկարողացա և տանուլ տվի 1963 թվականի մրցախաղը» - Մ.Բոտվիննիկ:

...Բազմակողմանի խաղ, հիանալի տեսական պատրաստվածություն՝ կուգակցված ուրույն մոտեցմամբ, խաղային բարձր կուլտուրա՝ ահա՛ Բորիս Սպասսկու (ծնվ. 1937թ.) հիմնական խաղաքարտերը, որոնց շնորհիվ նա հավակնորդների հերթական մրցաշարերի (1965 և 1968թ.թ) հաղթողը դարձավ: 1966 թվականի մրցախաղում նա 11,5:12,5 հաշվով զիջեց Տ.Պետրոսյանին, սակայն հաջորդում՝ 1969 թվականին, հաղթեց՝ 12,5:10,5, և աշխարհի տասներորդ չեմպիոնը դարձավ:

1972 թվականին Բ.Սպասսկին, իր հերթին, չեմպիոնի թագը կորցրեց: Նրան 12,5:8,5 հաշվով հաղթեց ամերիկացի հանճարեղ գրոսմայստեր Ռոբերտ Ջեյմս Ֆիշերը (ծնվ. 1943թ.): Ցավոք, նվաճելով չեմպիոնի կոչումը, Ռ.Ֆիշերը հեռացավ շախմատից, և 1975 թվականին ՖԻԴԵ-ի որոշմամբ չեմպիոն հռչակվեց հավակնորդը՝ Անատոլի Կարպովը (ծնվ. 1951թ.): Ստանձնելով տասներկուերորդ չեմպիոնի դերը՝ նա փառքով այն կրեց մինչև 1985 թվականը, երբ մրցախաղում զիջեց ներկայիս չեմպիոն Գարրի Կասպարովին (ծնվ. 1963թ.): Հետաքրքիր է, որ ընդամենը երկու տարում Կարպովն ու Կասպարովը չորս մրցախաղ անցկացրին, ընդհանուր առմամբ՝ հարյուր քսան պարտիա խաղացվեց:

# ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑԱԽԱՂԵՐԸ

| Մրցակիցները | Մրցախաղի արդյունքը | Մրցախաղի անցկացման ժամկետներն ու վայրը |
|---|---|---|
| Վ.Ստեյնից - Յ.Ցուկերտորտ | 12,5:7,5 (+10, -5, =5) | 11.1-29.3.1886, Նյու Յորք - Սենթ-Լուիս - Նոր Օրլեան |
| Վ.Ստեյնից - Մ.Չիգորին | 10,5:6,5 (+10, -6, =1) | 20.1 - 24.2.1889, Հավանա |
| Վ.Ստեյնից - Ի.Գունսբերգ | 10,5:8,5 (+6, -4, =9) | 9.12.1890 - 22.1.1891, Նյու Յորք |
| Վ.Ստեյնից - Մ.Չիգորին | 12,5:10,5 (+10, -8, =5) | 1.1 - 28.2.1892, Հավանա |
| Էմ.Լասկեր - Վ.Ստեյնից | 12:7 (+10, -5, =4) | 15.3 - 26.5.1894, Նյու Յորք - Ֆիլադելֆիա - Մոնրեալ |
| Էմ.Լասկեր - Վ.Ստեյնից | 12,5:4,5 (+10, -2, =5) | 7.11.1896 - 14.1.1897, Մոսկվա |
| Էմ.Լասկեր - Ֆ.Մարշալ | 11,5:3,5 (+8, -0, =7) | 26.1 - 8.4.1907, Նյու Յորք - Ֆիլադելֆիա - Վաշինգտոն - Բալթիմոր - Չիկագո - Մեմֆիս -Նյու Յորք |
| Էմ.Լասկեր - Զ.Տարաշ | 10,5:5,5 (+8, -3, =5) | 17.8 - 30.9.1908, Դյուսելդորֆ - Մյունխեն |
| Էմ.Լասկեր - Դ.Յանովսկի | 8:2 (+7, -1, =2) | 19.10 - 9.11.1909, Փարիզ |
| Էմ.Լասկեր - Կ.Շլեխտեր | 5:5 (+1, -1, =8) | 7.1 - 10.2.1910, Վիեննա -Փարիզ |
| Էմ.Լասկեր - Դ.Յանովսկի | 9,5:1,5 (+8, -0, =3) | 8.11 - 8.12.1910, Բեռլին |



| Մրցակիցները | Մրցախաղի արդյունքը | Մրցախաղի անցկացման ժամկետներն ու վայրը |
|---|---|---|
| Խ-Ռ.Կապաբլանկա- Էմ.Լասկեր | 9:5 (+4, -0, =10) | 15.3 - 28.4.1921, Հավանա |
| Ա.Ալյոխին - Խ-Ռ.Կապաբլանկա | 18,5:15,5 (+6, -3,=25) | 16.9 - 29.11.1927, Բուենոս-Այրես |
| Ա.Ալյոխին - Ե.Բոգոլյուբով | 15,5:9,5 (+11, -5, =9) | 6.9 - 12.11.1929, Գերմանիա - Հոլանդիա (մի շարք քաղաքներ) |
| Ա.Ալյոխին - Ե.Բոգոլյուբով | 15,5:10,5 (+8, -3,=15) | 1.4 - 14.6.1934, Գերմանիա (մի շարք քաղաքներ) |
| Մ.Էյվե - Ա.Ալյոխին | 15,5:14,5 (+9, -8,=13) | 3.10 -.12.1935, Հոլանդիա (մի շարք քաղաքներ) |
| Ա.Ալյոխին - Մ.Էյվե | 15,5:9,5 (+10, -4,=11) | 5.10 - 7.12.1937, Հոլանդիա (մի շարք քաղաքներ) |
| մրցախաղ-մրցաշար՝ Մ.Բոտվիննիկ, Վ.Սմիսլով, Պ.Կերես, Ս.Ռեշևսկի, Մ.Էյվե | Մ.Բոտվիննիկ՝ 14, Վ.Սմիսլով՝ 11, Պ.Կերես՝ 10,5, Ս.Ռեշևսկի՝ 10,5, Մ.Էյվե՝ 4 | 2.3 - 18.5.1948, Հաագա - Մոսկվա |
| Մ.Բոտվիննիկ - Դ.Բրոնշտեյն | 12:12 (+5, -5, =14) | 15.3 - 11.5.1951, Մոսկվա |
| Մ.Բոտվիննիկ - Վ.Սմիսլով | 12:12 (+7, -7, =10) | 16.3 - 13.5.1954, Մոսկվա |

| Մրցակիցները | Մրցախաղի արդյունքը | Մրցախաղի անցկացման ժամկետներն ու վայրը |
|---|---|---|
| Վ.Սմիսլով - Մ.Բոտվիննիկ | 12,5:9,5 (=6, - 3, =13) | 5.3 - 27.4.1957, Մոսկվա |
| Մ.Բոտվիննիկ - Վ.Սմիսլով | 12,5:10,5 (+7, -5, =11) | 4.3 - 8.5.1958, Մոսկվա |
| Մ.Տալ - Մ.Բոտվիննիկ | 12,5:8,5 (+6, -2, =13) | 15.3 - 7.5.1960, Մոսկվա |
| Մ.Բոտվիննիկ - Մ.Տալ | 13:8 (+10, - 5, =6) | 15.3 - 12.5.1961, Մոսկվա |
| Տ.Պետրոսյան - Մ.Բոտվիննիկ | 12,5:9,5 (+5, -2, =15) | 23.3 - 20.5.1963, Մոսկվա |
| Տ.Պետրոսյան - Բ.Սպասսկի | 12,5:11,5 (+4, -3, =17) | 11.4 - 9.6.1966, Մոսկվա |
| Բ.Սպասսկի - Տ.Պետրոսյան | 12,5:10,5 (+6, -4, =13) | 14.4 - 17.6.1969, Մոսկվա |
| Ռ.Ֆիշեր - Բ Սպասսկի | 12,5:8,5 (+7, -3, =11) | 11.7 - 1.9.1972, Ռեյկյավիկ |
| Ա.Կարպով - Վ.Կորչնոյ | 16,5:15,5 (+6, -5, =21) | 18.7 - 18.10.1978, Բագիո |
| Ա.Կարպով - Վ.Կորչնոյ | 11:7 (+6, -2, =10) | 1.10 - 18.11.1981, Մերանո |
| Ա.Կարպով - Գ.Կասպարով | 25:23 (+5, -3,=40)<br>13:11 (+5, -3, =16) | 19.9.1984 - 12.2.1985, *մրցախաղն ընդհատվեց*. Մոսկվա |
| Գ.Կասպարով - Ա.Կարպով<br>Գ.Կասպարով - Ա.Կարպով | 12,5:11,5 (+5, -4, =15) | 3.9 - 9.11.1985, Մոսկվա |



| Մրցակիցները | Մրցախաղի արդյունքը | Մրցախաղի անցկացման ժամկետներն ու վայրը |
|---|---|---|
| Գ.Կասպարով - Ա.Կարպով | 12:12 (=4, -4, =16) | 12.10 - 19.12.1987, Սևիլյա - Լիոն |
| Գ.Կասպարով - Ա.Կարպով | 12.5:11.5 (+4, -3, =17) | 1990, Նյու Յորք, Լիոն |

Կանանց՝ աշխարհի առաջնությունններն անց են կայցվում 1937 թվականից: Այդ ընթացքում չեմպիոնուհիներ են դարձել Վ.Մեն- չիկը, Լ.Ռուդենկոն, Ե.Բիկովան, Օ.Ռուբցովան... 1962 թվականին, քանմեկ տարեկան հասակում, չեմպիոնուհու կոչումը նվաճեց վրաց տաղանդավոր շախմատիստուհի Նոնա Գափրինդաշվիլին. նա հասուն խաղով հաղթանակներ էր տոնում ոչ միայն կանանց, այլև՝ տղամարդկանց մրցաշարերում: Գափրինդաշվիլին կանա- ցից առաջինն էր, ով տղամարդկանց մրցաշարում գրոսմայստերի կոչում նվաճեց: Աշխարհի չեմպիոնուհու իր կոչումը չորս անգամ հաջողությամբ պաշտպանելուց հետո՝ 1978 թվականին նա վիջեց հայրենակցուհուն՝ տասնյոթամյա Մայա Չիբուրդանիձեին. վեր- ջինս թագը պահպանեց մինչև 1992 թվականը՝ երեք անգամ այդ ընթացքում հաստատելով իր կոչումը, և միայն 1992 թվականին մրցախաղում պարտվեց չին շախմատիստուհի՝ ներկայիս չեմպիո- նուհի Սե Ցզյունին...

Բացի անհատական առաջնություններից՝ անցկայցվում են նաև թիմային առաջնություններ՝ ինչպես մայրցամաքների, այնպես էլ՝ համաշխարհային: Հայ շախմատիստները բազմիցս մասնակցել են այդպիսի առաջնությունների՝ նախկին ԽՍՀՄ-ի ամենատարբեր թիմերի կազմում: Մասնավորապես՝ Ռաֆաել Վաղանյանը աշխար- հի երիտասարդական թիմային առաջնությունների քառակի չեմ- պիոն է: Նա հաղթողն է նաև 1985 թվականին Լյուցեռնում կայա- ցած՝ աշխարհի առաջին թիմային առաջնության, ուր երկրորդ խա- ղատախտակի վրա լավագույն արդյունքը ցույցադրեց (8 հնարա- վորից 6 միավոր): Վաղանյանը նաև Եվրոպայի թիմային առաջ- նությունների հաղթողն է (1980 և 1983թ.թ.): Երկու անգամ նա ու- կե պարգևների է արժանացել համաշխարհային շախմատային օլիմպիադաներում: Ինչեպ, այդ մրցումներն «Ազգերի մրցաշար» են նաև անվանում՝ անցկայցվում են 1927 թվականից, երկու տարին մեկ՝ ՖԻԴԵ-ին անդամագրված երկրների հավաքականների միջև...

# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

...Երբ գրվում էին սույն ձեռնարկի վերջին էջերը, մեր շախմատիստներն առաջին անգամ Հայաստանը ներկայացրին Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում կայացած՝ համաշխարհային օլիմպիադաներում: Եռագույն դրոշի ներքո հանդես եկած թիմը բարձր պահեց Հայաստանի պատիվը՝ նվաճելով մրցանակային երրորդ տեղը և բրոնզե պարգևների արժանանալով: Բրոնզ, որը ոսկու փայլ ուներ...

Մեր թիմի կազմում հերոսներ դարձան գրոսմայստերներ Ռաֆայել Վահանյանը, Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լպուտյանը, Արտաշես Մինասյանը, Արշակ Պետրոսյանը և միջազգային վարպետ, այժմ արդեն նույնպես գրոսմայստեր Աշոտ Անաստասյանը:


Ռաֆայել Վահանյան


Վլադիմիր Հակոբյան


Սմբատ Լպուտյան


Արտաշես Մինասյան


Արշակ Պետրոսյան


Աշոտ Անաստասյան

Ստորև ներկայացվում են օլիմպիադայում մեր շախմատիստների խաղացած ընտիր պարտիաներից մի քանիսը.

Վահանյան - Կասպարով
Հայաստան   Ռուսաստան
Հին հնդկական պաշտպանություն

1. Ձf3 Ձf6 2. c4 g6 3. Ձc3 Փg7 4. e4 d6 5. d4 0-0 6. Փe2 e5 7. 0-0 Ձc6 8. d5 Ձe7 9. Ձd2 a5 10. a3 Ձd7 11. Նb1 f5 12. b4 Աh8 13. Թc2 ab 14.



ab Ձf6 15. f3 g5 16. c5 Ձg6 17. Ձc4 Ձf4 18. cd cd 19. Փe3 (դ.93):

93


19. ... g4 20. Փb6 Թe7 21. ef Ձ:e2+ 22. Ձ:e2 gf 23. Ն:f3 Ձ:d5 24. Թd2 e4 25. Նff1 Ն:f5 26. Ն:f5 Ձ:b6 27. Թ:d6 Թ:d6 28. Ձ:d6 Փ:f5 29. Ձ:f5 Ձd5 30. Ձ:g7 Ա:g7 31. Նd1 e3 32. g3:

Ոչ-ոքի:

Վահանյան - Կակագելդիև
Հայաստան Թուրքմենիա
Հին հնդկական պաշտպանություն

1. Ձf3 g6 2. c4 Փg7 3. d4 d6 4. Ձc3 Փg4 5. e3 c5 6. Փe2 Ձc6 7. d5 Ձa5 8. Թa4+ Փd7 9. Թc2 a6 10. 0-0 Նb8 11. Նb1 Ձf6 12. e4 0-0 13. a4 e6 14. b4 cb 15. Ն:b4 ed 16. ed Փf5 17. Թd1 Ձd7 18. Փg5 Թc7 19. Թd2 Նfe8 20. Փe3 Փg4 21. Նc1 Փ:f3 22. gf b6 23. Ձc4 Ձb7 24. Նcb1 Ձbc5 25. a5 (դ.94):

94


25. ... Ձ:e4 26. fe ba 27. Ն:b8 Ն:b8 28. Ն:b8+ Թ:b8 29. Թ:a5 Թb1+ 30. Փf1 Թ:e4 31. Թd8+ Ձf8 32. h3 Թe5 33. Փg5 f6 34. Փh4 Թd4 35. Փg3 h5 36. Փ:d6 g5 37. Թe8 h4 38. Փe2 f5 39. Փh5 Թf6 40. Փe7 Թa1+ 41. Աg2 g4 42. Թf7+ Աh8 43. Թ:f5 gh+ 44. Թ:h3:

Սևերը հանձնվեցին:

Թիման - Հակոբյան

Հոլանդիա Հայաստան

Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 Ձc6 3. Փb5 d6 4. 0-0 Փd7 5. c3 Ձf6 6. Նe1 a6 7. Փf1 Փg4 8. d3 e6 9. h3 Փh5 10. Փf4 Փe7 11. Ձbd2 0-0 12. Թe2 b5 13. a3 Նe8 14. g4 Փg6 15. Փg2 Նc8 16. Նad1 h6 17. Փg3 Ձd7 18. Ձf1 Փh7 19. Ձe3 Ձf8 20. Ձh2 e5 21. f4 ef 22. Փ:f4 (դ.95):

95



22. ... Փh4 23. Նf1 g5 24. Թf3 gf 25. Թ:f4 Ձe5 26. Ձd5 Թg5:

Սպիտակները հանձնվեցին:

Հակոբյան - Ուբիլավա

Հայաստան Վրաստան

Թագուհու մերժված գամբիտ

1. d4 d5 2. Ձf3 Ձf6 3. c4 e6 4. Ձc3 Փe7 5. Փg5 0-0 6. e3 Ձbd7 7. Թb3 c6 8. Փd3 a6 9. cd cd 10. 0-0 b5 11. Նfc1 Ձb6 12. a4 ba 13. Ձ:a4 Ձ:a4 14. Թ:a4 Փd7 15. Թc2 Նc8 16. Թb1 Ն:c1 17. Թ:c1 a5 18. Ձe5 Փe8 19. Փb1 h6 20. Փ:f6 Փ:f6 21. Թc5 Փ:e5 22. de Փd7 23. Ն:a5 Թb8 24. Թa3 Նc8 25. h3 Թ:e5 26. Նa8 Թc7 27. b4 Աf8 28. b5+ Աe8 29. Փd3 Ն:a8 30. Թ:a8+ Աe7 31. Թa3+ Աe8 32. Թb2 e5 33. b6 Թb8 34. Թb4 Փc6 35. Թc5 Աd7 36. Փf5+:

Սևերը հանձնվեցին:

Լպուտյան - Ռոմանիշին

Հայաստան Ուկրաինա

Թագուհու ընդունված գամբիտ

1. d4 d5 2. c4 dc 3. e3 e5 4. Փ:c4 ed 5. ed Ձf6 6. Ձf3 Փd6 7. 0-0 0-0 8. Փg5 Ձc6 9. Ձc3 Փg4 10. Ձd5 Փe7 11. Ձ:e7+ Թ:e7 12. h3 Փ:f3 13. Թ:f3 Թe4 14. Թ:e4 Ձ:e4 15. Փe3 Ձd6 16. b3 Նad8 17. d5 Ձ:c4 18. bc Ձa5 19. Նac1 b6 20. Փf4 c5 21. Նfe1 f6 22. Նe3 Նfe8 23. Աf1 Աf7 24. Աe2 Նd7 25. g4 g5 26. Ն:e8 Ա:e8 27. Փd2 Նb7 28. f4 gf 29. Փ:f4 b5 30. Աd3 b4 31. Նf1 a6 32. Փc1 Նd7 33. Փb2 Աe7 34. Նf5 Աf7 35. g5 Աg6 36. Ն:f6+:

Սևերը հանձնվեցին:

Լպուտյան - Սեյրավան

Հայաստան ԱՄՆ

Թագուհու ընդունված գամբիտ

1. d4 d5 2. c4 dc 3. Ձf3 c5 4. d5 e6 5. Ձc3 ed 6. Թ:d5 Թ:d5 7. Ձ:d5 Փd6 8. Ձd2 Ձe7 9. Ձ:c4 Ձ:d5 10. Ձ:d6+ Աe7 11. Ձ:c8+ Ն:c8 12. g3 Ձb4 13. Փh3 Նd8 14. 0-0 Ձ8c6 15. Փg5+ f6 16. Փe3 Ձd4 17. Փg2 Ձbc2 18. Փ:d4 Ձ:d4 19. e3 Ձe6 20. Փ:b7 Նab8 21. Փe4 Ձg5 22. Փg2 Ն:b2 23. h4 Ձe6 24. Նfb1 Նb6 25. Փf1 f5 26. Փc4 g6 27. Նb3 Ձf8 28. Նc1 h6 29. Նa3 Նd7 30. Նa5 Նc7 31. h5 Աf6 32. hg Ձ:g6 33. Փb3 Նbc6 (դ.96):

96



34. Փd5 Նb6 35. Նc:c5 Ն:c5 36. Ն:c5 Ձe5 37. Փb3 Նd6 38. Աg2 Նd2 39. Նc2 Ն:c2 40. Փ:c2 Ձc4 41. Աf3 Ձe5+ 42. Աe2 Ձc6 43. Աd2 Ձe5 44. Փd1 Աe6 45. Աc3 Աd5 46. f4 Ձd7 47. Փf3+ Աe6 48. e4 Ձf8 49. e5 Աe7 50. Աc4 Ձe6 51. a4 Ձc7 52. g4 Ձe6 53. gf Ձ:f4 54. Աd4 Աd7 55. Փg4:

Սևերը հանձնվեցին:

Մինասյան - Գեորգաձե

Հայաստան Վրաստան

Էվանսի գամբիտ

1. e4 e5 2. Ձf3 Ձc6 3. Փc4 Փc5 4. b4 Փ:b4 5. c3 Փe7 6. d4 Ձa5 7. Ձ:e5 Ձ:c4 8. Ձ:c4 d5 9. ed Թ:d5 10. Ձe3 Թd7 11. 0-0 Ձf6 12. d5 0-0 13. c4 Ձg4 14. Փb2 Փc5 15. Փd4 Փ:d4 16. Թ:d4 Նe8 17. Ձc3 Ձ:e3 18. fe

Թe7 19. Նf3 b6 20. a4 Փd7 21. a5 f6 22. e4 Թc5 23. Թ:c5 bc 24. a6 c6 25. Նa5 cd 26. ed Նac8 27. Աf2 f5 28. Նe3 Նed8 (դ.97):

97



29. Ձb5 Փ:b5 30. Ն:b5 Նd6 31. Նa3 Նc7 32. Նaa5 Աf8 33. Ն:c5 Ն:c5 34. Ն:c5 Ն:a6 35. Նc7:

Սևերը հանձնվեցին:

Մինասյան - Չանդլեր
Հայաստան Անգլիա
Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 e6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 Ձc6 6. Ձdb5 d6 7. Փf4 e5 8. Փg5 a6 9. Ձa3 b5 10. Ձd5 Փe7 11. Փ:f6 Փ:f6 12. Ձb1 0-0 13. a4 b4 14. Ձd2 Փe6 15. Փc4 Փg5 16. Ձf3 Փh6 17. Թd3 a5 18. 0-0 Աh8 19. Նad1 Նb8 20. Փb5 Ձa7 21. c4 bc 22. bc f5 23. c4 fe 24. Թ:e4 Փf5 25. Թe2 Փg4 26. Նd3 Ձ:b5 27. cb Թe8 28. Ձc3 Նd8 29. Նfd1 Փf4 30. h3 Փh5 31. Ձe4 Փ:f3 32. Ն:f3 d5 33. Նfd3 Թf7 34. Թa2 Թh5 35. Թb3 d4 36. Թe6 Թe2 37. Ձd6 Թh5 38. Ձb7 Նde8 39. Թg4 Թf7 40. Ձd6 Թa2 41. Ձ:e8 Ն:e8 42. Թd7 Նg8 43. g3 Փg5 44. Թf5 Փf6 45. Ն3d2 Թ:a4 46. Նb1 h6 46. b6 Փe7 48. Թ:e5 Փb4 49. b7:

Սևերը հանձնվեցին:

Անաստասյան - Իրեք
Հայաստան Թուրքիա
Նոր հնդկական պաշտպանություն

1. d4 Ձf6 2. c4 e6 3. Ձc3 Փb4 4. Թc2 c5 5. dc Ձa6 6. a3 Փ:c3 7. Թ:c3 Ձ:c5 8. b4 Ձce4 9. Թd4 d5 10. c5 b6 11. f3 bc 12. bc Թa5+ 13. Թb4 Թ:b4+ 14. ab Ձc3 15. Փb2 Ձb5 16. e4 Փd7 17. Փ:f6 gf 18. ed cd 19. Փ:b5 Փ:b5 20. Ձe2 Աd7 21. Ձd4 a6 22. Աd2 Նhe8 23. Նhe1 Փc4 24. Ն:e8 Ն:e8 25. Նe1 Նe5 26. f4 Ն:e1 27. Ա:e1 Փd3 28. Աd2 Փe4 29. g3 Աc7 30. Աe3 Աd7 31. b5 ab 32. Ձ:b5 f5 33. Աd4 f6 34. Ձd6 Աe6 35. Ձe8 Աe7 36. Ձc7 Փg2 37. Ձ:d5+ Աe6 38. Ձe3 Փc6 39. Աc4 h6 40. Աb4



Փe4 41. Աb5 Աd7 42. Աb6 h5 43. h4:

Սևերը հանձնվեցին:

Զարնիցկի - Պետրոսյան
Արգենտինա Հայաստան
Սիցիլիական պաշտպանություն

1. e4 c5 2. Ձf3 d6 3. Փb5+ Փd7 4. Փ:d7+ Թ:d7 5. 0-O e6 6. c3 Ձf6 7. Թe2 Ձc6 8. d4 cd 9. cd d5 10. e5 Ձe4 11. Փe3 Փe7 12. Ձe1 f6 13. f3 Ձg5 14. Թd2 0-0 15. ef gf 16. Ձc3 Ձf7 17. Փf2 Նfe8 18. Ձd3 Փf8 19. Ձf4 Ձd6 20. Ձh5 Թf7 21. g4 Ձf5:

Ոչ-ոքի:

Նշումների համար

Նշումների համար

ԳՄԴ 75.581
Դ 230

ԴԱՎԹՅԱՆ Թ. Վ.
Դ 230 Սովորենք շախմատ խաղալ.- Սկզբնախաղ:
Եր.: Շաղիկ,1995 60x90 1/16
Գիրք 4.- 1995 - 144էջ

Հայաստանի շախմատային ֆեդերացիան մասնագիտական և մանկավարժական պահանջները բավարարող այս ձեռնարկը օգտակար է համարում իր կրթական համակարգում, ինչպես նաև՝ հանրակրթական դպրոցներում օգտագործելու համար:

Խմբագիր՝ Սլավա Մովսիսյան
Նկարիչ՝ Նորայր Այվազյան
Տեխ. խմբագիր՝ Շուրա Հայրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռոբերտ Հովսեփյան
Էջադրում՝ Գեորգ Համայակյան

ԳՄԴ 75.581

Դ $\frac{4204000000}{783(01)-95}$ 95
ISBN 5-8079-1111-3

Ստորագրված է տպագրության՝ 18.01.96: Թուղթ՝ օֆսեթ N1: Չափ
60x901/16: Պատվեր՝ 03: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպագրական
մամուլ: Տպաքանակը՝ 10000:

ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Շաղիկ» հրատարակչություն: Երևան, հարավ-արևմտյան կանգված, թաղամաս, Ա. Բաբաջանյանի փող.:

Տպագրված է «Շաղիկ» հրատարակչության տպարանում:

© Շաղիկ հրատ., 1995